



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4036

ԳՐԻՍՈՍԱՊԱՏՈՒՄ

ԱՅՆ Է

ՀԵՄԱ-ՕՏՈՒԹԵԴԵ

ԱԿԵՏԱՐԱՆԱԿԱՆ

ՊԵՏՐՈՒԹԵԸՆ

Հայոց ժամանակակից +



22
Մ 98

Ի ՄՈՒՋՈՒ

Վъ Типографии Каткова и Ко.

1861

8, 0

22

ԿՐ.

Printed in Turkey

Մ-98

23 SEP 2009

ԳՐԻՍՈՍԱՊԱՏԻՒՄ

ԱՅՆ Է

ՀԵՄԵՐՈՅՈՒԹԻՒՆ

Ա.Ի.Ե.ՏԱՐԱՆԱԿԱՆ

ՊԵՏՐՈՎԻԹԵՅՆ

Հանդերձ Ճանօնս-Ռեմյոն +

Ի ՄԱՅՐԱՅ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Արքական Վարժապետէ Լազարեան Ճեմարանի:



Ի ՄՈՍՔՈՒԾ

Վъ Типографии Каткова и Ко.

1861

04 JUL 2013

40361

2005 932



2059
48



Ընթերցեալ զոյն Համառօտութիւն Աւետարանական Պատմութեան՝ ընդ վերնագրով ՔրիստոսաՊատմութիւն, և գտեալ համաձայն ամենայնիւ Արբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և բանից երանաշնորհ Հարց և վարդապետաց Առաքելական եկեղեցւոյ Հայաստանեաց, Հրամայեմք մուծանել՝ ՚ի տիպ՝ յօդուտ մանկանց Համազգեաց և ՚ի պէտո Ազգային դպրոցաց։ Յորոյ ՚ի հաստատութիւն դրոշմելով աստեն զՊատրիարքական կնիք մեր՝ ստորագրեմք, ՚ի 27 Ապրիլի 1861 ամի Փրկչին. ՚ի Ա. Էջմիածին։

ՄԱՏԹԵՈՍ

Կանոնակիրա ամ Հայոց։

"Օ մարգարեան սիրեմ, քանզի և նոքտ վասն Աւետարանին քարոզեցին . . . : Առաւելութիւն զոյ 'ի սուրբ Աւետարանին, գալուստ Փրկչին՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և չարչարանքն և յարութիւն Կորա : Սիրեցեալ են և մարգարեքն, զի վասն Կորա քարոզեցին. բայց Աւետարանն կատարումն է անապականութեան, և երկոքեանն 'ի միասին՝ բարի են հաւատացելոց:

Ի ժամանակ Անդաշեաց է Եղիշ. . .
Փելաւելէ. Գլ. Է. Ք:



ՔՐԻՍՏՈՍԱՊԱՏՈՒՄ

ԱՅՆ Է

ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆ

ԱԻԵՏԱՐԱԿԱՆ

ՊԵՏՐՈՎԹԵԸ

ՆԱԽԱՇԱԽԻԴՂ

- Հ. Աետարան բառո՞ զի՞նչ նշանակէ:
- Պ. Նշանակէ իւր մէջ ա-էպէ+ (այսինքն՝
բարձր և բերելը լուր) պարունակող:
- Հ. Ո՞ր զրեանքն յատկապէս այդ անուամբդ
կոչին:
- Պ. Առաջին չորս զրեանքն Կոր կտակա-
րանի*, որոց մէջ պարունակուած են

* Բնդհանրապէս՝ նաև բովանդակ՝ Կոր Օրէնքն՝ (յ՛
Քրիստոսի և Առաքելոց քարոզութիւնքն) Ա-էպա-
րձն կոչին: (Տես Աշառ. գ. 23: Աշարկ. առ. 14: 15:
Նոմիմ. ժե. 19: Բ Կորն. ժա. 7):

- Վրիստոսի Այ մերոյ աւետապարզե
վարդապետութիւնքն՝ հանգելձ պատմու-
թեամբ Տնօրինական գործոց նորա:
- Ճ. Յորոց գրեցան այն գրեանքն:
- Պ. Ե չորից Աւետարանչաց, որոց անուանքն
են՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, և
Յովհաննէս:
- Ճ. Օ անօթ էին նոքա Վրիստոսի Տեառն
մերոյ ամենայն գործոց և վարդապետու-
թեանց:
- Պ. Այն վասն զե երկուքն (Մատթէոս և
Յովհաննէս) էին 'ի կարդէ երկոտասան
Առաքելոց, և երկուքն (Մարկոս և Ղու-
կաս)՝ ի թուոյ եօթանասուն և երկու ա-
շակերտաց Վրիստոսի:
- Ճ. Բայց 'ի չորից Աւետարանչաց՝ այլ ևս
Աւետարանաղիլք եղած են:
- Պ. Այն, շատերն եղած են*. բայց ընդհանուր
Ա. Եկեղեցին՝ միայն զչորից գրուածքը
ընդունած է 'ի շարս Աանոնական Գրոց***:

* Ղուկ. ա. 1. 2:

** Կիւրեղ Երուս. (Կ Առշ. Բնձ. գլ. դ): Երանեք.

Հ. Չորս Աւետարանիչքն մի և նոյն լեզու-
աւ զրեցին զԱւետարանը:

Պ. ԱՇ. Մատթէոս զրեց Երրայեցւոց լեզու-
աւ, Մարկոս՝ Եղիպտացւոց, Պուկաս՝
Ասորւոց, Յովհաննէս՝ Յունաց*:

Հ. ԱՌ տեղ զրեցին:

Պ. Մատթէոս զրեց յԵրուսաղէմ, Մարկոս՝
յԱղեքսանդրիա, Պուկաս՝ յԱնտիոք,
Յովհաննէս՝ յԵփեսոս**:

Հ. ԵՐԲ զրեցին:

Պ. Չորքն ևս զրեցին յետքրիստոսի համ-
բարձմանն, բայց ոչ ՚ի մի և ՚ի նոյն ժա-
մանակի***:

(յԵկեղ. Պատմ. դպ. Օ. Գ. Ի. ի.): Իգնատ. (՚ի
Մեկն. Պ ուկ. Գ. ա. ա.):

* ՚Ի նախադր. Աւետար: Առ Եւսեբ. (յԵկեղ.
Պատմ. դպ. Ը. Գ. Ի. թ. դպ. Ե. Գ. Է.): Եփր. (՚ի ամար.
Գ. ի.): Ոսկեբ. (՚ի Մեկն. Մատ. ճառ ա.): ՚Ի վարս
Արբոց (Հատ. Ե. յԵջ 204. 224. 256):

** ՚Ի նախադր. Աւետ: ՚Ի վարս Արբոց (Հատ. Ե.
յԵջ 204. 223. 256): ՚Ի Օքաղ. վարոց Արբոց. յԵջ 195):

*** Ըստ ստուգագոյն հաշուի ժամանակադրաց՝
Մատթէոս զրեց ՚ի 40 ամի ծննդեան Քրիստոսի.
Մարկոս՝ ՚ի 50. Պ ուկաս՝ ՚ի 52. Յովհաննէս՝ ՚ի 100:

- ♦ · Յայլ լեզուս ևս թարգմանեցա՞ն չորս
Աւետարանքն:
- ¶ · Այս, թարգմանեցան հետ զշետէ 'ի լեզուս զանազան ազդաց:
- ♦ · Միը Հայկական թարգմանութիւնն Աւետարանաց՝ յոր լեզուէ եղեւ, երբ և որոյ ձեռամբ:
- ¶ · Եղեւ 'ի Յոյն լեզուէ յամի Տեսոն 407, ձեռամբ մեծ Ապրդապետին և թարգմանչին մերոյ՝ սրբոյն Մեսրոպաց:
- ♦ · Ոյք են գլխաւոր նիւթքն Աւետարանական Պատմութեան:
- ¶ · Են՝
- ա. Բատ մարմնոյ Ծանունդն Արդւոյն Աստուծոյ՝ Յահ Քահ:
- բ. Կորա Մկրտութիւնն:
- շ. Քարոզութիւնքն:
- Դ. Հրաշագործութիւնքն:
- Ե. Հարչարանքն, Մահն և թաղումն:
- Ղ. Յարութիւնն:
- Ի. Համբարձումն:

ԳԼՈՒԽ

ՀԱՅ ՄԵՐՄԱՋ ԿԱՇԱԽԵՎ ԱՐԴԻՔԱՅՆ
ԵԱՏԻԿԱՅ ՅԻՍՈՒՄ ՎՐԹՈՍՈՎ

Ճ. Յումիկ ծնառ ըստ մարմնոյ՝ Արդին Աս-
տուծոյ՝ Յիսուս Քրիստոս:

Պ. Ես սրբոյ և ՚ի միշտ Առաքեն Մարիամայ,
որ Յովակիիմայ և Վնայի գուսարն էր:

Ճ. Ուրեմն ըստ մարմնոյ ծնող եղեւ Արդւոյն
Աստուծոյ Ս. Առյոն Մարիամ:

Պ. Եցի՞ ուստի կոչի՞նա խելապես՝ Աժածնն,
Ապումծաճայը, Ապուր Ապուծոյ, Ապուր
Տեսոն, Տերաճայը*:

Ճ. Ովկ էր Քրիստոսի հայրն:

Պ. Ես՝ ըստ մարմնոյ հայր չուներ, զի՞ի մօրէ
ծնունդ էր անհայր***, ըստում և մայրն՝

* Ե Հարակ:

** Հարակ: Գ. Ածար. ՚ի ճառ. ծն:

ծնող էր անայր* (անմերձ յառնէ), ան-
հարսնացեալ***:

Ա. Վասն էր առա Ուռէ Դաստի կոչեցաւ:
Պ. Վասն այն՝ զի նորա մայլն Մարիամ էր
յարքայական տանէն Դաւթի մարդարէի:

Ա. Հրեայք վասն էր կարծէին թէ նա որդի
է Յովսէփայ, կամ թէ մանուկ է հիւսան:

Պ. Վասն այն՝ զի Ա. Արյոն Մարիամ խօ-
սեալ (Նշանաւած) էր սրբոյն Յովսէփայ,
և սուրբն Յովսէփ (որ նոյնպէս 'ի ցեղէն
Դաւթի էր) հիւսն էր արհեստիւ:

Ա. Բատ Վաճութեան՝ հայր ունի Քրիստոս:

Պ. Եսո, վասն զի Արդի է Հօր Վասուծոյ՝
ծնեալ 'ի նմանէ անմարմնարար յառաջ
քան զյաւիտեանս***:

Ա. Մարիամ և Յովսէփ ուր բնակէին:

Պ. Ի Կաղարէթ քաղաքի, որ երեքօրեայ
Ճանապարհու հեռի է յԱրուսաղէմէ:

* ԳՏ. Լուս. (Աղաթ.): ԳՏ. Աքանչ. 'ի Գտով.
Վաճած.):

** Ի Հարակ:

*** ՏԵ՛Ր ԱՊՆԴԱՐՁ. Հրահանգ. յէջ 159. 167:

Հ. Քրիստոսի ծնունդն երբ եղել:

Պ. Եվեցելորդ գալու * (այսինքն՝ ի 4000
երորդ ամի աշխարհիս լինելութեան՝ ըստ
հաշուի ժամանակագրաց **), և ի վեցե-
լորդ աւուր Յունուար ամսոյ ***:

Հ. Ո՞ր ծնաւ Աս:

Պ. Ե Բակում Հեմ Հրեաստանի ****, ուր
գնացած էր Ա.Առյոն Մարիամ Ա.Յով-
սեփայ հետ ի միասին:

Հ. Յովսեփ և Մարիամ վասն էր գնացած
էին ի Բակում Հեմ:

Պ. Վասն զրել ասլոյ զիւրեանց անուանքը
աշխարհագրի տումարին մէջ, որպէս հր-
բամայուած էր յ(Օ)գոստոս կայսերէն:

Հ. Քաղաքի միջումը ծնաւ Քրիստոս:

Պ. Աչ այլ արտաքոյ քաղաքին, մի անու-

* Տես յԻնդարձ. Հրահ. յէջ 215:

** Խակ բատ հաշուի Եօթանասնից՝ յամի՛ 5199:

*** Տես յԻնդարձ. Հրահ. յէջ 216:

**** Քաղաքս այս՝ որ յԵրուսաղեմի հարաւային
կողմին է՝ 7 մղոնաւ հետի, յատկապէս քաղաք+ Պատ-Ռէ
կոչէր (Պ ու կ. Բ. Կ.), ըստ որում անդ ծնուած էր Պա-
տիթ մարգարէն:

նոց այլի մէջ. վս զի աշխարհապետածառաւ շատ մարդիկ հաւաքուած էին յայնժամ՝ ի Յեթղեհէմ, և Յովսէփայ և Արքամու անշնարին եղեւ քաղաքի մէջ ընակարան գտանել:

Ճ. Յետ ծնանելոյն յոր տեղ դրուեցաւ:

Պ. Դրուեցաւ խանձարքապատ՝ մսրոյ մէջ*, որովհետեւ այլ յարմարաւոր տեղ չկայր այն իջևանումը:

Ճ. Ե՞նչ անուն դրին Քրիստոսի:

Պ. Ե՞նուն դրին Յն (որ նշանակէ Փռէւլ), ինչպէս տասծ էր Ո. Կուսին՝ Գաբրիէլ հրեշտակապետն՝ երբ որ Եղիշորդոյ մարդեղութեան համար աւետիս տուաւ նմաւ:

Ճ. Ե՞րբ դրին զայդ անունդ:

Պ. Ութելորդ օրումը յետ ծննդեան, յո՞ւ ի թրիստութեան ժամանակին, ինչպէս ու-

* Ասի՝ թէ մսրոյ մօտ կային յայնժամ՝ եղն և էշ, որպէս աւետնի Քրիստոսի ծննդեան պատկերաց վերաց: Ակարիշք զայդորութին այսպէս նկարելոյ՝ ունին յաւանդութենէ. և աւանդութիւնն հիմնուած է Եսայեայ մարդարէի բանին վերաց: «Օքանեաւ եղն զայդ իւր, և էշ զմաւր աւետն իւրոյ» (մ. 3):

Վորութիւն եր Նրէից:

Հ. Ո՞՞ս տեղ կատարեցաւ Յսի թլփառուին:

Պ. Եսյն իսկ այրի մէջ, ըստ որում հաւանական կարծիք է բազմաց՝ թէ Անձամայր Այսն հանդերձ Անձորդովն այն տեղ մընաց մինչ ցքառաներորդ օրը*:

Հ. Ո՞վ եղեւ կատարիչ կամ պաշտօնեայթիւ փառութեան:

Պ. Յաւետարանի բանեն յայտնի չէ. բայց ՚ի վարդապետաց ոմանք կարծեն՝ թէ սուրբ Յովուշի եղեւ, և ոմանք՝ թէ Օսքարիա՝ Յովհաննու Ակլուչի հայրն**:

Հ. Արո՞ց նախ յայտնեցաւ Վհսի ծնունդն:

Պ. Նովուաց, որք իւրեանց ոչխալաց պահպանութեան համար՝ կոյին մօտակայդաշտին վերայ:

Հ. Ի՞նչպէս եղեւ այդ:

Պ. Ի նոյն իսկ զիշերի՝ յորում ծնաւ Վհս, յերկնից լուսափայլ հրեշտակ մի իջանելով առաց նոցա. “Ահաւասիկ աւետա-

* Կազմա. (Ե Աւելի. Վ ակ. Գլ. Բ):

** Վ. Տաթե. (Ե համ. Զմեռ. յէջ 66):

բանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղեցի
ամենայն ժողովրդիան. զի ծնաւ ձեզ այ-
սօր Փրկիչ, որ է օծեալ Տեր, 'ի քաղաքի
Դաւթի: Եւ այս նշանակ ձեզ. զտանի-
ցեք մանուկ պատեալ 'ի խոնճարուր, և
եղեալ 'ի մսուր.:

▲. Բայց յայն հրեշտակէն այլ հրեշտակք
ևս երեւցան:

Պ. Այս, 'ի նոյն ժամու երեւցաւ մեծ բազ-
մութիւն հրեշտակաց, որք օրհնէին զԱՇ՝
ասելով “Փառք ’ի բարձունս Աստուծոյ,
և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հա-
ճութիւն.:

▲. Օխնչ արարին հովիւքն յետ վերանա-
լոյ հրեշտակաց յերկինս:

Պ. Գնացին շտապով ’ի Բեթղեհեմի այլը,
զտին անգ զԱսրիամ և զՅովսէփ, և տե-
սանելով ևս զՓրկիչ մանուկը յանբանից
մսրոյն մէջ՝ երկրպագեցին նմա:

▲. Այս ևս պատեցին ինչ որ ’ի հրեշտա-
կաց լսած էին նորածին Փրկչի համար:

Պ. Այս, պատեցին ինդութք որոց ևս պա-

- տահեցան. ուստի և համբաւն շյու տարածուեցաւ. և ամ լողքն զարմանային:
- *. Ե՞նչով ևս նշանաւոր եղեւ և առաւել հռչակուեցաւ Յիսուսի ծնունդն:
- ¶. Մողերի յԱրուսաղեմ գալովն, և անտի'ի Շեթղեհէմ զնալովն յերկրապուի նորա:
- *. Վանի էին այն Մողքն, և ի՞նչ էին նոցանուանքն:
- ¶. Ըստ հին և ընդհանուր աւանդութեան՝ երեք էին: Առաջնոյն անունն՝ Մելգոն էր, երկրորդին՝ Գասպար, երրորդին՝ Բագրատար*:
- *. Ուպիսի անձինք էին նոքա, և ի՞նչ պատճառաւ Մադու կոչէին:
- ¶. Եշխանք էին փառաւորք՝ յարքայական զարմից, իմաստութեամբ և հարսաւութբ երեելիք. և Մադու կոչէին այնու պատճառաւ՝ որ Մադունեան (յ՛ Աստեղաբաշխուան արուեստի) տեղեակ էին***:

* Ե Յայսմաւրս'ի Յունուարի 6:

** Ա ամս զի'ի հին ժամանակս սովորութիւն էր որ-

Ճ. Յ՞ր կողմանց եկին նոքա յԵրուսաղէմ:
Պ. Եկին յԵրևելից, այսինքն՝ յայն առհմա-
նաց՝ որք յԵրուսաղէմի արևելեան կողմը
անկանին*:

Ճ. Խնչալես իմացան գՅօթուսի ծնանիլը:
Պ. Տեսանելով զնորս հրաշալի ասալը յեր-

պէս Հայոց՝ նոյնպէս և Վարաց և Պարսից և Քաղ-
ութէացւոց՝ Վահ (կամ ըստ այլոց՝ Վահուս) կոչել զայն
մարդը՝ որ աստեղագէտ էր կամ աստեղագիտ թեան
ուսուցիչ:

* Կարելի է ասել՝ ըստ մեր Քննչաց՝ թէ եկին ՚ի Վե-
ջագետաց երկրէն, և ՚ի Վոկաց նահանգէն ։ այսու-
անի, ուր ծաղկեալ էր՝ ի հին ժամանակս Վահուս Ռին-
Ուակեբերան (՚ի Վեկն. Վահ. ճառ զ. և է) համարի,
թէ ՚ի Պարսից աշխարհէն եկին. բայց կարելի է ասել,
թէ նա Պարսից աշխարհ ասելով՝ իմանայ կամ ընդհան-
րապէս զբովանդակ Վեծ ։ այլք, զոր Յոյնք սովոր
էին յիշասակել անուամբս Ռաբութէնիս, և կամ մաս-
նաւ օրապէս զայն նահանգը Վեծին ։ այլոց, զոր Կախ-
նիք մեր կոչեին Պարսիանոց: Կան և կարծողք՝ թէ ե-
կին յԵրաբիոյ կամ ՚ի Արքայէ. բայց սոցա կարծիքն
(ըստ զրելոյ նաև օտարազգի մտանագրաց) հաւա-
նական չէ, ըստ որում Արքարիայն, որպէս և Արքայի
երկիրն՝ որոյ թագուհին՝ Պաշտոյ, հաքառոյ կոչեցաւ ՚ի
Վրիսառուէ (Վահ. ժք. 42: Պահ. ժա. 31), ոչ ան-
կանին յարեւելեան կողմն Երասաղէմի, այլ ՚ի հա-
րաւային:

- կինս՝ երբ դեռ իւրեանց աշխարհումն էին:
- Հ. ♫ Գիտեին թէ ուր է ծնուած:
- Պ. Ու. ուստի յետ մտանելոյ յԵղուսաղէմ,
սկսան հարցանել. “Ո՞ւր է որ ծնաւ ար-
քայն Նըրէից. զի տեսաք զաստղն նորա
յարեւելու. և եկաք երկիրապանել նմա:
- Հ. Այդ անցքի համբաւն քաղաքի մէջ տա-
րածուեցան:
- Պ. Այս, տարածուեցաւ վաղվաղակի, և մին-
չև 'ի Ներովդէսի ականջն ևս հասաւ:
- Հ. Օ. Ի՞նչ արար հերովդէս երբ որ զայդլսեց:
- Պ. Կասկածելով, թէ մի գուցէ նորածին թա-
գաւորն յետ ժամանակի յափշտակէ զիւր
թագաւորութիր, աշխատեցաւ իմանալ
արդէն զնորա ծննդեան տեղը:
- Հ. Յորոց կարաց նա իմանալ զայդ:
- Պ. Դքահանայապետացն Նըրէից և 'ի դպ-
րաց, որք 'ի վկայութիւն բերելով զԱՌ-
քիայ մարգարէի գուշակութիր*, յայտ-
նեցին նմա՝ թէ Նըրէտատանի Շեթղեհէ-

* Մէքիայ մարգարէի բանն՝ որ 700 տարով յա-
ռաջ գրուած էր, բայ բերելոյ Աւետարանչին՝ այս է.

- մումը սլիտի ծնանի Քրիստոն:
- Հ. Առգերի հետ ի՞նչպէս վարուեցաւ նա:
- Պ. Վարուեցաւ կեղծաւորաբար, առ երեսս
մեծարելով զնոսա, և միանգամայն ի զործ
դնելով զիւր խորամանկութիւնը:
- Հ. Եօյդ ուստի է յայտ:
- Պ. Յայտ է յայնմանէ՝ որ նա գալարաբ առ
ինքն հրաւիրելով զԱռգերն, նախ հարց-
փորձ արար՝ իմացաւ ստուդիւ զաստղի
երեման ժամանակը, և ապա արձակեց
զնոսա ի Բռեթղեհեմ՝ առանց յայտնելոյ
զչար խորհուրդը զոր ուներ սրառումը:
- Հ. Ե՞ս էր նորա սրտի չար խորհուրդն:
- Պ. Եօյն էր՝ որ նորածին Երքային կորս-
տեան որոգայթ պատրաստէ. վասն որոյ
“Գնացէք, ասաց Առգերին, ստուդիցէք
վասն մանկանն, և յորժամ զտանիցէք
ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիրը
պազից նմա,,:

Այս դու Բռեթղահեմ՝ երկիր Յուդայ, ոչինչ կրտսեր
ես յիշեսանու Յուդայ. ի քէն ելցէ ինձ իշեսան, որ հո-
գուեացէ զժողովորդ իմ զիսրայէլ. (Առաջ. թ. 6):

Հ. Գնացին Առգերն ի Շեթղեհեմ:

Պ. Եսո, գնացին նորանշան աստղի առաջ-
նորդութք, գտին զՅ ի մօր զրկին նոյն
այրի մէջ՝ ուր ծնուած էր նա. երկրազ-
պեցին նմա իբրև Եսոտւծոյ, և խորհր-
դաւոր ընծայք ևս մատուցին նմա՝ ուկի,
ինպուկ և զրմուռս:

Հ. Երովդէս կարողացաւ այնուհետեւ Յնի
համար հաւաստի լուր առնուլ:

Պ. Ոչ. վասն զե Առգերն, ըստ հրամանին
զոր ընկալան յԵսոտւծոյ երազով, միւ-
սանգամ չհանդիպելով նմա՝ այլ ճոնա-
պարհաւ գնացին յիւրեանց աշխարհը:

Հ. Չբարկացաւ նա երբ որ այդպէս խարուե-
ցաւ Առգերէն:

Պ. Խարկացաւ, և այնպէս սաստիկ, մինչ զե
հրամայեց իւր զօրականաց գնալ կոտո-
րել զայն ամենայն մանր տղայքը մինչ
ցերկուտարեկան՝ որք գտանէին Շեթղե-
հեմի և նորա սահմանաց մէջ:

Հ. Որով նպատակաւ արար նա զայդանօրէն
հրամանը:

- Պ. Այնու նպաստակաւ որ նորածին Արքայն
ևս այլ տղայոց հետ սպանուի. վասն զի
կարծէր՝ թէ դեռ Բաեթղեհեմումն էնա:
- Հ. Ի գործ զբուծցան այդ հրամանգ:
- Պ. Այն. Բաեթղեհեմի մանկունքն կոտորուե-
ցան*. բայց Ներովդէս չհասաւ իւր նպա-
տակին, ըստ որում Յովսէփ զՅո՞ Ածա-
մօր հետ ՚ի միասին փախուցած էր յայն-
ժամ յԵղիպտոս:
- Հ. Ո՞վ ասաց Յովսէփու այլպէս առնել:
- Պ. Աստուծոյ հրեշտակներ, որ յառաջուց ե-
րեւելով նմա տեսիլքի մէջ յայտնեց զՆե-
րովդէսի շար կամքը, և ասաց. “Արի առ
զմանուկդ և զմայլ իւր, և փախոիր յԵ-
ղիպտոս. քանզի ՚ի ինուիր է Ներովդէս
կորուսանել զմանուկդ”:
- Հ. Ո՞րքան ժամանակ մնացին նոքա անգ:
- Պ. Ո՞ինչեւ ցՆերովդէսի մեռանիլն, ք՛ եր-
կու (կամ ըստ այլոց՝ հօթեն) տարի:

* Օկտոտեալ մանկանց թիւր Յունաց Յայսմա-
տրքն (՚ի Գեեկա. 29) գնէ 14,000. իսկ մերն (՚ի Ա-
յիսի 11) գնէ 1462, յ84 գեղջէ. որ աւելի հաւանական է:

- Հ. Յետ շերտվիւսի մահուան ուր գնացին:
- Պ. Ակադամարձան յերկիրն Խորայէլի, և բը-
նակեցան 'ի 'Ապարէթ քաղաքին Գալի-
լիացւոց, ուր էր նոցատոածին բնակուին:
- Եւ այս ևս եղեւ ըստ հրամանին Այ որ
յայտնուեցաւ Յովսէփու՝ տեսիլքով:
- Հ. Այդ անցքով ի՞նչ մարդարէութիւնք
կատարուեցան:
- Պ. Երկու զլիստոր մարդարէութիւնք, որք
Քրիստոսի համար զրուած էին 'ի վա-
զուց. 'նախ' այն թէ "Եղիպատուէ կոչե-
ցից զորդի իմ,, երկրորդ՝ այն թէ "Կա-
զովուեցի կոչեսցի,, (Ո՞ստ. Է. 15. 23):

ՅԱՏԵԼՄԻԾՈՎ

Ե. ՔԱԹԱԱՆՕՐԵԱՑ ԸՆԾԱՑՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ Դ
ՏԱՇԱՐՆ

- Հ. Ե՞նչպէս եղեւ ընծայութն Յսի 'ի տաճարն:
- Պ. Երբ որ քառասնօրեայ եղեւ Յս, Յով-
սէփ և Արքիամ առին տարան զՅս յԵ-
րուսաղէմի տաճարը՝ Այ նուիրելոյ հա-

- մար, իւրեանց հետ ունելով երկու աշաւնի կամ երկու տասրակ*:
- Ճ. Եղաւնի կամ տասրակ վս էր տարան:
- Պ. Աշան պատարագ (լոհ) մատուցանելոյ, որպէս զրուած էր Սովոխական օրինաց մէջ (Պ. Հա. Ժ. 6. 8):
- Ճ. Յերեւելի անձանց ով կայր յայնժամ տաճարումը:
- Պ. Ախմէռն ծերունին կայր, այն արտար և երկիւղած մարդն, որ եկած էր անու գւոյն սրբոյ ազգեցութեամբ, և հրաման էր առած 'ի նմանէ մահ չտեսանել' մինչեւ որ զԿատուծոյ Օծեալը (զՔրիստոս) իւրաչօքն տեսանէ*:
- Ճ. Օժնէ արար նա՝ երբ որ տեսաւ զՅն:
- Պ. Յեւր զիրկը առաւ զնա, և փառք տու-

* Յաւետարանշի գրածէն (Պ. Հ. Է. Բ. 24) չէ յայտնի՝ տասրակ տարան, թէ ազաւնի: Ամանց հաւանելի թուի կարծել՝ թէ ազաւնի տարան, որովհետեւ այն էր աւելի սովորական նուեր, և առաջարումը ևս ազաւնի վաճառէին (ՀՅովհ. Բ. 14): Խակ այլք ասեն՝ թէ զերկուքը ևս (այսինքն՝ մի զոյզ ազաւնի և մի զոյզ տասրակ) տարան (Տաթեւ. 'ի հատ. Զմեռ. յէջ ղա):

աւ Աստուծոյ՝ ասելով. “Եսու արձակե՛ս
զծառայս քո Տեր ըստ բանի քում ՚ի
խաղաղութիւն. զիտեսին աշք իմ զփրռ-
կութիւն քո,,:

Հ. Եւ ի՞նչ խօսեցաւ:

Պ. Գառնալով զէպ ՚ի Մարիամ Ա.Այսն՝
մարդարէական բան խօսեցաւ՝ ոչ միայն
մանկացեալ Ածորուոյն վերայ, այլ և նոյն
իսկ Ածամօր վերայ, այսպէս. “Եհա սա
(ժ՝ մանուկս) կայ ՚ի վլորումն եւ ՚ի կանգ-
նումն բազմաց ՚ի մէջ Խարայէլի, եւ ՚ի նը-
շան հակառակութեան: Եւ ընդ քո իսկ
անձն անցցէ սուր,,, եւ այլն:

* Աս՝ որպէս հասարակաբար կարծրում է քա-
հանայ եր, ե ըստ ասելոյ ոմանց՝ եր կամ որդի մեծի
քահանային ՀՅետւայ Յավեդեկեանց, զոր յիշէ Օա-
քարիա մարդարէն (զ. 1), կամ եղբայր Աշլիազարու,
զոր յիշէ Վատթէոս (տ. 15): Կարծի ես՝ թէ մի եր
յ72 բարունեացն՝ որք Ալազոմեոս Փիլադելփիոս Ազիալ-
տացւոց թագաւորի հրամանաւ զլ. Գափրքը թարդմա-
նեցին ՚ի յոյն լեզու 273 տարւով յառաջ քան զբան
(իզն. ՚ի Աեկն. և տկ. դւ. քւ. քւ). ե ՚ի քանի ծննդեան
ժամանակին՝ եր, առեն, 344 տանց: Տես առ Տաթեա-
ցւոյ (՚ի համ. Զմեա. յէջ ձէ):

Հ. Ա. Եւ ոք ևս մարդարէաբար բան խօսեցաւ
յայնժամ Յիսուսի վերայ:

Պ. Ա. Եւ, յիտ Ախմէոնի, Ենա մարդարէու-
հին, Փանուէլի գուստըն, որ 84 տարե-
կան՝ բարեպաշտ այրի էր*, սկսաւ գո-
հանալ զԵստուծոյ, և խօսել Յնի վերայ
այն անձանց հետ՝ որք փափազանօք բո-
պատէին Մեսիայի դալստեանը:

Բ. ՎԱՐԴԱՊԵՏԵԼՆ ՅԻՍՈՒՍԻ Ի ՏԱՃԱՐԻՆ
ՅԵՐԿՈՏԱՄԱՆԱՄԵԱՅ ՀԱՍՎԻ

Հ. Յոդ տեղ և երբ երկեցոյց Յիսուս առա-
ջեն անգամ զիւր Եստուծեղէն իմաս-
տութեան և զիսութեան նշանը:

Պ. յԵրուսաղէմի տաճարում՝ երբ որ ինքն
տան և երկու տարեկան էր:

Հ. Ե՞նչպէս երկեցոյց:

Պ. Նրէից վարդապետաց (ց՛տուրաց և գետ-
նոց) հետ խօսելով՝ այնպիսի հարց-
մունքներ արար նոցա, և այնպիսի պա-

* Թէ՛ով էր սորտ վախճանուած ամուսինն՝ յայտնի չէ:

տասխանիք տուաւ նոցա հարցմանց, որ
լողքն զարմացան հիացան նորա մեծ և
սքանչելի իմաստութեան վերայ:

Հ. Ի՞նչ առարկայի վերայ էին այն հարց-
մունքն և պատասխանիքն:

Պ. Ըստ հաստատելոյ Մեկնչաց՝ էին Մե-
սիայի (Քրիստոսի) գալստեան ժամա-
նակի վերայ, նորա գործոց և նշանաց վե-
րայ, ևս և այն մարդարէութեանց վերայ՝
որք նորա համար զրուած էին:

Հ. Որո՞ց հետ եկած էր յայնժամ Յիսուս
յերուսաղէմ:

Պ. Խոր ծնողաց* (Մարիամու և Յովսէ-
փայ) հետ, որք ըստ սովորութեան յիւ-
րաքանչիւր տարի երթային յայն քաղա-
քը՝ ի Օտելի տօնին, տաճարումը զոհ
մատուցանելոյ համար:

* Յաւետարանի Ա. Յովսէփ Մարիամու խօսնայրն
և Շնորհ Յիսուսի կոչելու հասարակ սովորութեան
և կարծեաց այլոց, որպէս և նա ինքն Աստուածամայրն
և “Հայր +” ասաց Յիսուսին՝ Յովսէփայ համար (Ղու-
կաս բ. 47):

ԳԼՈՒ

ՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԻՍՏՈՅԻ

Ճ. Յումելի մկրտեցաւ Յիսուս:

Պ. Ե Յովհաննէս Մկրտչէն, որ էր որդի
Օքքարիայ քահանայի կամ քահա-
նայապետի*:

Ճ. Ուր բնակէր նա և որպիսի կեանք վարէր:

Պ. Յանապատումը բնակէր ճղնաւորական
կենօք:

Ճ. Ե՞նչէր նորա կերակուրն, և որպիսի էին
հանդերձքն և գօտին:

Պ. Կորա կերակուրն՝ էր մարախ** և վայ-

* Բազումք ՚ի հին վարդապետաց Հայոց և Յունաց
զջաքարիայն Քահանայապետ համարեցան: Ի հաստա-
տութիւն այսորիկ՝ բաւական է մեզ Գորիզորի Լուսա-
ւորչի ասածն. “Եկն և մեծն Յովհաննէս՝ որդի քահա-
նայապետին Զաքարիայ (յԱղաթ.նորատիպ.էջ 313):

** Մարտի, ըստ ըուն նշանակութեան բառին՝ իմա-
ցեալ լինի այն թուչող և ոստոստող կենդանին, որ
Յունարէն ասի Աբրէտէս, Ռուսերէն՝ Սարաչա, Տաճկերէն
Չերելին, և ուտելի էր ըստ Հին օրինաց (Տե՛ս ՚ի Ղետ.
ժա. 22): Բայց ոմանք համարին, թէ Յովհաննու
Մկրտչի կերածն՝ էր Վայրէ առնչ (Յունարէն՝ Աժառ-

բենի մեղք։ Հանդերձքն էին՝ ՚ի ստեղ
ուղտու (ցը՝ յուղտու բրդէ), և գօտին՝
մաշկեղէն էր (ցը՝ կաշեայ)։

Հ. Յանապատումը զի՞նչ դործէր։

Պ. Վարոզէր որ մարդիկ ապաշխարեն իւ-
րեանց մեղաց համար, և զապաշխարողքը
մլրտէր Յորդանան գետումը։

Հ. Յիսուս ՚ի մեղաց սրբըւելոյ համար կա-
մեցաւ մլրտիւ։

Պ. Ո՛չ. վասն զի՞նա անարատ էր յամենայն
մեղաց, և կարօտ չէր սրբութեան։

Հ. Ուրեմն ինչո՞ւ համար մլրտեցաւ։

Պ. Եյնոր համար՝ որ իւր ամենասուրբ մար-
մնով զջուրը սրբելով՝ զմեր մլրտու-
թեան խորհուրդը հաստատէ։

Հ. Յանձն առան Յովհաննէս զէՅիսուս
մլրտել։

Դէս) կամ Մաթուալ (Տաճկերէն՝ Հօֆտ եմէլ)։ Իսկ ՚ի
Հայաստան, Տաբոնոյ Հայ բնակիչքն համարին, թէ էր
քաղցրահիւթ բոյսն Մագուարակ՝ յորոյ վերայ իջանէ
գաղպէ, և զոր ինքեանք անուանեն Քաղցր Մարակ
կամ Մարուն։ Ան և կարծողք, թէ էր տեսակ ինչ
ծովային ժժմակաց՝ որք ՚ի Յոյն լեզուի կոչին Աւանի-
սէս կամ Խառնէրէս։

¶. Խսկվբան չառաւ յանձն, այլ՝ զարմանաւ-
լով նորա այնչափ խոնարհութեան վե-
րայ՝ ասաց “Ղնձ պիտոյ է ’ի քէն մլրտիլ,
և դու առ իս զաս,,։ Ծայց յետոյ յօժա-
րեցաւ կատարել զնորա կամքը՝ երբ որ
լսեց ’ի նմանէ զայս խօսքս. “Թա՞յլ տուր
այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զա-
մենայն արդարութիւնս,,։

♦. Յերկար մնաց Յիսուս Յորդանանու-
ջըումը։

¶. Ո՞ւ. այլ յետ մլրտելոյն՝ ելաւ վաղվաղա-
կի ջրոյ միջէն, և սկսաւ զետափումը յա-
ղօթս կալ։

♦. Ո՞րպիսի սքանչելի տեսիլք և զէպք եղեն
յայնժամ։

¶. զՅՅիսուսի Որդի Աստուծոյ լինելը՝ հրա-
պարակաւ յայտնելոյ համար՝ ♦ողին
սուրբ աղաւնակերպ իջաւ ’ի վերայ նո-
րայ, և յերկնից ևս ձայն լսուեցաւ “Ղա-
է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ,,։

ՅԵՒՆԻՄԵՐ

ՅՈՎՀԱՆՆԻՍ ՄԿՐՏԻՉ

—

Ն. Յովհաննու Մկրտչի վերայ ի՞նչ կարծիք
ունեցան Հրեայք:

Պ. Կարծեցին՝ թէ նա է Քրիստոսն, կամ
Եղիայն, և կամ այն Մարգարէն՝ որ լի-
նելոց էր նոր օրէնսդիր ժողովողեան, ըստ
գրելոյն Մովսիսի*:

Ն. Ինքն ի՞նչ ասաց իւր համար:

Պ. “Ես չեմ, ասաց, Քրիստոսն, և ոչ Ե-
ղիայն, և ոչ այն Մարգարէն**,” այլ Կա-

* Ք. Օրին. Ժը. 15: Գառծ. Է. 37:

** Խճեպէտ Յովհաննէս Եղիա կոչեցաւ ՚ի Քրիստոսէ
(Մատ. Ժա. 14), բայց այն կոչումն՝ փոխաբերական էր՝
առւեալ միայն վասն նման լինելոյն Եղիայի հոգւով և
զօրութեամբ (յ՛ արիութեամբ և Աստուածային նա-
խանձով) ըստ բանի հրեշտակին (Ղուկ. ա. 17): Այն-
պէս ասած էր ՚ի դէմս Յովհաննու՝ նորա հայրն Զա-
քարիա, “Եւ դու մանուկ, Մարտարէ Բարձրելոյ կոչես-
ջիր (Ղուկ. ա. 76): և Քրիստոս կոչեց զնա ոչ միայն
Հարթարէ, այլ և առաւել և ան զմարդարէ (Ղուկ. Է.
26): սակայն Հրեից կարծիքն այլ էր, նորա համարէին:

- բապետ (յառաջընթաց, ճանապարհ բա-
յուղ) եմ Քրիստոսի, և չեմ արժանի նո-
րակօշկաց խրացքը (էտպէր) արձակելու:
Հ. Յիսուսի համար ի՞նչ ասաց:
Պ. “Ան է, ասաց, Որդին Կոսուծոյ, սա է
Քրիստոս՝ գառն Կոսուծոյ, որ բառ-
նայ զմեղս աշխարհի”:
Հ. Յովհաննէս՝ յետ մկրտելոյ զՅիսուս՝ ուր
գնաց, և ի՞նչ եղեւ:
Պ. Հերովդէս-Կոմիպասի հրամանաւ տասն
և վեց ամիս Մաքերոնտայ* ամրոցի մէջ
բանտարկեալ մնաց, և ապա զլխատեցաւ:
Հ. Ովկ էր Հերովդէս-Կոմիպաս, և ի՞նչ
պաշտօն ունէր:
Պ. Կոռաջին մանկակոտոր Հերովդէսի որդ-
ւոց մինն էր, և յօդոստոս կայսերէն
Հռովմայեցւոց՝ Շորրորդապետ*** կար-

թէ Յովհաննէս՝ առաջին թեղբացի Եղիայն է, կամ
թէ այն մեծ մարդարէն՝ որ գալոց էր յետ Մովսիսի՝ նոր
օրէնք հաստատելոյ համար, որ է ինքն Քրիստոս:

* Կյու ամրոցս Յորդանան գետոյ միւս կողմումն էր՝
Մեռեալ ծովու մօտ:

** Ուսու-. Կերովլաստնիկъ, յու մի տերութեան կամ

- զուած էր Գալիլեայ զաւառին։
Հ. Ո՞վ զրդուց զնա այնպիսի անպարտ ա-
րիւնչեղութիւն առնելու։
Պ. “Եորա ապօրինաւոր լկտի կինն, որոյ ա-
նունն էր Հերովդիա կամ Հերովդիադա։
Հ. Արիթէնա ո՞խ ունէր Յովհաննու վերայ։
Պ. Այսու վասն զի Յովհաննէս ’ի յանդիմա-
նութիւն Հերովդէսի օրինազանցութեան՝
շատ անգամ ասած էր նմա. “Ո՛չ է օրէն
քեզ ունել զկին եղբօր քո”*։
Հ. Որո՞ց ձեռամբք և ո՞ր թաղուեցաւ Յով-
հաննու մարմինն։
Պ. Մարմինն միայն առանց դլխոյ՝ թաղուե-
ցաւ յայնժամ նորա աշակերտաց ձե-
ռամբք՝ Պաղեստինու Աերաստէ քաղա-

երկրի չորրորդ մասին Խշան կամ Կառավարիչ։

* Վ ասն զի Հերովդիա՝ օրինաւոր կին էր Փիլիպ-
պոսի՝ Խառըացւոց և Տրաքոնացւոց աշխարհի Զոր-
ըորդապետին, որ և սոյն Հերովդէսի եղբայրն էր և դեռ
չէր մեռած (ըստ Երզնկ. ’ի Մեկն. Մատ. ժղ. 4): Խակ
կենդանի եղբօր կնոջ հետ ամուսնանալն՝ ընդդէմ էր և
Բնական օրինաց, զոր հեթանովք անգամ պարտական
էին պահելու։

Քի արուարձանումը*:
Հ. Գլուխն ի՞նչ եղե:
Պ. Այլոց ձեռօք կաւեղէն անօթոյ մէջ դը-
ւելով՝ պահուեցաւ երովդէսի պալա-
տումը** զետնի տակ:

四
卷之三

ЧЕРНОМОРСКАЯ ФЕРМЫ

Հ. Յիսուս յետ մկրտութեան ո՞ր գնաց:
Պ. Հոգւոյն Արբոյ ազգելովն զնաց առանձ-
նացաւ յանապատ (յանշէն) տեղ մի՛ որ
Երիքովի և Մեռեալ ծովու միջոցումն
էր***:

Հայոց պատմութեան անդ:

¶. Վառասուն օր ծոմ պաշեց (յո՞ւ ոչ կերպու և ոչ խմեց), և փորձիչ սատանային

* Помещ. предмѣстіе. **S**тат. **Ч**арръ:

** Այս պալատու հետի էր ՚ի Մաքերա կամ Մաքերոնտա ամրոցէն՝ 20 փարսախաւ:

*** Այս տեղս 'ի յետին մատենագրաց յիշատակ-
ւում է անուամբս Անոռակաց Քառահանելիք:

յաղթեց, և հալածեց զնա՝ զայս բանս ա-
սելով՝ ի վերջոյ. “Երթ յետս իմ (կորիք
զնա) տանայ,»:

Ճ. Յետ քառասնօրեայ ծոմապահութեան
ուր զնաց Յիսուս, և զե՞նչ սկսաւ առ-
նել:

Պ. Դարձաւ՝ ի Գալիլեա, և անդ սկսաւ ա-
շակերտք ժողովել, և ապա քարոզել և
ուսուցանել քաղաքաց և գիւղորէից մէջ:

Ճ. Աշակերտաց զլիսաւորքն առանձին կո-
չումն ունեցա՞ն:

Պ. Այս, նոքա կոչեցան՝ ի Վրիստոսէ Ա-
ստածուալէ, որ նշանակէ ուղարկուած + կամ
ուղարկուելու աղառականութ:

Ճ. Վասն Է՞ր այդպէս կոչեցան:

Պ. Վասն այն՝ զե պիտի ուղարկուէին՝ զԱ-
ւետարանը (ֆ՝ զՎրիստոսի գալուստը,
զնորա վարդապետութիւնքը կամ զԵոր
Օրէնքը) քարոզելու յամենայն տե-
ղիս:

Ճ. Վանի՞էին Առաքեալքն:

Պ. Տասն և երկու*, որք են.

- Թ. Պետրոս . } որդիք Յովանու:
Բ. Անդրեաս . }
Ք. Յակոբոս . } որդիք Օհրեղեայ:
Ե. Ֆիլիպոս .
Ղ. Իարթուղիմեոս.
Է. Թաովմաս**.
Ը. Սատթէոս (որ և Պետրոս).
Ժ. Յակոբոս Ալփեան.
Ճ. Պերէոս (որ և Թամաչէս***).

* Երբեմն և այլ 72 աշակերտքն՝ զորս ուղարկեց Քրիստոս երկու երկու յայն քաղաքա՝ ուր ինքն երթալոց էր (ըստ Պուկ. ժ. 1), Առաջեալ անուամբ յիշատակին 'ի գիրս: Իաց յայսմանէ նաև Պաւղոս՝ որ յետ Քրիստոսի համբարձմանն որոշեցաւ 'ի գործ առաքելութեան (Գործ. ժկ. 2: իբ. 21) կոչի Առաջեալ (Հովմ. ա. 1), կամ յատկապէս՝ երեւուստուն (իպ' Երեքտասասներորդ) Առաջեալ ('ի Շարակ.):

** Այս եղբայր էր միւս Թաղեոսի՝ որ էր 'ի կարգէ 72 աշակերտացն:

*** Կոչի սա և Յամաչա Յամաչա (Պուկ. զ. 16):

Ժաման Արևանացի*.

Ժբ. Յուղա Խակարիովացի:

Հ. Յիսուս զի՞նչ քարոզէր:

Պ. Հաւատալ յինքն՝ թէ միածին Որդին է
Աստուծոյ, հաւատալ յառաքին իւր՝
յԱստուած այր, հաւատալ յաւետա-
րանն, 'ի մեղաց կամ 'ի չարեաց ապաշ-
ւել, և առաքինութիւնք գործել՝ զերկնից
արքայութիւնը կամ զյաւիտենական
կեանքը ժառանգելոյ համար:

Հ. Որպիսի առաքինութիւնք ուսոյց:

Պ. Ճշմարտութիւն սիրել, սուրբ սրտիւ
յԱստուած ճանաչել և հոգւով պաշտել,
հեզ խոնարհ՝ համբերող՝ ողորմած՝ խա-
ղաղաբար, եղբայրասէր կամ ընկերասէր
լինել, և այն:

Հ. Եւ որպիսի խրապ տուաւ:

Պ. Օգուշանալ յայն ամենայն ախտից և
'ի մոլութեանց՝ ոլք կարեն հոգւոյ կորս-

* Աս՝ ըստ նշանակութեան անուան քաղաքին կոչե
և՝ Սահմանյացոյշ (Ղուկ. գ. 15), ըստ որում Գառնա՝
յԵրայեցոց լեզուի նշանակէ՝ Սահմանյ:

տեան պատճառ լինել, որպիսի են՝ կեղծաւորութիւն, հպարտութիւն, ոխակալութիւն, բամբասանք, ստախօսութիւն, աւելորդ հոգք աշխարհականք, և այլն:

ԳԼ. Դ

ՀՐԵՍ ԵՊՈՐՅԱԿԹԻՒՅՔ
ՎՐԵՄՈՑՈՒ

- Ճ. Յիսուս որպիսի հրաշքներ գործեց:
Պ. Առանց զեղորէից՝ և միայն իւր Աստուածային կարողութեամբ՝ զհիւանդքը և զցաւազարքը բժշկեց. զդիւահարքը ազատեց. զիւլից ականջքը՝ և զհամբ մարդոց լեզուքը բացաւ. զկուրաց աչքերը լուսաւորեց. զկաղքը և զանդամալոյձքը առողջացոյց, և այլն:
Ճ. Ո՞ն եղեւ Վրիստոսի առաջին հրաշագործութիւնն:
Պ. Օջուրը 'ի զինի փոխելն՝ կանա Գալիւնացոց քաղաքումը, այն հարսանեաց

մէջ՝ ուր հրաւիրուած էր Տիրամայր
կոյսն, ևս և ինքն Յիսուս՝ հանդերձ ա-
շակերտօքն:

Հ. Ի՞նչպէս եղեւ այդ:

Պ. Հարսանեաց խնճոյքի (ուրախութեան)՝
ժամանակին, երբ որ զինին պակասեցաւ,
Տիրամայրն յայտնեց Յիսուսին թէ “զի-
նի ոչ ունին,,,: Յիսուս ևս պատուիրեց
սեղանի սպասաւորաց՝ որ կճեայ թակոյկ-
քը* (որ վեց հատ էին)՝ ջրով լընուն և
տանին տաճարապետին**: Եւ երբ նոքա-
կատարեցին զայս, տաճարապետն ճաշա-
կելով՝ տեսաւ որ պատուական անոյշ զի-
նի եղած է:

Հ. Գիտէ՞ր տաճարապետն՝ թէ ուստի է այն
զինին:

Պ. Ա՛չ. ուստի մեղադիր եղեւ փեսային՝ ասե-
լով. “Ամենայն մարդ զանոյշ զինիր յա-

* Վարեայ Հրաման+, որոց Անձերն՝ Յ, և փոքրերն՝
2 մար (ведро) պարունակեին: Այսպիսի ամանք ջրով
լցուած գրւում էին հայկերութի ժամանակ՝ ձեռք
լուանալոյ համար՝ ըստ Հրեից սովորութեան:

** Առնոց վերակացու. Տաճկ. այլահճը ուսւը:

ռաջագոյն պաշտէ. և յորժամ արքենան,
յայնժամ զյոռին. դու պահեցեր ղանոյշ
զինիդ մինչեւ ցայժմ։

Հ. Այն հարսանեաց մեջ ով էր փեսայն։
Պ. Ըստ ոմանց՝ էր Սիմոն Կանանացին՝ եր-
կոտասան Առաքելոց մինն*. կամ ըստ
այլոց՝ “Աաթանայէլ”**, որ նոյնպէս ’ի
Կանայ քաղաքէն էր, և ’ի բաղմաց հա-
մարի նոյն ընդ Շարթուղիմէոսի Առա-
քելոյ, որ կենսաբեր քարոզութեալին՝
Նայը Նոհեալ եղեւ Աայտապանեայց***։
Հ. Այլ կերպիւ հրաշքներ ևս գործեց Յի-
սուս։

Պ. Այն, զծովու կատաղած ալիքը և զսա-
տիկ հողմը՝ դադարեցոյց՝ լնկ սաստելով։

* Յայսմաւ. (ԺԱպրիլի 9): Յ. Երզնկ. (՚ի Մեկն.
Մատ. Ժ. 4):

** Յառաջ քան զհարսանիքը, տեսանելով զսա
Յիսուս՝ ասաց “Ահա արդարեւ Խորայէլացի, յորում
նենգութիւն ու զոյ։ Եւ նա յետ այլոց խօսից՝ ասաց
նմա՝ Պետրոսի նման “Ուաքի, դու ես որդի Աստո-
ծոյ, դու ես թագաւորն Խորայէլի” (Յովհ. ա. 47. 49):

*** Ըստ Շարականի (՚ի Կանոն Առաք.):

ծովու վերայ ոտիւք քայլեց. և երկու անգամ ևս զսակաւ հաց ու ձուկը բազմացոյց՝ օրհնելով։

Հ. Յառաջին անգամին զքանի՛ հացը և ըպքանի՛ ձուկը բազմացոյց, և որչափ մարդիկ կերան յագեցան յայն հացից և ձկանց։

Պ. Բազմացոյց զհինդ զարեղէն նկանակը (հացը) և զերկու ձուկը. յորոց կերան յագեցան հինդ հազար մարդ, թող զկանայքը և զմանը տղայքը։

Հ. Յո՞ր տեղ եղեւ այդ հրաշազորձութիւնդ։

Պ. Յանապատումը, Ինեթսայիդա քաղաքի սահմանում։

Հ. Օյնչ ասացին զայդ սքաչելիքը տեսողքն։

Պ. “Ա՞սէ, ասացին զարմացմամբ, ճշմարիտ մարգարէն՝ որ զալոց էր յաշխարհ։”

Հ. Յերկրորդ անգամին զքանի՛ հացը և ըպքանի՛ ձուկը բազմացոյց, և քանի՛ հոգի կերան յագեցան։

Պ. Բազմացոյց զեօթն նկանակը և զքանի՛ մի ձուկը. յորոց կերան յագեցան չորս

Հազար հողի, թող զկանայքը և զմանը
տղայքը:

Ճ. Յոր տեղ եղեւ այդ հրաշագործութիւնդ:
Պ. Մի լերին (սարի) վերայ՝ որ Պալելեայի
ծովեղերումն էր:

Ճ. Փշրանք ևս յաւելացան 'ի բազմացու-
ցեալ հացից:

Պ. Այս, յառաջին անգամին տասն և երկու
սակառի* լի, և յերկրորդ անգամին եօթն
զամբիւղ** լի, փշրանք յաւելացան. զորս
հաւաքողքն (ըստ ասելոյ Մեկնչաց) տա-
րան իւրեանց որդւոց:

Ճ. Մեռած մարդ ևս յարոյց Յիսուս:

Պ. Այս, երեք ևս մեռած մարդ յարոյց:

Ճ. Ոյլք էին նոքա:

Պ. Առաջինն էր Յայրոս իշխանին կամ ժո-
ղովրդապետին*** Ճ. ըէից տասն և եր-
կու տարեկան աղջիկն՝ Ալավառնառմ
քաղաքումը. երկրորդն էր՝ մի այրի կնոջ

* Տաճկ. ուժեն:

** Տաճկ. զէմոնիւ

*** Ուսուց. Начальникъ Синагоги.

միամօր* որդին “Ային քաղաքումը. եր-
բորդն էր՝ Պաղարսո՛ Յիսուսի բարեկտմն
Բեթանիա դիւղումը:

• Ե՞նչպէս յարոյց Յիսուս զՅայրոսի
աղջիկը:

Պ. Բռնեց ձեռքէն, և ասաց Երրայեցերէն.
“Տալիթա, կռւմի,, որ թարգմանի “Աղ-
ջիկ դու, քեզ ասեմ” արի (վեր կաց):
Եւ իսկոյն յարեաւ աղջիկն: Եւ Յիսուս
պատուիրեց նորա ծնողացն՝ որ կերակուր
տան նմա:

• Ե՞նչպէս յարոյց զայրի կնոջ որդին:

Պ. Երբ որ մեծ բազմութիւն ժողովրդեան
տանէին զնա թաղելու և նոր դուրս ելած
էին քաղաքի դռնէն, մօտեցաւ Յիսուս
դաղաղին, և ասաց. “Պատանի դու, քեզ
ասեմ” արի,,,: Եւ իսկոյն կանգնեցաւ
նստաւ մեռեալն և սկսաւ խօսել**:

* Հօր մօրը մի հատիկ:

** Օսա՝ Օաւարէս անուամբ յիշէ Միքայէլ
Պատամագիրն Ասորի. և առէ թէ “Քարկոծեցաւ ՚ի
Հուրնիա,, (՚ի Պատմ.):

- Ճ. Օ՞ղակը երբ յարոյց Յիսուս:
Գ. Երբ որ նա չորեքօրեայ մեռած էր, և
դրուած էր գերեզմանի մէջ :
- Ճ. Պաղարու մահուան ժամանակին՝ Յի-
սուս նորա մօտ չէր:
- Գ. Ո՞չ այլ շրջում էր Յորդանանու միւս
կողմերում՝ քարոզելոյ և ուսուցանելոյ
համար:
- Ճ. Օհիւանդութիւնը չէր լսած:
- Գ. Լսած էր. վասն զի Պաղարու քորքն՝
Մարիամ և Մարթա՝ յատուկ մարդու-
ղարկելով ծանուցած էին թէ “Օոր
դուն սիրէիր՝ հիւանդացեալ է,,:
- Ճ. Ի՞նչ ասաց Յիսուս՝ երբ որ զայդ տիտոր
համբաւը լսեց:
- Գ. “Եյն հիւանդութիւն, ասաց, չէ՞ի մահ,
այլ՝ վասն փառացն Աստուծոյ, զի փա-
ռաւոր լիցի Որդի Աստուծոյ այնուիկ,,:
- Ճ. Շշապեցան առ հիւանդ բարեկամն դր-
նալու:
- Գ. Ո՞չ, այլ՝ երկու օր ևս մնալով այն տե-
ղում՝ ուր էր, յետ մեռանելոյ հիւան-

Դին՝ ասաց աշակերտացն. “Ու ազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ” զի զարթուցից զնա,,:

Հ. Հասկացա՞ն աշակերտքն զայդ բանի իսկական միտքը:

Պ. Աչ. վասն զի Յիսուս կամեցաւ յայտնել՝ թէ Ու ազարոս մեռաւ, և ես պիտի երթամ յարուցանեմ զնա. իսկ աշակերտքն կարծեցին՝ թէ նոյն հիւանդն յառողջութիւն գառնալով անոյշ քնած է. վասն որոյ ասացին. “Տէր, եթէ ննջեաց՝ ապա ապրի,,:

Հ. Յայտնեց ուրեմն Յիսուս զիւր միտքը՝ այլով բանիւ:

Պ. Եւյն, զի ասաց յայտնապէս. “Ու ազարոս մեռաւ, և ես ուրախ եմ վասն ձեր,,, ևն:

Հ. Կ՞ոչէր պատճառն ուրախանալոյն Յիսուսի:

Պ. Եւյն էր, որ նա իւր Եստուածային նախաղիտութեամբն իմանում էր արդէն՝ թէ աշակերտքն զՈւ ազարու յարութեան

Ա. Եթ սքանչելիքը տեսանելով առաւել ևս
պիտի հաստատուին 'ի հաւատու:

Հ. Երբ որ Յիսուս մօտեցաւ 'ի Քեթանիա՝
ոյք ընդ առաջ ելին նմա:

Պ. Պազարու երկու քորքն, ևս և բազմու-
թիւնն այն Նրէից՝ որք յԵրուսաղէմէ
եկած էին անդ՝ զսդաւորքը միսիթարելոյ
համար*:

Հ. Յիսուսի՝ և Պազարու քեոց մէջ եղե՛ն
յայնժամ խօսակցութիւնք:

Պ. Այս, Մարթա ասաց Յիսուսին. “Տէր,
եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մե-
ռեալ”։ Եւ Յիսուս ասաց նմա. “Յա-
րիցէ եղբայրն քո”։ Յետոյ երբ որ ասաց
Մարթա. “Գիտեմ” զի յարիցէ 'ի յա-
րութեան՝ յաւուրն յետնում”, յաւելա-
ցոյց Յիսուս զայս բանս ևս. “Ես իսկ եմ
յարութիւն և կեանք**։ Որ հաւատայ

* Վասն զի ճանապարհն յԵրուսաղէմէ մինչ 'ի
Քեթանիա՝ 15 ասպարիզի շափ էր, յը՝ 2 աշխարհա-
զրական մղոն:

** Այսինքն. Ես եմ պատճառ յարութեան մեռե-
լոց և տուող կենաց կամ կենդոնացուցիչ :

յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ ։ ։ ։ Հա-
ւատան այսմիկ, :

Ճ. Ի՞նչ պատասխան տուաւ Մարթա՝ Յի-
սուսի հարցմանն:

Պ. Եսաց. “Այսուհետու ես հաւատացի՝ եթէ դու
ես Քրիստոսն Որդի Եստուծոյ, որ
յաշխարհ գալոց էիր, :

Ճ. Մարիամ զե՞նչ արար՝ երբ որ տեսաւ ըզ
Յիսուս:

Պ. Ենկաւ առ ոտս Յիսուսի, և զՄարթայի
ասածը կրկնելով “Տէր, եթէ ասու էիր
զիպեալ, ոչ էր մեռեալ եղքայրն իմ” լայր,
ինչպէս լային և նորա հետ եկած Նըրէայ-
քըն:

Ճ. Յիսուս ես սիրոյ և ցաւակցութեան նր-
շան ցոյց տուան:

Պ. Այսուհետու մասն ինշանակ կարեկցութան հար-
ցոյց՝ թէ ուր են զբած զմեռելոյ մարմինը,
և ապա յորժամ ասացին “Ե՛կ և տես,,
ինքն ես արտասուեց: Ուստի և ումանք
’ի Նըրէիցն ասէին. “Տեսէք՝ որչափ սի-
րէր զնա, :

Ճ. Խնչպես եղեւ Պաղարոսի կենդանանալն
և յառնելն:

Պ. Յիսուս գնալով դեպ 'ի գերեզմանն* բայց
ոչ շատ մօռենալով, հրամայեց այլոց՝ ըգ
վէմը 'ի բաց առնուլ. և ինքն նախ զաշ-
քերը 'ի վեր բարձրացուցանելով գոհա-
ցաւ զԱստուծոյ Ճօրէ, և ապա դեպ 'ի
գերեզմանն դառնալով աղաղակեց բարձ-
րաձայն. “Պաղարէ, արի եկ արտաքս**,,”:
Եւ նոյն ժամայն կենդանացաւ և ինքնին
'ի դուրս ելաւ մեռեալն***:

Ճ. Պատանքով պատած չէր նա:

Պ. Պատած էր. ուստի հրամայեց Յիսուս՝

* Պաղարու գերեզմանն էր քարայր (Տաճկ. Հայալա. Ոտու. ուղերա) , և բերանումը դրուած կայր մի մեծ
վէմ: Այսպիսի էին զրեթէ և այլ հարուստ Ճըէից
գերեզմանքն՝ ըստ սովորութեան այնը ժամանակի:

** Գարէ մեր երան սշնորհ Վամբըրէ վարդապետն.
“Ճեռի եկաց (Ճիսուս) 'ի գերեզմանէ անտի կանգունս
երկոտասան, չմերձենալով 'ի մեռեալն. փոխանակ ձե-
ռինն՝ զձայնն սաստկացոյց (Ճառ 'ի յար. Պաղ.):

*** Պաղարու յարութիւնն՝ ըստ կարծեաց Վեկնչաց՝
եղեւ 'ի տասներորդ ժամու, յու՝ երկու ժամաւ յառաջ
քան զարեզակնամուտը (Վամբըրէ 'ի ճառն յարու-
թեան Պաղ.):

որ զոտից և զձեռաց կապանքը արձակեն.

“Եւծուծէք զդա, ասաց, և թողէք երթալ”:

Հ. Այսուհետեւ շատ ապրեցաւ յարուցեալն:

Պ. Տասնեւինդ տարի ևս ապրեցաւ, ասեն,
բայց նչ երբէք ծիծաղեցաւ. և մեռաւ
կիտուան քաղաքումը կիպրոս կղզւոյն*:

ՅԵՒՆՈՒԾՈՎ

Ե. ԱՅԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հ. Յիսուս՝ յառաջ քան զյարութիւնն եւ^ր բեցոյց զիւր Աստուածային փառքը ՚ի
մարմնի:

Պ. Այս, երեւեցոյց միանգամ միայն՝ այլա-
կերպելով երեք զլիաւոր Առաքելոց ա-
ռաջեւ, որք էին՝ Պետրոս, Յակոբոս,
Յովհաննէս:

Հ. Յոր տեղ եղեւ այդ հրաշալի տեսիլդ:

Պ. Յաւետարանչաց դրուածէն յայտնի չէ.
բայց ըստ հին և ընդհանուր աւանդու-

* Յայսմաւ. (Ե Յունվ. 11):

թեան ամենայն եկեղեցեաց և վարդապետաց՝ համարի՝ թէ եղած է Օռաբօր լեռնումը*, որ Գալիլեայի սահմանումն էր։
Ճ. Խոչվես եղեւ։

Պ. Երբ որ Յիսուս յաղօթս կայլ՝ յանկարծնորա երեսքն պայծառացան լուսաւորեցան արեւու պէս, և հանդերձքն ձիւնանման սպիտակացան և փայլուն եղեն։

Ճ. Այն տեսլեան մէջ այլ մարդիկ ևս երեւցան։

Պ. Այս, Սովորէս և Եղիա մարգարէքն երեւեցան փառօք, առաջինն յաջ կողմն, և երկրորդն ՚ի ձախ կողմն, և սկսան Յիսուսի հետ խօսել՝ նորա փրկարդործ չարշարանաց և մահուան վերայ, զոր կրելոց էր յԵրուսաղէմ։

Ճ. Օքնէ նշանակէր այն Սարգարէից երեւմն։

Պ. Նշանակէր, թէ Այլակերպեալն այն՝

* Ը արակ. Ա արդավ. Ե. Ը նորհ. (Կ տաղսն Վ արգավ.): Ա արդ. Ը նորհ. (Լ մեկն. բ Պետ. ճառ. բ): Յովհ. Երզն. (Լ մեկն. Վ առ. ժէ. 1):

Աստուած է կենդանեաց և մեռելոց, ա-
րարիչ և տէր է երկնի և երկրի, ըստ ո-
րում մինն (Մովսէս)՝ 'ի մեռելոց դասէն
էր, և միւսն (Եղիա)՝ 'ի կենդանեաց մինն՝
յերկրէ, և միւսն՝ յերկնից*:

♦. Առաքեալք ինչով կարացին ճանաչելը

նոսա:

Պ. Ամ լսելով զնոցա անուանքը՝ երբ որ
նոքա խօսէին Յիսուսի հետ, և կամ տե-
սանելով զՄովսէսը՝ օրինաց տախտակօք,
և զԵղիայն՝ մաշկեղէն հանդերձիւք, ինչ-
պէս տեսած էին նկարուած պատկերաց
վերայ***:

♦. Ի՞ան խօսեցա՞ն յայնժամ Առաքեալքն:

Պ. Միայն Պետրոս համարձակեցաւ Յի-
սուսին մի բան ասել յետ հեռանալոյ
անտի Մովսէսի և Եղիայի. բայց յապ-
շութենէն ինքն ևս չգիտէր՝ զի՞նչ խօսէր:

* Ե. Շնորհ. ('ի Ի՞անն հաւատ. էջ 196): Եփ-
բեմ (Խ ամաբարբ. գլ. . ժղ.):

** Յովհ. Երզն. (իմեկն. Մատ. ժէ. 3):

Ճ. Օքնչ ասաց նա:

Պ. “Ուարթի, ասաց, բարւոք է մեզ աստ լինել • արասցուք երիս տաղաւարս, միքեզ, մի՛ Առվսիսի, և մի՛ Եղիայի,,:

Ճ. Յետ այնորիկ ի՞նչ դէպք պատահեցաւ:

Պ. Լուսաւոր ամպ իջանելով հովանի եղենոցա վերայ. և ձայն ես լսուեցաւ յամպոյն “Ուարթի իմ ընտրեալ. դմալուարուք,,:

Ճ. Եռաքեալք շվախեցա՞ն յայն ձայն ձայնէն:

Պ. Եյնպէս վախեցան՝ որ իսկոյն երես ’ի վոյր անկան իբր կիսամեռք. բայց երկար չտեեց նոցա երկիւղն, որովհետեւ Յիսուքաջալերեց զնոսա ասելով. “Յոտն կացէք, և մի երկնչեք,,:

Ճ. Եյդ անցքդ շուտով հոչակուեցա՞ւ:

Պ. Ոչ. վասն զի այն երեք ականատես Եռաքեալքն առ ժամանակ մի լոեցին, և ինչ որ տեսած էին՞չ մի մարդոյ չպատմեցին:

Ճ. Ինչու համար չպատմեցին:

Պ. Եյնոր համար՝ որ ’ի միւս օրն յառաւօ-

տուն՝ երբ որ իջանէին 'ի լեռնէն՝ զայս
պատուէրս տուած էր նոցա Յիսուս.
“Մի՛ ումեք ասիցէք զաեսիլդ զայդ, մին-
չև Արդի մարդոյ* 'ի մեռելոց յարիցէ,,:

Տ. ԹՇՆԱՄԻՔ ՅԻՍՈՒՍԻ

Ճ. Յիսուս թշնամիք ևս ունէր:

Պ. Այս թշնամիք էին նմա՝ չարասէր, իա-
ւարասէր և ճշմարտութեան լոյսը առե-
ցող մարդիկ, որպիսի էին յայնժամ Ճը-
րէից մէջ քահանայք և քահանայապետք,
ծերք և աշխարհասէր իշխանք, և առա-
ւել քան զնոսա՝ Դապիրք և Փարիսեցիք:

Ճ. Այք էին Դապիրքն.

Պ. Ճըրէից օրինագետքն էին, որք և կոչէին

* Այսինքն՝ Քրիստոս, Արդին Աստուծոյ, որ մար-
մնանալով՝ մարդանալով և ծնանելով 'ի որբոյ Կուսէն՝
եղև և Արդի ճարդոյ: Աւտի նոյն Արդին մարդոյ՝ է և
կոչե ճշմարտապես Արդի Աստուծոյ, որպէս ինքն ա-
սաց. “Գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յորժամ մե-
ռեալք լսիցեն ձայնի Արդւոյն Աստուծոյ . . . Եւ զի
Արդի մարդոյ է, ը այն զի՞ զարմանայք (Հովհ. Ե. 25. 28):

Օրինականք, Օրինաւորք, Վարդապետք օրինաց:

Ճ. Փարիսեցիքն ոյք էին:

Պ. Այդու անուամբ կոչեին այն դասքն աղանդաւոր Ճըեից՝ որք 'ի հասարակ ժողովրդին բաժանուած* զոլով ոչ միայն զանազան խորանօք (սովորութեամբք)՝ այլև զգեստիւք, առաւելքան զայլս օրինապահք էին համարւում:

Ճ. Ամենեքեան նոքա առաքինի մարդիկ էին:

Պ. Ոչ. այլ՝ ըստ մեծի մասին՝ կեղծաւոր, հսկարտ, աղա՛շ, խարեբայ, մարմնասէր, փառասէր և թերահաւատ մարդիկ էին. վասն որոյ և Յիսուս շատ անզամ՝ վայտալով յանդիմանէր զնոսա:

Ճ. Վայի՞ն Ճըեից մէջ՝ հետեւողք՝ սիրողք և պատուողք Յիսուսի:

Պ. Այս, շատ բարեմիտ՝ ճշմարտասէր և երկիւղած անձինք՝ որք լսած կամ տեսած էին զՅիսուսի հրաշագործութիւնքը,

* Վասն զի Փարիսեցի անունն ծագուած է Աթերայական բառէս Գյարէս, որ նշանակէ բաժանուածն:

Հետեւելին նմա սիրով, պաշտելին զնա 'ի
սրտի, և ցանկային փառաւորել յամե-
նայն տեղ զնորա անունը:

Գ. ՀԱՆԴԻՍԱՌՈՐ ՄՈՒՏ ՔԲԵՍՏՈՍԻ
ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ճ. ԵՐԲ առաւել հռչակեցաւ Յիսուսի ա-
նունն Ճրէից մէջ :

Պ. ԵՐԲ որ նա իշոյ և յաւանակի վերայ*
նստած 'ի Աեթանիայէ յԵրուսաղէմ
գալով ցնծալից աղաղակաւ անթիւ բազ-
մութեան՝ որք յառաջոյ և զկնի երթային
մտաւ 'ի քաղաքը:

Ճ. Օչշը և զյաւանակը ոյք բերին նմա:

Պ. Կորա աշակերտաց երկուքն, որք ըստ

* Այսինքն՝ նախ իշոյ վերայ, և ապա յաւանակի.
որպէս զրէ Յովհ. վ. Երզնկացի (Շ մեկն. Վատ. ին
7). “Օտոաջինն նստաւ 'ի վերայ իշոյն՝ մինչ 'ի դուռն
Երուսաղէմի. և ապա յիշոյ անտի իջեալ՝ նստաւ 'ի վե-
րայ յաւանակին”։ Բայց այլք կարծեն՝ թէ նախ
յաւանակի վերայ նստաւ, և ապա իշոյ (Տես 'ի Քա-
ռողաղիրս Տաթև. 'ի հատ. Չմեռ. էջ489):

կարծեաց մեկնչաց՝ համարին Պետրոս և
Յովհաննէս*:

Ա. Ուստի բերին:

Պ. Եղիւղէն՝ որ մօտ էր Քեթանիայի և Ե-
րուսաղէմի, որպէս պատուիրեալ էր նո-
ցա Յիսուս**:

Ա. Ո՞յք էին այն մարդիկն՝ որք ուղեկից ե-
ղեն Յիսուսի:

Պ. Կէսքն նոքա էին, որք յԵրուսաղէմէ ՚ի
Քեթանիա զնացած էին՝ ոչ միայն դՅի-
սուսը՝ այլ և զյարուցեալ Պաղարը տե-
սանելոյ համար. և կէսքն նոքա էին, որք
յայլ և այլ տեղեաց յԵրուսաղէմ եկած
էին Պատկի տօնին սպառձառաւ, և երբ

* Գրիգոր. Տաթև. (՚ի Վարովագիրսն ՚ի Հատոր.
Չմեռ. էջ նկթ. նՀզ):

** Պէտք յաւանակի հետ ՚ի միասին դտին աշակերտ-
քըն փողոցումը կապուած, ինչպէս առած էր Յիսուս
(Վարկ. առ. 4): Քայլյ թէ որոյ էին այն կենդանիքն,
Եւետարանիչքն չեն նշանակած: Վեկինչաց կարծիքն
վասն այսր՝ զանազան են. որոց հաւանականագոյնն այս
է թէ կորուսուած էին, և դառզքն բերած կապած էին
գիւղի մեջ արտաքոյ առն, որ գայ առնու տէքն (Երզն.
՚ի մեկն. Վատ. իհ. 2):

լսեցին թէ Յիսուս դայ, փափազանօք
ընդ առաջ ելին:

Ճ. Խնչով յայտնեցին նոքա զիւրեանց սրտի
ցնծութիւնը:

Պ. Արմաւենի և ձիթենի ոստեր ՚ի ձեռս
բռնած ունելով, որ նշան էր մեծի ցըն-
ծութեան, ըստ հին սովորութեան Ճ. ը-
րեից*:

Ճ. Այլ ի՞նչ արարին:

Պ. Շատերին զիւրեանց հանգերձքը ճանա-
պարհի վերայ տարածեցին. ոմանք ևս
ծառոց ձիւղեր սփռեցին: Եւ բաց յայս-
ցանէ, երբ որ Ձիթենեաց սարի գլուխը
հասան՝ սկսան ամենքն թէ ծեր և թէ
տղայ մեծաձայն և ստեղպ ստեղպ աղաղա-
կել. “Ովսաննա Բարձրելոյն. Ովսաննա
՚ի Բարձունս. Ովսաննա Որուոյ Դաւ-
թի, օրհնեալ որ գասդ յանուն Տեառն,
թագաւորդ Խորացէլի,,:

Ճ. Օ.ի՞նչ նշանակէ Ովսաննա բառդ:

Պ. Այս բառս յԵրրայական լեզուի նշանա-

* Տես ՚ի զիւրս բ Աշակ. ժ. 7:

կէ “Փրկէս կամ իւցն զմշն”, և կամ “Փը-
կու-նէն ՚է բարյանց, բայց ըստ գործա-
ծութեան՝ համարի լոկ ճայն ուրախական,
իբրև Միջարկութիւն:

♦. Յիսուսի հետ եկող ամբոխի մէջ չկայի՞ն
և այնպիսի անձինք, որք հակառակ և
թշնամի էին նմա:

Պ: Կային ոմանք ’ի Փարիսեցւոց, որք գնա-
ցած խառնուած էին այն ամբոխի մէջ ոչ
թէ զՅիսուսի դալուսոր փառաւորելոյ
համար, այլ՝ միայնզցնծութեան հանդէսը
խափանելոյ համար:

♦. Օի՞նչ արարին նոքա՝ երբ որ Ովսան-
նայի ճայնքն բարձրանում էին անդադար:

Պ. Մօտենալով Յիսուսի՝ ասցին մեղա-
դրանօք. “Ա արդապետ, սաստեա աշա-
կերտացդ քոց, : Եւ պատասխան լսեցին
՚ի նմանէ զայս մարդարէական կարծ խօս-
քըս. “Ասեմ ձեղ՝ եթէ դոքա լուսցեն,
քարինքդ աղաղակեսցեն*, :

* Բատ մեկնելոյ վարդապետաց, մարդարէութիւնա

Հ. Երուսաղէմի վերայ ևս մարդարէական
բան խօսեցա՞ւ Յիսուս:

Պ. Այս երբ որ հասաւ նա յայն տեղ՝ ուս-
տի երեսում էր քաղաքն, հայեցաւ նորա
վերայ, և ասաց լալով. “Երուսաղէմ Ե-
րուսաղէմ, եկեսցեն աւուրք ・・・ և պա-
շարեսցեն և նեղեսցեն զքեզ յամենայն
կողմանց (թշնամիք քո), և ոչ թողու-
ցուն քար ’ի քարի վերայ յամենայնի ’ի
քեզ, փոխանակ զի ոչ ծանեար զժամա-
նակ այցելութեան քո*,,:

Հ. Յիսուս՝ յետ մտանելոյն ’ի քաղաքը՝ ուր
գնաց և զի՞նչ արար:

Պ. Գնաց ուղղակի ’ի տաճարը, և զկաղքը

այս կատարուեցաւ յետ Յիսուսի մահուանն, երբ որ
աշակերտքն յերկիւղէ Հրէից լուռ մունջ կացին, և
վէմքն պատառուելով յերկրաշարժութենէ, և որպէս
թէ լեզուաւ աղաղակելով՝ վկայեցին նորա Աստուա-
ծութեան: Այսպէս զրեն Իգնատիոս վ. (’ի Մեկն.
Ղուկ. Ժթ. 39). և Յ. Երզնկացի (’ի Մեկն. Մատ. իա.
15. 16): Եփրեմ (’ի Համաբարբ. Պլ. Ժը):

* Այս նախագուշակութիւնս ևս կատարուեցաւ երբ
որ Երուսաղէմ հանդերձ տաճարաւ կործանուեցաւ ’ի
Հոռվայեցւոյ զօրացն յամի Տեառն 70:

- և զկոյրքը, որք բազմութեամբ կային
անդ՝ բժշկեց:
- Ճ. Յայնժամ ևս ուրախութեան ձայնք լու-
ռեցա՞ն:
- Պ. Այսուհետեւ վասն զի մանր տղայքն ևս՝ որ անդ
հաւաքուած էին, սկսան չափահաս մար-
դոց պէս աղաղակել ուրախութիւն. “Ո՛վ-
սաննա, օրհնութիւն Որդոյ Դաւթի,,:
- Ճ. Քահանայապետքն և դպիրքն լսեցին
զայդ:
- Պ. Այսուհետեւ լսեցին, և բարկացան ևս. բայց չը
կարողանալով զտղայոց ձայնը դադարե-
ցուցանել, գնացին ասացին Յիսուսի .
“Լսեն՝ զի՞նչ ասեն դոքա,,,: Եւ Յիսուս
զնոցա տղիտութիւնը յանդիմանելոյ հա-
մար “Միթէ դուք չէք կարդացած, ա-
սաց, զԱղմոսի բանը. “Երերանոյ տր-
դայոց և ստնդիեցաց կատարեցեր զօրհ-
նութիւն,,:
- Ճ. Երբ որ Յիսուսի այսպիսի փառօք զա-
լըստեան լուրն՝ տարածուեցաւ քաղաքի
մէջ, լսողքն զի՞նչ ասէին:

Պ. Ոմանք 'ի բարեմիտ անձանց լի՛ զարմաց-
մամբ հարցանէին միմեանց . “Ո՞վ իցէ
սա,,. և այլք ևս պատասխանէին “Ասէ
մարդարէն Յիսուս՝ որ 'ի ‘Եազարէթէ
Գալիլեացւոց,,: Խոկ Փարիսեցիք՝ լի՛նա-
խանձու և դառնութեամբ ասէին “Տե-
սանէք զի ոչինչ օգտիք . ահաւասիկ աշ-
խարհ ամենայն զկնի նորա գնաց,,:

Հ. Յո՞ր տարին և յո՞ր օրն եղեւ այդ հանդի-
սաւոր մուտն Յիսուսի յերուսաղէմ:

Պ. Եղեւ յերրորդ տարին քարոզութեան
Յիսուսի, հինգ օրով յառաջ քան ըդ
Նրէից Պասեքատօնը, յայն Միաշա-
բաթի օրն՝ զոր մեք այժմ կոչեմք ԾՕԿԱՂ-
ՀԱՂԱՐԴ, կամ ՕՐ ԱՐԲԱՇՆԵԱԿԱԳ. և կամ
Յունական բառիւ՝ ԱՐԴԻՇԱՆ, որ նը-
շանակէ ԲԱԿԵՔԱՆԵԱԼ, կամ ԾՕԿԱ-
ՂԱՐԴ:

Հ. Այնուհետեւ միշտ յերուսաղէմի մէջ
մնաց Յիսուս:

Պ. Ոչ. այլ՝ 'ի նոյն երեկոյին դարձաւ 'ի
ԲԿԹԱՆԻԱ. և յետ այնորիկ մինչ ցմառ-

նին 'ի ձեռս թշնամեաց՝ յառաւօտու
յլըրուսաղէմ զայր, և յերեկոյի կամ 'ի
բնեթանիա զնայր և կամ 'ի Զիթենեաց
լեառն:

Ճ. Յօտար ազգաց ևս՝ Յիսուսի տեսութե
փափագողք դտանուեցան յայնժամ:

Պ. Այսուհետեւ ըստ պատմելոյ Յովհաննու Աւե-
տարանչին*, երբ դեռ յլըրուսաղէմումն
էր Յիսուս***, քանի մի անձինք ազգաւ-
հենանագ***, ջերմագին փափագ ունե-
լով Յիսուսի հետ տեսնուելու՝ նախ մօ-
տեցան Փիլիպպոսի և ասացին. “Տէր,
կամիմք զՅիսուս տեսանել,,” և ապա նո-
րա և Անդրէասի**** միջնորդութեամբ
հասին իւրեանց փափագանաց:

* Պ. Ժ. Ժմ. 20—23:

** Բ ստ ոմանց՝ 'ինոյն իսկ օրն՝ յորում Յիսուս հան-
գիսապէս մտած էր յլըրուսաղէմ յաւանակաւ իշոյ:
իսկ ըստ այլոց (որ աւելի հաւանական թուի) յերրորդ
օրն, դու յերեքշաբաթու յերեկոյին:

*** Այսինքն՝ օդաբաղէիտ, ու Հըեայի:

**** Փիլիպպոս և Անդրէաս՝ Յիսուսի աշակերտք
էին՝ յերկոտասանից կարգէն:

Ն. Ե՞նչպէս:

Պ. Փիլիպպոս յետ լսելոյ զնոցա խնդիրը՝
յայտնեց Անդրէասին. երկուքն 'ի միա-
սին ծանուցին Յիսուսի: Եւ Յիսուս
ընդունելով զնոցա մարդասիրապէս՝ խօ-
սեցաւ նոցա հետ. և 'ի նոյն իսկ ժամու-
ուրախութեամբ դէպ յաշակերտքը դառ-
նալով՝ ասաց. “Եհան ժամ՝ զի փառա-
ւորեսցի Որդի մարդոյ,,:

Ն. Օ, ի՞նչ յայտնել կամեցաւ Յիսուս՝ զայդ
ասելով:

Պ. Յայտնել կամեցաւ՝ թէ իւր անունն պի-
տի փառաւորուի շուտով՝ նաև հեթա-
նոսական աղջաց մէջ. և թէ՝ արդէն իսկ
հասած է փառաւորուելոյ ժամանակն:

Ն. Ոյք էին այն երջանիկ և բարետենչ հե-
թանոսքն:

Պ. Ըստ հաստատագոյն և ընդհանուր ա-
ւանդութեան աղջիս, մեր Աբգարու՝ նա-
խահաւատ թաղաւորի հրեշտակքն (դես-
պանքն) էին, որք եկած էին յԵղեսիոյ՝

նոյն իսկ թագաւորի՝ աղաչանաց և հրա-
ւիրանաց նամակաւն առ Յիսուս*:

Գլ. Ե

ՀԵՐՄՈՒԹՅԱՆ ՄԵԼ ԵՒ ԹԵՂՋՄԱՆ
ՔՐԻՍՏՈՍԻ

Ճ. Յիսուս՝ յառաջ քան զմահն՝ յայտնած
էր աշակերտացն, թէ ինքն պիտի չար-
չարուի և մեռանի:

Պ. Այսուհետեւ, յայտնած էր շատ անդամ, բայց
երբ որ ժամանակն մօտեցաւ, զչարչարա-
նաց և մահուան օրը ևս որոշակի յայտ-
նեց՝ ասելով. “Պիտիք, յետ երկուց ա-
ւուրց Օտարիկ լինի, և Որդի մարդոյ
մատնի ’ի խաչ ելանել,,:

Ճ. Այդ գործոյդ համար խորհուրդ եղել
Նըրէից մէջ :

Պ. Այսուհետեւ, ’ի նոյն աւուրց, քահանայապետքն,

* Տե՛ս ’ի Պատմ. Խոր. գիրք Բ. ԴԼ. Լա:

դպիրքն, և ծերքն ժողովրդեան, ժողովեցան Այսիափա քահանայապետի սրբաշում, և խորհուրդ արարին՝ որ բռնեն զՅիսուս և սպանանեն:

Հ. Որոյ ձեռամբ յաջողեցաւ նոցա զիւրեանց խորհուրդը կատարել:

Պ. Յիսուսի աշակերտաց միոյն ձեռամբ, որ Յուդայի Սիմոնեան Խսկարիովացւոյ, որ մասնիչ եղեւ իւր երկնաւոր վարդապետին:

Հ. Յինչ պատճառէ անկաւ նա այնպիսի ամենամեծ մեղաց մէջ :

Պ. Յարծաթսիրութենէ. վասն զի ցանկացաւ ստանալ զերեսուն արծաթը*, զոր

* Հաւաստապէս ընդունուած է, թէ Յուդայի ըստացած արծաթն՝ այն ժամանակի դահեկան էր Հրերէից՝ չէիլ (այն է՝ «ի՞ն») անուանեալ, որ և ըստ գրելոյ Վ անական վարդապետի (՚ի Հարց.) և Ենանիայի Շիրակացւոյ (՚ի զիրսն յղ. կշո. և չափ.) Յունական բառիւ Առէնէրոն էր ասւում, որ նշանակէ արծաթն. Խսկ Երզնկացին այլ տեղեկութիւն ևս տուած է մեզ՝ այսպէս գրելով. «Անմ թէ արծաթի էր դահեկան ժամանակին, կամ պատկեր էր երեսուն արծաթի (արժէիւք), որպէս ոմանք ասեն, զոր բերին մոդք՝ Տեառն մերոյ, և

Քահանայապետքն խոստացած էին տալ
նմա՝ի վարձ մատնութեան:

Ճ. Յայտնեց Յիսուս այլոց աշակերտացն՝
թէ ինքն 'ի Յուղայէն պիտի մատնըւի:

Պ. Այս, յայտնեց երբ որ Երկուամսանէց*
հետ 'ի միասին նստած էր 'ի սեղան յա-
ռաջին երեկոյի Բաղաջանէլացն**:

Ճ. Որպիսի կերպիւ յայտնեց:

Պ. “Ասի՞ ’ի մէջ բերելով զԴաւթի մարդա-
րէութիւնը. “Որ ուտէր ընդ իս հաց՝ ա-
րար ինձ խարէութիւն (Սաղ. Է. 10),,,
և ապա զայս բանս ասելով. “Մի ոմն ’ի
ձէնջ մատնելոց է զիս,,, և ապա դարձեալ.
“Եւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ’ի
սեղանս,,:

Մարիամ ետ ընծայս տաճարին՝ յորժամ ընծայեցոյց
ղնա. զոր տեսեալ Յուղայի՝ ցանկացաւ և խնդրեաց,
և փոխանակ զվարդապետն մատնեաց, (՚ի Մեկնութ.
Մատ. յէջ 551):

* Այսինքն՝ Երկուամսան աշակերտաց, յորոց մի էր և
Յուղա:

** Այսինքն՝ Նրէից Օհարին, որ կոչէր և Պատե-
կամ Պատժա:

Ճ. Աշակերտքն չցանկացա՞ն տեղեկանալ այդ
բանիդ:

Պ. Յանկացան. բայց չհամարձակուելով ա-
ւելի բան խօսիլ՝ սկսան ամէն մէկն ահիւ-
և տրտմութեամբ մի զկնի միոյ հարցա-
նել. “Միթէ ես իցեմ, Տէր,,:

Ճ. Ի՞նչ պատասխան տուաւ նոցա Յի-
սուս:

Պ. “Որ միսեաց ընդ իս զձեռն իւր ’ի սկաւա-
ռակիդ, նա մատնելոց է զիս,,, ասաց:

Ճ. Կւելի ևս յայտնի կերպիւ ում եցոյց
Յիսուս զիւր մատնիչը:

Պ. Աերելոյն Յովհաննու՝ որ նստած էր
իւր մօտ: Վ ասն զի երբ որ նա՝ ըստ ակ-
նարկելոյն Պետրոսի՝ անկանելով Յիսու-
սի լանջաց վերայ, ասաց “Տէր, ովէ,,,
Յիսուս մեղմ ձայնիւ պատասխանեց .
“Եյն է որում ես թացից զպատառն՝
և տաց,,:

Ճ. Ում տուաւ Յիսուս զպատառը:

Պ. Յուդային տուաւ* ասելով. “Երդ որ
զի՞նչ առնելոցն ես՝ արա վաղվաղակի**,,:

Հ. Օքնչ արար յայնժամ Յուդա:

Պ. “Եախ՝ զիւր սրտի չարութիւնը ծածկելոյ
համար՝ յանդգնեցաւ զմիւս Առաքելոց
ասածը կըկնել. “Միթէ ես իցեմ, վար-
դապետ,,. բայց ապա լսելով՚ի Յիսուսէ
զայս պարզ պատասխանս “Դու ասա-
ցեր***,, դուքս ելաւ իսկոյն և գնաց:

Հ. Ո՞ւր գնաց:

Պ. Գնաց ուղղակի քահանայապետից՝ զըպ-

* Եյն պատառոյն վերայ՝ զոր Յիսուս եթաց (նը-
ջեց, նախախեց) և տուաւ Յուդային, այլեւայլ են Մե-
կընչաց կարծիքնու Ամանք ասեն՝ թէ ջրովթրջեց, և
այլք՝ թէ ժինուու (Խփր. ’ի Համար. գլ. ժթ. Խղն. ’ի
Մեկն. Պուկ. գլ. իբ. Խրզն. ’ի Մեկն. Մատ. յէջ
555): Ան ևս ասողք՝ թէ սկաւառակին (կերակրոյ
ամանին) մէջ թաթախեց.

** Տմէինչ մտօք ասաց Յիսուս զայս բանս՝ չիմա-
ցան միւս Առաքեալքն: Ամանք կարծեցին՝ թէ Յի-
սուս պատուիրեց Յուդային որ երթայ ինչ որ Օաս-
կի տօնին համար հարկաւոր էր, կամ թէ՝ աղքատաց
ողորմութիւն տայ (Յովհ. ժդ. 28. 29):

*** Այսինքն. “այս, այդպէս է որպէս ասացեր,,:

ըաց և իշխանաց մօտ, զիւր վարդապետը
'ի ձեռս նոցա մատնելոյ համար:

Ճ. Այսուհետև զի՞նչ արար Յիսուս:

Պ. Ակսաւ զվերջին պատուիրանքը սիրոյ և
համբերութեան վերայ, ևս և զիսորագոյն
վարդապետութիւնքը Առւրբ Երրորդու-
թեան վերայ, աւանդել մետասան աշա-
կերտացն. և յետ այնորիկ նոցա հետ 'ի
միասին գնաց 'ի պարտէզն Գեթսեմանի
գիւղի*:

Ճ. Ի՞նչպէս կատարեց Յուղա զիւր չար
կամքը:

Պ. Մինչ դեռ նոյն պարտիզումն էր Յիսուս՝
և աղօթէր, եկաւ նա յայն տեղ՝ Ճրէից
ամբոխի և Ճռովմայեցի զօրականաց
հետ, և մօտենալով Յիսուսին՝ մատնեց
զնա իւր տուածնշանովն***, ֆր՝ համբու-
րելով և ասելով. “Ո՞ղջ եր վարդապետ,,:

* Այս գիւղս՝ Ձիթենեաց լերին ստորոտումն էր
յայն կոյս ձորոյն Աեղբովմի. և պարտէզն՝ մօտ էր գիւ-
ղին (Մատ. իղ. 36: Յովհ. ժը. 1):

** “Տուեալ էր նշան մատնշին՝ և ասեր. ընդ որում

- Ճ. Գիտէր ուրեմն Յուղա՝ թէ Յիսուս
պարտիզի մէջն էր։
- Պ. Եյ՞. վասն զի սովոր էր Յիսուս շատ
անդամ գնալ յայն տեղ հանդերձ աշա-
կերտօքն՝ աղօթելոյ համար։
- Ճ. Օյնչ ասաց Յիսուս Յուղային՝ երբ
որ նա համբուրեց զինքը։
- Պ. “Ընկեր, ասաց, վասն որոյ եկիրդ. համ-
բուրելով մատնես զՈրդի մարդոյ։
- Ճ. Եմբոխին զի՞նչ ասաց։
- Պ. “Օ՞ խնդրէք,, ասաց։ Եւ մինչ յայտ-
նեցին՝ թէ զՅիսուս Կազովրեցին խընդ-
րեն, ասաց համարձակապէս. “Ես եմ։
Երդ՝ եթէ զիս խնդրէք, թոյլ տուք դո-
ցա (ց՝ աշակերտացդ իմոց) երթալ,,։
- Ճ. Որպիսի անցք պատահեցաւ յայնժամ։
- Պ. Երբ որ Յիսուս “Ես եմ,, ասաց, այն-
պէս սարսափ ու դող անկաւ ամբոխին
վերայ, որ ամենքն յետ յետ քաշուելով։

Ես համբուրեցից՝ նա է, կալջիք զնա և տարջիք զգու-
շութեամբ (Վարկ. Ժդ. 44):

զետնին զարկուեցան, ինչպէս և նոցա ա-
ռաջնորդն՝ Յուղա:

Հ. Վասն էր այդպիսի զօրութիւն ցոյց
տուաւ յայնժամ Յիսուս:

Պ. Վասն այն՝ որ իմանան ամենքն, թէ ինքն
Աստուած հզօր է և ամենակարող. և
թէ կամաւ անձնատուր է լինում իբրև
տկար մարդ*:

Հ. Երբ որ զայդ տեսին Առաքեալքն՝ զի՞նչ
արարին:

Պ. Կարծելով՝ թէ առանց դժուարութեան
կարող են թշնամեաց դէմ գնել, ասա-
ցին Յիսուսի. “Տէր, հարցուք զնոսա
սրով,,,: Պետրոս և՛ որովհեաւ սուր ու-
նէր, զարկաւ կտրեց այնու զՄաղքոսի**
աջ ականջը:

* Եփրեմ (՚ի Համաբ. Գլ. Է): Տարսեղ Շնն (՚ի
Մեկն. Մարկ. Գլ. ԼՂ):

** Մաղքոս՝ Արյիավա քահանայապետի ծառայն
էր: Առա համար ասեն ոմանք, թէ յետոյ քրիստոն-
եայ եղեւ. բայց անհիմն զրոյց է: Հասարակեալ կար-
ծիք է մեր վարդապետաց, թէ սա՝ այն 38 ամեայ ան-
դամալոյծնէ՝ զոր բժշկած էր Յս ’ի սրահին Բեթհեղ-

Ճ. Յիսուս հաւան էր այնպիսի մըտա-
ծութեանց նոցա և արարմանց:

Պ. Ո՞չ. ուստի զՊետրոսը յանդիմանեց. ըզ
Մաղքոսի ականջո բժշկեց. և աշակեր-
տացն ասաց. “Թռոյլ տուք ցայդ վայր,,
(ը՝ դադարեցէք. բաւական է ինչ որ ե-
ղել):”

Ճ. զՊետրոսը որպիսի բանիւք յանդիմանեց:
Պ. “Արէ, ասաց նմա, զսուրդ անդրէն ՚ի
պատեանս իւր. զըաժակն (չարչարանաց

գայ. և թէ՝ սա ի՞նքն է որ յետոյ յանդղնեցաւ ապ-
տակ ևս տալ իւր Բժշկողին՝ Աննա քահանայապետի
ատեանում (՚ի Յայսմաւ. Վարտի 22: Ա անակ. վ.՝ ՚ի
արց: Երզնկ. ՚ի Վեկն. Վատ. յէջ 574): Եւ որով-
հետեւ կրկին մեղանչեց սա ապերախտութեամբ ընդ-
դէմ խրատուն՝ զոր յետ բժշկութեան տուած էր նմա
Յն, “Ահաւադիկ ողջացար, մի ևս մեղանչեր, զի մի չար
ևս ինչ լինիցի քեզ” (Յովհ. Ե. 14), այնու պատճա-
ռաւ Գ. “Արեկացին կոչում է զնա իրին ներահանառ
(՚ի Արեկն. գլ. ծը). և մեր Առորք եկեղեցին՝ բանիւ
Հնորհալոյն յոյժ պատշաճապէս երդում է. “Յայն-
ժամ առ գութ սիրոյն Պետրոս, ըզծառային անուն
Վաղքոս, եհատ սուսերբ զականջն աջոյ, որ ոչ լըւաւ
Տեառն իւրոյ” (՚ի Ժամագիրս):”

և մաշու) զոր ետ ինձ ։ այր՝ ոչ ըմբ
պիցեմ „*:

Ն. Ուրեմն և ինքն ըսնդդիմացա՞՝ երբոր կա-
մեցան բռնել և կապել զնա:

Պ. ԱՌ. այլ միայն զայս ասաց իւր վերայ ե-
կողացն. “Եթե ՚ի վերայ աւազակի՞նէք
սուսերօք և բրօք՝ ունել զիս. հանապազ
առ ձեզ էի, և ուսուցանէի ՚ի տաճարին,
և ոչ կալարուք զիս,,:

Ն. Ո՞ւր տարան զՅիսուս՝ յետ բռնելոյ:

Պ. Տարան ՚ի քաղաք (Մ՝ յԵրուսաղէմ),
ուր և ներկայացուցին նախ Աննա քա-
հանայապետին, և ապա Այիափա ***
քահանայապետին:

* Եւ, որպէս զրէ Մատթէոս Աւետարանին (իդ.
23), զայս ես ասաց. “Թէ համարիցիս՝ թէ ոչ կարիցեմ
աղաչել զայր իմ. և հասուցանիցէ ինձ այժմ այսր,
աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց: Այլ
զիարդ ընուցուն Գիրք՝ եթէ այսպէս պարտ է լինել”:

** Այիափայն՝ վեսայ էր Աննայի, կամ (որպէս Յով-
հաննէս Աւետարանին զրէ), Աննայն՝ անե՛ր էր Այի-
ափայի: Առքա երկու ազգականքս, երբեմն ՚ի միասին
էին վարում դքահանայապետական իշխանութիւնը,
որպէս Յովհաննու Մկրտչի քարոզութեան առաջին

Ճ. Աննա քահանայապետն ի՞նչ հարցմունք
արար Յիսուսի, և Յիսուս ի՞նչ պա-
տասխան տուաւ նմա:

Պ. Հարցմունք արար՝ նորա աշակերտաց և
վարդապետութեան վերայ: Եւ Յիսուս,
յետ յայտնելոյ՝ թէ ինքն հրապարակաւ
աւանդած է զիւր վարդապետութիւնը՝
քարոզելով ժողովրդեան և տաճարի մէջ,
“Օ, Ի՞ հարցանես զիս, ասաց, հարց զոյ-
նոսիկ՝ որք լուանն ... նոքա դիտեն՝ զի՞նչ
խօսեցայ,,:

Ճ. Այլ բան չասաց Աննա՝ Յիսուսի տու-
ած պատասխանւոյն դէմ:

Պ. Ոչ՝ բայց մին ՚ի սպասաւորաց, որ անդ
կայր*, ապտակ տալով Յիսուսի երեսին՝

տարումը (Պ. ուկ. գ. 2), և երբեմ առանձին՝ փոփոխ
կարգաւ, ց՝ մի տարի մինն, և մի տարի միւսն: Այս
տարի մինչ ց Օատկի տօնն՝ իշխող քահանայապետ
էր Այիափայն (Քովհ. Ժը: 13). և ՚ի յաջորդ ամին,
զինի մահուան Յիսուսի՝ եղել Աննայն (Պարծ. դ. 6):

* Այս՝ ըստ ասելոյ ոմանց՝ մին էր յԱննայի ծառայից։
բայց այլք կարծեն՝ թէ Վաղքոսն էր՝ Այիափայի
ծառայն (Տես յէջ 61 ’է ծանօթ.):

ասաց. “Այդպէս պատասխանի տասքահանայապետիդ,,:

Ճ. Զզայրացմ. Յիսուս այն սպասաւորին վերայ՝ այնօրինակ յանդզնութեանը համար:

Պ. ԱՌ. այլ հանդարտութեամբ զայս միայն ասաց. “Եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա վասն չարին, իսկ եթէ բարի, ընդէր հարկանես զիս,,:

Ճ. Յերկան մնաց Յիսուս յատենի անդ Աննայի:

Պ. ԱՌ. այլ շուտով ուղարկուեցաւ կապանօք առ Կայիափա, որ նոյն տարւոյն՝ իշխանութիւն վարող՝ քահանայապետն էր*, և (ըստ կարծելոյ ոմանց) բնակում էր ’ի տան իւր աներոջ՝ Աննայի**:

Ճ. Երբ որ զՅիսուս հանեցին յատեանն

* Աս այնչափ թշնամի էր Յիսուսի, մինչ զի այլ անդամ ես՝ երբ որ լսեց՝ թէ “Այրն այն (Յիսուս) բազում նշանս առնէ,,, իսկոյն խորհուրդ տուաւ ըրեկից սպանանել զնա (Յովհ. Ժ. 47—50: Ժ. 14):

** Տես յԵկեղ. Պատմ. տպ. ’ի Վ Ենեա. յէջ 36:

- Այլափայի, այլ մարդիկ ևս կային անդ:
- Պ. Այսուհետով ժողովուած էր անդ մեծ բազմութիւն քահանայից՝ դպրաց և ծերոց. կային անդ և պատրաստուած սուտ վըկայք՝ հակառակ Յիսուսի:
- Հ. Սուտ վկայքն կարացին տալ այնպիսի վկայութիւն, որով կարելի լինէր զՅիսուս՝ յանցաւոր և մահապարտ ցուցանել:
- Պ. Ոչ. վասնզի խառն 'ի խուռն էին 'նոցաբանքն և միմեանց հակառակ, այնպէս՝ որ Յիսուս ևս հարկ չհամարեցաւ պատասխան տալ 'նոցա*:
- Հ. Կոչուպէս ուրեմն Հրեից Ատեանն կարողացաւ 'ի մահ դատապարտել զՅու:

* Երկուքն 'ի սուտ վկայից ասացին. «Վեք լուաք 'ի դմանե զի ասէր. Ե՞ս քակեցից զտաճարդ զայդ յետուրդ, և զերիս աւուրս շինեցից այլ առանց յետուրդ» (Վարկ. ժղ. 58): Բայց այս վկայութիւնս յայտնի յաւելուածով զբարտութիւն էր. վասն զի Յիսուսի ասած խօսքն այնպէս չէր, այլ՝ այսպէս. «Քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա» (Յովհ. բ. 19):

¶ · Այիսակա հարցումն արար Յիսուսի.

“Դու ես Քրիստոս՝ Որդի Կոտուծոյ
օրհնելոյն,,: Եւ որովհետեւ պատասխան
լսեց “Դու ասացեր,, , զայս բանս՝ հայ-
հոյութիւն համարելով նա, պատառեց
զիւր պատմուծանը*. և առժողովականսն
դառնալով ասաց. “Օի ես պիտոյ են
մեզ վկայք. ահա արդ լուայք զհայհոյ-
ութիւն դորա: Օինչ հաճոյ է ձեզ,,:
Եւ նոքա իսկոյն պատասխանեցին. “Մա-
հապարտ է,,:

♦ · Յետ այդպիսի վճռահատութեան ժողո-
վոյն՝ որոց յանձնուեցաւ Յիսուս:

¶ · Յանձնուեցաւ պահապան զինուորաց և
սպասաւորաց, որք առին տարան զնա ’ի
ստորին գաւիթը, և անդ սկսան չարչա-

* Պատմուծան կամ հանդեմ պատառելոյ սովորու-
թիւնն կայր Նրեից մեջ ’ի վաղուց անտի. զոր առնեին
նոքա՝ կամ ’ի նշան սգոյ և տրտմութան, և կամ ’ի նը-
շան սարսափելոյ յԱստուածքնդդեմ դործոյ կամ ’ի
հայհոյութենէ (Տե՛ս ’ի Կօննդ. լէ. 29. 34: դ Խաղ.
ժա. 30: Գործ. ժղ. 13):

ըել զնա՝ նախատել և թշնամանել մինչեւ
յառաւօտ:

- Ճ. Ի՞նչպէս չարչարում էին:
Պ. Ոմանք լրբարար թքնում էին յերեսն,
ոմանք ապտակ էին ածում, ոմանք դրւ-
խին վերայ ձորձ (լոր) ձգելով՝ կռփում
(բանցի ծեծում) էին, և ծիծաղելով
ասում էին. “Մարգարէաց մեզ, Վրիս-
տոսդ, ով եհարն զքեզ,,,:
Ճ. Յայս միջոցիս ուր էին այն աշակերտքն
Յիսուսի՝ որք փոքր մի յառաջնորա հետ
էին Գեթսեմանոյ պարտիզումը:
Պ. Միայն երկուքն 'ի նոցանէ (յու Պետրոս
և Յովհաննէս) Յիսուսի ետևէն զալով
մտած էին 'ի գաւիթ քահանայապետին.
իսկ այլքն փախած ցրուած էին յերկիւ-
ղէ:
Ճ. Պետրոսի և Յովհաննու ի՞նչպէս յաջո-
ղեցաւ մտանել 'ի գաւիթ քահանայապե-
տին:
Պ. Յովհաննէս ծանօթ դոլով քահանայա-
պետին՝ նախ ինքն Յիսուսի հետ 'ի միա-

սին մտաւ համարձակ, և ապա դոնա-
պանուշւոյն չետ խօսելով, զՊետրոսը
և՝ որ գաւթի դրսի կողմումն էր մնա-
ցած, ներս մտցրնել տուաւ:

♦. Որպիսի փորձութիւն պատահեցաւ անդ
Պետրոսի:

¶. «Եա կորուսանելով յերկիւղէ զառաջին
քաջասրտութիւնը՝ բայց ոչ և զհաւատը,
յառաջ քան զերկրորդ աւախօսը*՝ ե-
րեք անգամ ուրացաւ լեզուաւ՝ այլ ոչ և
սրտիւ՝ զՅԱ, ըստ կանխասացութեան նո-
րա**:

♦. Որպէս եղեւ այդ անցքդ:

¶. Երբ որ դոնապան աղջիկն (որ քահա-

* Այսինքն՝ յառաջ քան զաքաղաղի երկրորդ ան-
գամ կանչելն, որ լինի յետ կէս գիշերի՝ մօտ յարշա-
լոյն:

** Քիսուսի կանխասացութիւնն՝ զոր կրկին անգամ
ասած էր Պետրոսին (նախ ՚ի վերնատան, և ապա ՚ի
ճանապարհի՝ երբ որ գնում էին ՚ի Շիթենեաց լետոն
կամ ՚ի գիւղն Պահթանմանի) այս է. “Յայսմ գիշերի՝
մինչև հաւու խօսեալ իցէ երկիցս՝ երիցս ուրասցիս
զիս” (Մարկ. ԺՂ. 30. 72: Տես և Մատ. իղ. 34: Պուկ.
իր. 34: Յովհ. ԺՂ. 38):

նայապետի աղախինն էր), և այլք ևս
հետ զհետէ հարցին նմա*, թէ “դու ևս
յաշակերտաց Յիսուսի ես,, , նա ուրա-
ցաւ երդմամբ, և ասաց թէ “չեմ ’ի նո-
ցանէ, ոչ գիտեմ զայրն,, :

Ա. Յետոյ քաւեցան նա յայդ մեղացդ:

Պ. Այսու վասն զի յետ երկրորդ ուրացութեն,
լսելով զհաւու (աժառազնի) երկրորդ ան-
գամ խօսելը, և նոյնժամայն ևս հանդի-
պելով Յիսուսի հեզիկ հայեցուածոյն,
յիշեց զնորա կանխասացութիւնը. իմա-
ցաւ թէ մեղանչած է ընդդէմ սիրոյն՝ զոր
խոստացած էր**. զղջացաւ ’ի սրտէ, և
արտասուեց դառնապէս. որով և արժա-

* Մին ’ի հարցանողաց՝ ազգական էր այն սպասա-
ւորին, զորոյ ականջը կտրած էր Պետրոս (Յովհ. Ժը.
26):

** Վասն զի երբ որ ասաց Յիսուս Կռաքելոց թէ
“Կմենեքին դայթակղելոց էք յինէն յայսմ գիշերի,
Պետրոս ոչ միայն ընդ այլ Կռաքելոց խոստացած էր
չգայթակղիլ, այլ և յանձնապաստանութեամբ ևս
պնդում էր թէ “Եթէ մեռանել ևս հասանիցէ (ինձ)
ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց” (Մարկ. Ժդ. 31):

Նի եղեւ թողութեան*:

Հ. Մատնիչ Յուղայն ի՞նչ եղեւ:

Պ. Կամ՝ ընդհակառակն՝ ոչ ՚ի սրտէ՝ այլ իբր
ակամայ զղջալով, ոչ առ մարդացեալն
Աստուած՝ առ ամենողորմ վարդապետն
իւր Յիսուս, այլ առ մարդիկ միայն ցու-
ցանելով զիւր զղջումնը, չկարողացաւ
արդարանալ, և կորեաւ ըստ հոգւոյ և
ըստ մարմնոյ**:

Հ. Ի՞նչպէս եղեւ այդ:

Պ. Եթր որ տեսաւ Յուղա՝ թէ Յիսուս չա-
զատեց զիւր անձնը ՚ի թշնամեաց (որ-
պէս ինքն էր կարծում), այլ կամաւ ՚ի
մահ պիտի մատնուի՝ ըստ իւր կանխա-
սացութեան, դարձոյց առ քահանայա-

* Յայս միտսերգէ մեր Ա. Եկեղեցին.

“Եշանակեալ հաւըն խօսէր,
Առ ՚ի Պետրոս Տէրն ակնարկէր.
Օքանըն յիշէր, դառն արտասուէր,
Դ գլորմանէն դարձեալ կանգնէր”:

(՚է Ժամանէր):

** Գարիզ. Կարեկ. (՚ի Կարեկ Գլ. իէ): Խարս. Շոն
(՚ի Մեկն. Մարկ. Գլ. լղ):

պետս և առ ծերս ժողովրդեան զմատնութեան վարձը՝ զերեսուն արծաթը, ասելով “Արեղայ՝ զի մատնեցի զարիւն արդար,,,: Եւ որովհետեւ նոքա “Արեղ չէ փոյթ, դու գիտես,, ասացին, այն պատճառաւ և Յուղա բարկանալով՝ ձգեց զարծաթը տաճարի մէջ, գնաց յուսահատ մոօք ’ի տուն, կախեց զինքը չուանաւ՝ և խեղդուեցաւ*:

Հ. Վահանայապետքն առին զՅուղայի յետ դարձուցած արծաթը:
Պ. Առին, բայց որովհետեւ արեան դին. էր՝

* Կարծեն ոմանք՝ թէ Յուղա կախած է զինքը ոչ տան մէջ՝ այլ դաշտումը թղենի ծառէ, բայց այս կարծիքս հաւանելի չէ իմաստուն մեկնչաց: Ա. Առաքեալն Պետրոս՝ Յուղայի կորստեան վերայ խօսելով՝ զայս ևս յայտնէ թէ “Ուռուցեալ հերձաւ ընդ մէջ և հեղաւ ամենայն փոր նորա,, (Գործ. ա. 18): Եւ Ա. Ա. վրեմ գրէ. “Չոգաւ (Յուղա) խեղդ արկաւ և հեղձաւ . . . Իբրև հատաւ չուանն խեղդի նորա, անկաւ ինքն և հերձաւ ընդ մէջ: Խակ այլք ասեն. զդուրս փակեաց և պրտեաց ’ի ներքոյ. մինչև նեխեցաւ և հեղաւ ամենայն փորն նորա, ոչ ոք երաց զդուրս տանն հայելոյ ’ի ներքս (’ի Համար. գլ. ի):

չկամեցան տաճարի գանձանակի մէջ ձը-
գել. “Ոչ է արժան, ասացին, ընդունել
զայդ ’ի կորբանն, քանզի զինք արեան
են,,:

Ճ. Յի՞նչ պիտոյացուցին ուրեմն զայն ար-
ծաթը:

Պ. Ճասարակաց հաւանութեամբ գնեցին
այնու մի բրտի աղարակ՝ Երուսաղէմի
հարաւակողմումը՝ օտարականաց գերեզ-
մանատեղի շինելոյ համար*: Որոյ վասն
և այն աղարակն կոչուեցաւ այնուհետեւ
Եսորւոց բառիւ Եւեղդանա, որ նշանա-
կէ Գրեօդ արքան (Գրոք. թ. 19), կամ
Եժարքակ արքան (Մատ. իԵ. 8):

Ճ. Ո՞ր տեղ թաղուեցաւ Յուղայի մարմինն:

Պ. Եւետարանին զայդ չէ նշանակած. բայց
որովհեաև օտարական էր Յուղա (ըստ

* Ըստ գրելոյ Մատթէոսի Եւետարանի (իԵ. 9)
կատարեցաւ այսու Երեմիայ մարդարէի կանխասացու-
թիւնն. “Եսին զերեսուն արծաթին զգինս վաճառե-
լոյն, զոր արկին յորդոցն Խարայէլի, և ետուն զնա յա-
գարակն բրտի,,:

որում չեր յԵրուսաղեմէ*), հաւանաբար կարծըւում է՝ թէ թաղուած է նոյն իսկ օտարականաց հագստարանումը:

Ճ. Ճըսայք երբ ՚ի զործ դրին զՅիսուսի սպանման վճիռը՝ զոր արարեալ էին յատենի Այիափայ քահանայապետին:
Պ. Ի միւս օրն (ֆ՝ յԱւրբաթու՝ որ Օատկի օր էր, և լուսնի 14), յետ տանելոյ

* Յուղայի հայրենիքն կամ ծննդեան և սննդեան տեղն՝ ստոգիւ յայտնի չէ: Ոմանք ասեն՝ թէ էր նա յԻսիաքէստ գիւղէն՝ որ Եփրեմի (Յովսէփայ երկրորդ որդւոյ) ցեղի երկրումն էր՝ Ամամարիա քաղաքի մօտ: Ոմանք ես կարծեն՝ թէ էր ՚ի Աստիօն քաղաքէն՝ որ Յուղայի (Յակոբայ չորրորդ որդւոյ) ցեղի վիճակումն էր. որոյ վասն կոչուեցաւ, ասեն, յահաքէստացէ, ֆ՝ այր ՚ի Աստիօնայ, ըստ որում իս, կամ ըստ Արաբական հնչման՝ ինս (յորմէ՝ ինսան), Եբրայեցւոց լեզուում նըշանակէ այր կամ մարդ, և Իս – Աստիօն՝ նշանկէ այր ՚ի Աստիօնայ: Իսկ այլք համարին՝ թէ յԻսաւարայ (Յակոբայ իններորդ որդւոյ) ցեղէն լինելոյն պատճառաւ՝ կոչուած էնա յահաքէստացէ, իբր թէ յասաւարայ (տես ՚ի Քառար. յատ. անուանց): Ա երջին կարծիքս այնքան հաւանական չէ երեւում, որքան առաջինքն:

զՅիսուս կապանօք առ Պիղատոս Պոն-
տացի*:

Ճ. Յոր ազգէ էր Պիղատոս, և ի՞նչ պաշ-
տօն ունէր:

Փ. «Եա՛ ազգաւ Նովմայեցի էր (Հեթա-
նոս), և Դատաւոր (Առավալիչ) կար-
գուած էր 'ի Տեքերիոս կայսերէն Նով-
մայեցւոց՝ իբր չորս տարւով յառաջ՝
զինի Ապղերիոսի Գրատոսի:

Ճ. Ի՞նչ էր պատճառն՝ որ Նրէայք հար-
կեցան զՅիսուս հանել յատեանն Պի-
ղատոսի:

Փ. Պատճառն այն էր՝ որ յայն ժամանա-
կում Նրէայք ընդտէրութեամբ Նով-
մայեցւոց լինելով, իրաւունք չունէին՝
ինքնիշխանաբար առանց Դատաւորի
հաւանութեան՝ մարդ սպանանելու, որ-
պէս և ինքեանք իսկ խոստովանեցան՝ ա-

* Պոնտացի կոչւում էր առ ՚ի պատճառս լինելոյն ՚ի
Պոնտէայ կամ Պոնտոս կղզւոյն Խտալիոյ, որպէս գրէ-
մեր Յովհաննէս Առնական վարդապետն (՚ի Նարց-
մունս):

սելով . “ԱԵՂ ոչ է արժան սպանանել
զոք” (Յովհ. ԺՂ. 31):

Հ . Ո՞րպիսի ամբաստանութիւնք արարին
նոքա առաջի Պիղատոսի:

Պ . “Եոցա բոլոր ամբաստանութիւնքն՝ այս
երեքս էին

Թ . Յօհէ թիւրիչ (մոլորեցուցիչ) է
ազգին:

Բ . Յօհէ հակառակ է Ապյսեր, և ար-
դելում է հարկ տալ նմա:

Գ . Յօհէ զինքը անուանում է Քրիս-
տոս (Օծեալ) Յմագաւոր:

Հ . Հաւատաց Պիղատոս այդ չարախօսու-
թեանցդ:

Պ . Ո՛չ . Վասն զի հասկացաւ՝ որ քահանայ-
ապետքն առ նախանձու մատնած էին ըզ
Յիսուս . բայց կամելով միայն երրորդ
ամբաստանութեան վերայ հաւաստի տե-
ղեկութիւն ստանալ, մի հարցումն արար
Յիսուսի:

Հ . Օքնչ հարցումն արար, և զինչ պա-
տասխան լսեց :

Պ. “Դու ես, ասաց, թագաւորն Նրէից,,:
Եւ Յիսուս՝ նախ համառօտիւ պատաս-
խանեց. “Դու ասես,, (ք” “այս թագա-
ւոր իմ,,), և ապա զըանի միտքը բացա-
յայտելոյ համար՝ ասաց. “Խմ արքայու-
թիւն չէ յայսմ աշխարհէ. Եթէ յաշխար-
հէ աստի էր արքայութիւնն իմ, սպա-
սաւոքն իմ մարտնչէին արդեօք, զե մի
մատնեցայց Նրէից,,:

Հ. Պիղատոս երբ որ զայդ խօսքերդ լսեց՝
զի՞նչ վկայութիւն տուաւ Յիսուսի հա-
մար:

Պ. Ա կայեց յայտնապէս նորա անմեղութեր՝
ասելով. “Չգտանեմ ինչ զնաս յառնս
յայսմիկ,,. բայց որովհետեւ լսեց ևս՝ թէ
Գալիլեացի է նա, հրամայեց զինուորաց
տանելզնա կապանօք առ Ներովդէս Ան-
թիպաս՝ որ Գալիլեա գաւառի Շորրոր-
դապետն էր*, և յայն օրերում պատճա-
ռաւ ինչ յերուսաղէմ էր եկած:

* Ամէ՛ որ զՅովհաննէս Ակրտիչը զլխատել տու-

Հ. Խոչնպատակ ունէր Պիղատոս՝ որ ըզ
Յս ուղարկեց յատեանն Ներովդէսի:
Պ. Կորա նպատակքն յայս գործումս՝ եր-
կու էին. մի՛ որ առիթ տայ Ներովդէսին՝
իւրեան հետ հաշտուելու, որովհետեւ
մինչև յայն օրն նոքա թշնամիք էին մի-
մեանց*. և միւս՝ որ Յիսուսի գատա-
տանն Ներովդէսի վճռով վերջանալով՝
ինքն ազատուի յայն անիրաւ գատավը-
ռէն՝ զոր պահանջում էին Նրէայք վա-
սըն Յիսուսի սպանման:

ած էր, և նստեր յիւրաշէն Տիբերիա քաղաքումը՝ որ
Գալիլեացւոց ծովեղերումն էր:

* Այսա թշնամութեան պատճառ՝ ըստ կարծելոյ ո-
մանց՝ եղեւ Յովհաննու Ակրտչի մահն. վասն զի Նե-
րովդէս սպանել տուաւ զնա առանց իրաւանց, ըստ ո-
րում չէր նա 'ի Գալիլէէ՝ այլ 'ի Նրէաստանէ, որ էր
ընդ իշխանութեամբ Պիղատոսի. և Պիղատոս բար-
կանալով առ այս՝ կոտորել տուաւ անգամ մի զայն
հպատակքը Ներովդէսի՝ որք յԱրուսաղէմ եկած
էին՝ տաճարումը զոհ մատուցանելոյ համար: Երեսում
է այս և յԱւետարանի բանէն “Եկին ոմանք 'ի նմին
ժամանակի, և պատմեցին նմա (Յիսուսի) վասն Գա-
լիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ
զոհսն նոցա” (Պուկ. Ժկ. 1):

Հ. Արքաց նա հասանել այդ նպատակներիդ:

Պ. Եռաջին նպատակին հասաւ, ըստ որում
Ներովդէս նոյն օրում բարեկամացաւ
դարձեալ նորա հետ*: Խակ երկրորդ նը-
պատակին չկարաց հասանել:

Հ. Ասմ էր:

Պ. Ասմ այն՝ որ Ներովդէս թէւ 'ի սկզբան
անդ երբ տեսաւ զՅիսուս՝ յոյժ ուրախ
եղեւ, բայց ապա արհամարհեց (նախա-
տեց), այսպանեց (ծաղլը արագ) զնա հան-
դերձ իւր զօրականօքն, և վերայն սպի-
տակ վերարկու ձգել տալով իրրեւ անու-
ամբ միայն և սուտ թագաւորի՝ դարձոյց
վերստին առ Պիղատոս՝ առանց վճիռ
տալոյ:

Հ. Ի՞նչ էր պատճառն՝ որ Ներովդէս ար-
համարհեց և այսպանեց զՅիսուս:

Պ. Պատճառն այն էր՝ որ Ներովդէս շատ
հարցմուքներ արար Յիսուսի, և ցան-

* Օք զրեւ Եւետարանին. “Եւ եղեն բարեկամք
Պիղատոս և Ներովդէս յաւուր յայնմիկ (Պատկ. իդ.
12):”

կայրոր նա իւր առաջեւես նշան (հրաշ) գործէ, բայց Յիսուս ոչ հարցմանցը պատասխան տուաւ, և ոչ ցանկութեանը կատարող եղեւ:

—

Ճ. Յետ այնորիկ այլ հնարք 'ի գործ դրան
Պիղատոս՝ Յիսուսի ազատութեան համար:

Պ. Եյ՞ս: Առվորութիւն էր Հրեից 'ի Օատկի տօնին կալանաւոր մի արձակել 'ի յիշատակ ազատութեան իւրեանց յԵղիպտոսէ: Կայր յայնժամ բանտումը Յիսուսարաբրա* անուամբ մարդ մի: Պիղատոս յուսալով՝ թէ գոնէ ոմանք հաւանութիւն տան Յիսուսի ազատութեան ասաց ժողովեալ Հրեիցն. “Օ՞ կամիք յերկուց աստի՞ զի արձակեցից ձեզ, բզ

* Ե՞ր սա նշանաւոր չարագործ ոմն և աւազակ, որ և յայն օրերում մարդասպանութիւն ևս արարեալ էր քաղաքին մէջ (Տես Վատ. իէ. 16: Արակ. ժէ. 7: Գուկ. իէ. 18: Յովհ. 40):

Յեսու Քարաբբա, եթէ զՅիսուս զան-
ուանեալն Քրիստոս։ Ասմիք՝ զի արձա-
կեցից ձեզ զարքայն Նրէից,,:

Հ. Նաւանելի եղի՛ Նրէից այդ առաջար-
կութիւնդ։

Պ. Ա. Վ. վասն զի բոլոր ամբոխն զրպուելով
՚ի քահանայապետից և ՚ի ծերոց՝ սկսաւ
բարձրածայն աղաղակել։ “Քարձ զիս, և
արձակեան մեզ զՔարաբբայն,,:

Հ. Յետ այնորիկ զի՞նչ արար Պիղատոս։

Պ. Ա. Հնարք ՚ի գործ զրաւ։ Հրամայեց
զինուորաց զան հարկանել (Խաչել) ըզ-
Յիսուս, որպէս զի զայն տեսանելով
Նրէայքն՝ ՚ի գութ շարժին։ Ապա և ին-
քըն ծանուցանելով նոցա, թէ Ներով-
դէս ևս չէ գտած զՅիսուս՝ մահու ար-
ժանի, ասաց “Խրատեցից զիս և արձա-
կեցից”*։ Քայց այս հնարքու ևս զուր եւ-
ղեւ։

* ՚Իսոյն աղմկալից ժամասս եկաւ առ Պիղատոս այն
սպասաւորն՝ զոր ուղարկած էր նորա կինն՝ գաղտարար
աղաշելոյ համար որ անմեղին Յիսուսի դատապար-

Ճ. Ա. ասն էր:

Պ. Ա. ասն այն՝ որ յայնժամ Նըթայքն փոխանակ ՚ի գութ շարժելոյ՝ առաւել ևս կատաղեցան, և ամենքն միաբերան աղաղակեցին “Ես խաչ հան ՚ի խաչ հան զգա: Եթէ զբա արձակես, չես բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թագաւոր կոչէ զանձըն իւր, հակառակ է կայսեր”:

Ճ. Երբ որ լսեց Պիղատոս զայդ աղաղակը՝ զի՞նչ արար:

Պ. Առուսանելով յերկիւղէ զարդարասիրութեան հողին, և միանդամայն կասկածելով՝ թէ գուցէ Նըթայքն առ կայսրն բողոքեն և շարժեն զնորա բարկութիւնը յիւր վերայ, յօժարացաւ զնոցա կամքը կատարել, բայց յառաջ քան զիւր վեր-

առթեան մասնակից շինի: Օչյս պատմումէ Առառթեոս Աւետարանիչն՝ գրելով այսպէս. “Եւ մինչ գեռնատէր (Պիղատոս) յատենին, առաքեաց առ նա կինն իւր՝ և ասէ. Զկայ ի՞ոչ՝ քո և արդարոյն այնորիկ, զե բազում անցք անցին բնդ իս այսօր յանուրջս վասն նորա,, (իէ. 19):

ջեն վՃիռը տալը՝ մի այլ փորձ ևս փոր-
ձեց:

Հ. Օքնչարար:

Պ. Եստելով ինքն բեմի վերայ՝ Վաղացա-
տակ (Երրայեցերէն՝ Առողջանու) կոչու-
ած վանդակապատ տեղում, բերել տու-
աւ յայն տեղ զՅիսուս, և ցուցանելով
զնա Նրէից՝ Փշեայ պսակ գլխումը և կար-
միր քղամիդ հաղած, ասաց “Ե՛հա թա-
գաւոր ձեր ցձեզ”։ Օայս արար՝ կար-
ծելով թէ կարողանայ այսու ցածուցա-
նել զՆրէից կատաղութիւնը։ Բայց Նր-
էայքն առաւել ևս գաղանանալով՝ գո-
չեցին. “Եարձ ’ի մէնջ, բարձ ’ի մէնջ և
հան զդա ’ի խաչ”։ Եւ երբ որ ասաց Պի-
ղատու. “Ես զԹագաւորդ ձեր ’ի խաչ
հանիցեմ”, պատասխանեցին քահանայա-
պետքն. “Չիք մեր թագաւոր, բաց ’ի կայ-
սերէ”։

Հ. Խնչպէս ուրեմն վերջացաւ Յիսուսի
գատաստանն:

Պ. Պիղատու տեսանելով՝ թէ այնքան խօ-

սելն անօգուտ եղեւ, և թէ անհնար է այ-
նուշետեւ զխոռվութիւնը դադարեցնել,
ջուր բերել տուաւ, լուաց զձեռները այն
բազմութեան առաջեւ* և ասաց. “Քա-
ւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ,
Դոք գիտասցիք,,,: Եւ ’ի նոյն ժամու երբ
որ լսեց զըրէից աղաղակը “Արիւն գո-
րա ՚ի վերայ մեր և ՚ի վերայ որդւոց մե-
րոց,, , հրամայեց արձակել զԱրար-
բայն** , և զՅիսուս տուաւ ՚ի ձեռս նոցա
որ խաչեն:

Ն. Ո՞ր տեղ եղեւ Յիսուսի խաչելութիւնն:

* Արէից մէջ սովորութիւն կայր՝ որ երբ կամէին հը-
րաժարուիլ ՚ի մասնակցութենէ որ և իցէ անօրէն գոր-
ծոյ, լուանային ջրով զիւրեանց ձեռները , որպէս դրէ
Բարսեղ Ճոն (՚ի Մեկն. Մարկ. գլ. 17): Հոռմայե-
ցիք չունէին այսպիսի սովորութիւն: Երեխ ուրեմն՝ թէ
Պիղատոս ըստ սովորութեան Արէից արար զայս:

** Բարբաբայ անունս՝ թարգմանի ուրէ Աբբեյ ,
որպէս և Բարբինեսս անունս՝ ուրէ Տէ՛Նէ (ըստ Մար-
կոս. Ժ. 46). ըստ որում բար՝ յԱբբայական լեզուինը-
շանակէ ուրէ: Օայս յայտնապէս ցուցանէ և Եղիշէի
բանն ՀՅայնժամ արձակեացնոցա (Պիղատոս) զԲա-
րբաբա՝ ուրէ Աբբեյ (՚ի ճառն չարչար.):

Պ. Արև լեռնակի (փոքրիկ սարի) վերայ, որ
յերուսաղէմի Արևմտեան կողմն էր՝ ոչ
հեռի ՚ի քաղաքէն, և Երրայեցւոց լե-
զուաւ կոչէր Պատրիարքուն, որ ըստ ոմանց՝
թարգմանի Պատրիարքուն կամ Կապուտին, և
ըստ այլոց՝ Տեղի հաստին կամ Տեղի հա-
ստիւլոյ*:

* Այսպէս կոչուելոյ պատճառն էր, նախ՝ զի հին ա-
ւանդութիւն կայր Շրեից մէջ՝ թէ անդ թաղուած են
նախահօր Աղամայ ոսկերաց մի մասն և գլուխն յետ ջըր-
հեղեղի, Աեմայ՝ և նորա որդւոյն Արփաքսադի ձեռամբ
(Պ. Տաթեւ. ՚ի հատ. Չմեռ. էջ խա): Եւ ըստ այսմ
աւանդութան՝ մեր և այլոց քրիստոնէից վարդապետ-
քըն ևս ասեն՝ թէ Քրիստոս խաչուեցաւ Աղամայ գե-
րեզմանին վերայ (Աշփր. ՚ի ճառ. խաչի, էջ 70: Պատիթ
Անյաղթ ՚ի ներբող խաչի, էջ 108: Եւ. Շ նորհ. ՚ի բան
հաւատ. էջ 207: Պ. Կարեկ. ՚ի Կար. գլ. դժ): Երկ-
րորդ՝ զի յետ ժամանակաց սովորութիւն էր եղած՝ այն
տեղ կառափնատել (գլխատել) զմահապարտ յան-
ցաւորքը, որպէս գրեն Քարսեղ Ճ՛ռն (՚ի Վեկնութ.
Վարկ. գլ. լէ), և Երդնկացին (՚ի Վեկն. Վատ. էջ
593): Իսկ ոմարք ՚ի յետին մատենագրաց կարծեն՝ թէ
զայս անունս ստայած էր այն տեղն իւր դրից պատճա-
ռաւան, որովհետեւ մարդոյ գլխի նմանութիւն ունէր, ա-
սեն, կամ թէ էր գագաթնածեւ:

Ճ. Ո՞յք տարան զՅՅիսուս 'ի Գողգոթա՝
վասն խաչելոյ:

Պ. Պիղատոսի զինուորքն որք յետ առնլոյ
Յիսուսի վերայէն զծիրանի պատմուծա-
նը և զկարմիր քղամիդը, և յետ զզեցու-
ցանելոյ նմա դարձեալ զիւր հանդերձքը,
մեծքազմութեամբ Նըէից ամբոխին տա-
րան զնա մինչեւ յայն տեղ՝ ուր պիտի
խաչէին:

Ճ. Օխաչափայտը ով տարաւ:

Պ. Մինչ 'ի քաղաքի դուռն Յիսուս ինքն
միայն ուսի վերայ բարձած ունելով
տարաւ, իսկ յետ ելանելոյ անտի, Աիմոն
Աիւրենացին ևս Պահակ բռնուեցաւ 'ի
Նըէից՝ տանելու զխաչը զկնի Յիսուսի:
Եւ ապա երբ որ հասին 'ի ստորոտն
Գողգոթայի՝ դարձեալ Յիսուս ինքն
տարաւ դէպ 'ի վեր զիւր շարչարանաց և
մահուան զործին*:

* Արիստոսի խաչն՝ ըստ սմանց՝ էր 'ի փայտէ ծա-
ռոյն Գիտութեան, զորոյ սերմը կամ ոստը առած էր,
ասեն, Աէթ՝ 'ի հրեշտակէն՝ որ պահապան էր Պատի-
տին, և անկած էր 'ի գլխակողմն գերեզմանին Ադա-

Հ. ԱՎԵ ԵՐ ԱԿԱԾՈՒՅԹԻՆ:

Պ. Պանդուխտ ոմն ԵՐ ՅԵՐՈՒՍԱՂԵՄ բնակուած, ոչ Հրեայ, այլ հեթանոս (օտարազգի)*, որ ծանօթ ԵՐ առաւելիւր երկուց որդւոց անուամբքն՝ կոչուելով “Հայր Աղեքսանդրի և Առուֆայ”**, Եւ ’ի նոյն ժամուն երբ որ զՅիսուս հանած էին ’ի քաղաքի դռնէն՝ նու ’ի քաղաք պայր՝ դառնալով յիւր ապարակէն:

Տայ, և այն: Եւ յայս միտ ասի ’ի Շարականի: „Արեւելք ’ի դրախտին ընծայեցին զփայտ խաշին“ և այն: Արեւելք ասեն՝ թէ Եր ’ի գմբեթէ Կոյեան տապանին. և այլք՝ թէ Եր Առբեկայ ծառն՝ որ բերուելով ձեռամբ Աքրահամու՝ մնացած Եր մինչեւ ’ի Քրիստոս, և դրուած Եր Առղոմոնի տաճարի սրահումը (տես առ Բարս. Ճ’ն. ’ի Առեկն. Վարկ. զլ. լէ): Ոմանք ևս համարին՝ թէ ’ի չորս տեսակ վայսից Եր այն խաշն, ցը բունն կիպարի, բազուկքն արմաւենի, պատուանդանն նոծի, տախտակ զլխոյն կամ վերնազրին ձիթենի (Տես առ Տաթեւ. ’ի Հատ. Ղմեռ. յէջ շձէ. 596): Բայց այտքիկ՝ լոկ աւանդութիւնք են յանյայտից կարգի:

* Եփր. ’ի Համարարք. յէջ 220:

** Վարկ. ժէ. 21: Բատ ասելոյ բազմաց՝ էին սոքա՝ երկու եղբարքս՝ Աղեքսանդրոս և Առուֆոս՝ ’ի թուոյ 72 աշակերտացն Քրիստոսի: Առուֆոսի համար ևս կարծիք կայ՝ թէ Եր այն, զոր Պաւլոս Առաքեալն յարգանօք յիշէ մօրք հետ՝ զրելով առ Հռովմայեցին (Ժղ.

Ճ. Ճըսայք վասն էր չկամեցան որ Յիսուս
միայնակ տանի զիաչը մինչև 'ի Գողգոթա:

Պ. Վասն այն՝ որ վախեցան թէ մի դուցէ Յիսուս շդիմանալով այն ծանրաբեռնութեանունի ճանապարհին՝ առանց ընդունելոյ զանարգական մահը խաչի վերսոյ*:

Ճ. Երբ որ տանէին զՅիսուս 'ի Գողգոթա՝ բարեպաշտ մարդիկ ևս կամեցան գնալնորա հետ:

13) այսպէս. «Ողջոյն տաջիք Առուխայ ընտրելոյ 'ի Տէր և մօր նորա և իմոյ»:

* Վասն զի խաչն՝ մինչև յայն ժամանակ՝ մեծամել շարագործաց համար տանջանաց դործիք էր սահմանուած ոչ միայն Ճըսայք՝ այլև հեթանոսական աղքաց մէջ (Տէս 'ի Ծննդ. Խ. 19: Յես. ր. 29: Լութ. թ. 25). և խաչի մահն համարւում էր պատիժ յոյժ անարգական. որոյ վասն և Շռովմայեցիք զազնուականքը չէին խաչում, այլ միայն զռամիկ և սինլիքոր մարդիկը՝ երբ որ նորա մահապարտ էին դատւում վասն ծանր յանցաւորութեան: Խակ յետ Քրիստոսի՝ Խաչն՝ պարծանաց և փառաց նշան եղեւ 'ի մէջ ամենայն քրիստոնէից, ըստ որում և մեծն Առատանդիանոս կայսրն Շռովմայ՝ 'ի պատիւ փրկարկան Խաչին Քրիստոսի՝ արդեւեց զիաչի պատոհար (Առղոմ. Լէկ. պամ. Ժ. 8):

Պ. Այսուհի թշնամեաց և խառնիձա-
ղանձ ամբոխի մէջ՝ որք Յիսուսի ետևեն
գնացին, կային և շատ բարեպաշտ մար-
դիկ և կանայք, որք ՚ի գութ շարժելով՝
արտասուեին և լային:

Հ. Յիսուս բան ասաց նոցա:

Պ. Այսուհի Պատերք Երուսաղէմի, ասաց, մի
լայք ՚ի վերայ իմ, այլլացէք ՚ի վերայ
անձանց և որդւոց ձերոց, զի եկեցեն ա-
ւուրք, յորս ասիցեն՝ երանի ամլոց և ո-
րովայնից՝ որ ոչ ծնան,, և այլն:

Հ. Այսուհի ուներ մի առանձին նշանա-
կութիւն:

Պ. Այսուհի վասն զի կանխաձայնութիւն էր այն
սոսկալի պատերազմաց՝ նեղութեանց և
հարուածոց՝ զորս յետ իբր քառասուն
ամաց պիտի կը էր Երուսաղէմ՝ պաշա-
րուելով ՚ի Հռովմէական զօրաց:

Հ. Օքնչ արարին Յիսուսի՝ երբ որ հա-
սին ՚ի ստորոտն Պաղպոթայի:

Պ. Կախ, ոմանք՝ լէ շախաւուն, և ոմանք՝ ու-
ժը սահեաւ, զինի բերին նմա որ խմե, բայց

նա չկամեցաւ խմել*: Յիսոսյ երբ որ եղան
Պաղպոթայի վերայ, անդ չորս զինուորք
մերկացուցին զնա յիւր հանդերձից՝ և 'ի
խաչ հանեցին՝ ձեռները և ոտները բեկ-
ռելով**:

* Օայս ըմպելիքս տուին Յիսուսի՝ վասն այն, որ
նա խմելով զայնս՝ զօրանայ և չզգայ զշարասանջ մահ-
ուան ցաւը, կամ գոնէ աւելի կարողանայ տոկալ (ռէ-
մանալ)՝ կենդանի մնալով խաչի վերայ 'ի տեսիլ բազ-
մաց: Իսկ Յիսուս որովհետեւ կամաւ յանձն առած էր
արդէն զշարչարանաց և զմահուան բաժակը ըմպել վե-
փրկութեան մարդկան (Մատ. իջ. 42: Պ ուկ. իբ. 42),
չընդունեց զայնպիսի զօրացուցիչ ըմպելիքը (Բարս.
Շն. 'ի ՄԵկն. Մարկ. Գլ. լէ): Հաւանական կար-
ծիք է յետին ՄԵկնչաց՝ թէ խաչահանուքն՝ բատ առ-
վորութեան՝ Յիսուսի հետ խաչուած աւազակաց և ս-
տուած լինին՝ զմուսով կամ այլ զերմացուցիւնիով
խառնած գինի:

** Ոմանք՝ երեւ, և ոմանք՝ չը համարին զբեեռքը,
որովք Յիսուսի մարմինն բարձրացաւ խաչի վերայ:
Երեւ համարողքն՝ ասեն, թէ երկու բեեռօք երկու
ձեռքն զամուեցան, և մի բեեռով երկու ոտքն՝ մինն
միւսի վերայ դրուելով: Իսկ չորս համարողքն՝ ասեն,
թէ որպէս երկու բեեռօք՝ երկու ձեռքն, նոյնպէս և եր-
կու բեեռօք՝ երկու ոտքն զամուեցան՝ զատ զատ: Յայլ
և այլ նկարչաց նկարեալ պատկերքն ևս յայտնի ա-
պացոյց են նոցու կարծեաց զանազանութեան յայտ
մասին:

- Ճ. Յօր ժամու եղեւ այդ:
- Պ. Եղեւ մօտ կէս աւուր, այսինքն՝ քանի մի
ըռպէիւք յառաջ քան զսկսուիլն վեցե-
րորդ ժամու:
- Ճ. Յիսուսի գատապարտութեան պատճա-
ռն յայտնի եղեւ ամենեցուն:
- Պ. Այս. վասն զի՞նորա խաչի վերնակողմու-
մը՝ առանձին տախտակի վերայ զրել տու-
ած էր Պիղատոս զայս բանս. “Յէսուս
‘Առաջեցէց’ թշունառ Նէրէց,,. և զայն
տախտակը կարդացին շատերն ’ի Նըրէից :
- Ճ. Ո՞ր ազգի լեզուաւ և զրով զրուած էր
այդ բանդ:
- Պ. Գրուած էր՝ Երրայեցերէն, ‘Խաղմատե-
րէն* (այսինքն՝ Լատիներէն) և Յունա-
րէն:

* Նայկական թարգմանութիւնն Աւետարանի, վո-
խանակ դնելոյ Լատիներէն՝ դնէ Պատմատերէն (Պատկ.
իգ. 38: Յովհ. Ժթ. 20): Եւ այս՝ այնու պատճառաւ,
զի՞ի ժամանակս մեր թարգմանչաց Լատինական լե-
զուն ծաղկած էր առաւելապէս Պատմատիոյ մէջ՝ որ
Եւրոպիոյ գաւառաց մինն էր: Խակ Յոյն՝ Ասորի և այլ
թարգմանութիւնքն դնեն Նուվայերէն կամ Նուվ-

Ճ. Նըելից քահանայապետքն հաւան էին
այդ զրուածիդ:

Պ. Ո՛չ. ուստի գնացին ասացին **Պիղատոսի**
“Մի զրեր թռադուուր Նըելից,, . սակայն
Պիղատոս մերժեց զնոցա խնդիրը՝ ասե-
լով“ . Օ՞որ ինչ զրեցի՝ զրեցի,, :

Ճ. Ա. Յ. մարդիկ ևս խաչուեցան Յիսուսի
հետ:

Պ. Ա. Յ., յառաւելագոյն անարդանս Յիսու-
սի՝ երկու շարագործ մարդիկ (աւազակք)
ևս խաչուեցան նորա հետ ՚ի միասին նոյն
տեղում*, մինն յաջ կողմանէ, և միւսն
՚ի ձախ կողմանէ**.

Խեցէն, վասն զի լատինական լեզուն սեպհական էր
Հռովայեցաց, և նոյն իսկ Հռովմայեցիքն կոչէին Լա-
տին+ կամ Լատինացի+, ըստ որում նոցա ուրութեան
աթոռն կամ մայրաքաղաքն Հռովմ՝ էր յաշխարհին
Լատինոյ:

* Ա. Յու կատարուեցաւ այն մարդարէութիւնն՝ որ
գրուած էր նոյն իսկ Յնի Քնի համար, թէ “Ի մահ
մատնեցաւ անձն նորա և ընդ անօրէնս համարեցաւ,,
(Եշայ. ծղ. 12):

** Ա. Հակողմեան աւազակի անունն՝ ըստ ոմանց
Գետմաս էր, իսկ ըստ այլոց՝ Տերու . և ձախակողմեան

• Ն. Յոր ազգէ էին նոքա:

Պ. Յաւետարանէն չէ յայտնի, բայց կարծիք
է սուրբ Հարց և վարժապետաց, թէ ա-
ջակողմեանն հենանու էր, և ձախակող-
մեանն աշխատաց*:

Ն. ՊՅիսուսի հաներձքը ո՞ք առին:

Պ. Առին՝ ըստ սովորութաան՝ այն զինուոր-
քըն, որք աշխատած էին զՊյիսուս իսա-
չափայտին վերայ բեւեռելու: Առ որովհե-
տեւ չորս էին նոքա, զհանդերձքը ևս չորս
մասն առնելով՝ բաժանեցին իւրեանց
մէջ վիճակով**: բայց պատմուծանի վե-
րայ առանձին վիճակ ձգեցին. և ում որ
ելաւ վիճակն՝ նաև առաւ զայն***:

աւազակի անունն՝ ըստ ոմանց՝ Աւագաստոս էր, իսկ ըստ այլ-
ոց՝ Դամատոս (Վ անակ. ՚ի Հարց: Շնոն Բարսեղ ՚ի մեկ.
Մարկ. գլ. լը: Պ. Տաթե. ՚ի հատ. Չմեռ. յէջ 589):

* Աշխար. ՚ի Համաբարբ. գլ. ի:

** Բատ Մեկնչաց՝ հաւանական է կարծել, թէ ըգ-
խաչակից աւազակաց հանդերձքը ևս բաժանած են զի-
նուորքն՝ եթէ չէին հնոտի և անպիտան:

*** Այսու կատարուեցաւ ասացեալն Պատթի մար-
գարէի բերանով ՚ի դիմաց Քրիստոսի. “Բաժանեցին
զհանդերձս իմ ՚ի մէջ իւրեանց, և ՚ի վերայ պատմու-

Հ. Ասն էր առանձին վիճակարկութիւն
եղել պատմուծանին վերայ:

Պ. Ասն այն՝ որ բոլորովին ժողովնեալ (ք՝
Ալլուստ Հենչ' է Հայը հեռացած) էր այն
պատմուծանն՝ և առանց կարի*, և չէր
կարելի առանց պատառելոյ բաժանել
զայն. ուստի ասացին զինուորքն “ԱՌ
պատառեսցուք զայդ, այլ արկցուք վի-
ճակս ’ի վերայ գորա ում և ելցէ,, :

Հ. Ո՞րն եղել Յիսուսի առաջին բանն իս-
չի վերայէն:

Պ. Եղել գթալիր աղերսանքն առ Հայրն
Աստուած՝ իւր խաչահանուաց համար՝
այսպէս. “Հայր, թողդոցա, զի ոչ զի-
տեն զի՞նչ գործեն,,:

Ճանի իմոյ վիճակս արկանէին (Ապղ. իա. 19):

* Ոմանք համարին՝ թէ զայս պատուական ագանե-
լեքս (որ Յունարէն խիդօն ասի), Տիրամայր Ա. Կոյսն
իւր ձեռօքն էր գործած: Խակ Վելքայէլ Ասորի պատ-
մաբանն ասէ (’ի Պատմ:) թէ Աբդար թագաւորի
քոյրն (Աւդէ) հիւսած էր: ’Ի մեր վարդապետաց ևս՝
մեծն Ա արդան, և Գ. Տաթե (’ի մեկն. Ապղմ. իա),
Յ. Երգն. (’ի մեկն. Ապա. յէջ 594) գրեն՝ թէ Աբ-
դար թագաւորն մեր ընծայ ուղարկած էր զայն Յնի:

Հ. Յետ այնորիկ դադարեցա՞ն նորա թշնաւ
միքն ՚ի նախատելոյ զնա:

Պ. ԱՀ. ոմանք յանցորդներից խաչի մօտ գա-
լով և գլուխ շարժելով ասէին. “Վահ
որ քակեիր զտաձարն և զերիս աւուրս
շինէիր. ապրեցն զանձն քո՛ և էջ՚ի խա-
չէդ”։ “Եոյնպէս և քահանայապետքն և
դպիրքն ծաղը առնելով ասէին. “Օայլ
ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցա-
նել. եթէ թագաւոր է Խորայէլի, իջուէ
այժմ ՚ի խաչէդ, և հաւատացուք դմա”։
Խոկ զինուորքն ասէին. “Եթէ Դու ես
թագաւորն Նրէից, փրկեան զանձն քո”։

Հ. Խաչակից աւազակքն բան շխուեցա՞ն
յայնժամ”։

Պ. Խօսեցան. ձախակողմեանն հայհոյեց ըզ
Յիսուս. “ԱՀ Դու ես, ասաց, Քրիս-
տոսն, փրկեան զանձն քո և զմեզ*”։ Խոկ

* Յառաջ երկու աւազակքն ես նախատեին զՅՆ
(Մատ. իէ. 44: Մարկ. ԺԷ. 32). բայց ապա՝ երբ որ
ձախակողմեանն սկսաւ հայհոյել և հենգնել (ծաղը
առնել լրբաբար), աջակողմեանն պատասխան տուա-
նմա սաստելով. “Երկնչիս, ասաց, դու յԱստուծոյ՝ զի

աջակողմեանն հաւատալով նորա Աստուածութեան, և դաւանելով զնա երկնաւոր և յաւիտենական թագաւոր՝ ասաց. “Յիշեա զիս Տէր՝ յորժամ գայցես արքայութեամբ քով,, , և իսկոյն ևս արժանացաւ լսելու զՅիսուսի փրկաւէտ ձայնը. “Ամեն ասեմ քեզ, այսօր ընդ իսիցես ’ի դրախտին*,,:

Ն. Եթբ որ Յիսուս բարձրացած էր խաչափայտի վերայ, Աստուածամայրն ուր էր:
Պ. Խաչի մօտ կանգնած կայր նա՝ հանդէպ Աստուածորդւոյն՝ իւր ծանօթից հետ ’ի միասին, որք էին՝ Մարիամ Աղեովպայ***, Մարիամ Մագդաղենացի, և

’ի նմին պատժի կաս: Եւ մեք յիրաւի, զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. և սա՝ ապիրատ ինչ ոչ գործեաց,, (Պուկ. իջ. 40. 41):

* Պարտիս բառիւս պարտ է իմանալ աստ ոչ զիշդեմայ երկրաւոր դրախտը, այլ՝ շերինից Աքայունինը, ի՞ Շատուծոյ ժառաց աեսունինը ’ի մշտնջենաւոր հանդստեան, կամ լորդուրոց երանաւետ իւանը, (Արզըն. ’ի մեկն. Մատ. յէջ 597: Բարսեղ ’ի մեկն. Մարկ. Գլ. Լլ):

** Աս՝ կին էր Աղեովպասի. ուստի կոչէր Մարիամ

Յովհաննէս սիրելի աշակերտն Յիսուսի:
Հ. Բան ինչ ասաց Յիսուս՝ երբ որ տեսաւ
զնոսա:

Պ. Այս, զաշքերը դժու առ մայրն ղարձու-
ցանելով՝ ասաց “Աին դու, ահա որդի
քո,, և ապա Յովհաննէսին նայելով և
զԱ. Կոյսը ցուցանելով՝ ասաց “Ահա
մայր քո*,,:

Հ. Յետ այնորիկ զի՞նչ արար:

Պ. Յետ երեք ժամ անցանելոյ ՚ի խաչելու-
թենէն, այսինքն՝ երբ որ սկսուելու էր
իններորդ ժամն, աղաղակեց մեծածայն՝
Երայեցւոց բարբառով “Ելի Ելի, լա-

Կոչովոյ (Յովհ. Ժ. 25): Կոչէր նաև իւր որդւոց
անուամբքն Առքեայ Յահիսայ և Ալքեայ (Արք. Ժ. 47): Իսկ Կղէովպաս՝ եղբայր էր Յովհակայ արդարոյն՝
որում խօսեցեալ էր Ա. Կոյսն (Խղնատ. ՚ի Աեկն.
Պուկ. իդ. 17):

* Այս բանիւքս Յիսուս զՅովհաննէսը յանձնեց
Ա. Կուսին՝ որ սիրէ զնա իբրեւ զիւր որդի, և զԱ. Կոյսը
յանձնեց Յովհաննու՝ որ պատուէ և ինամէ զնա
իբրեւ զիւր մայր: (Բ. Շն. ՚ի Աեկն. Արք. Գլ. ԼԺ):
Այս իսկ է պատճեռն, որ այնուհետեւ Յովհաննէս
իւր մօտ առաւ զԱստուածամայրը և նորա հետ ընա-

մասաբաքթանի,,* (որ թարգմանի Առաջապահութեան և ընդէլլուղեց վեա)։

և ապա “Օքարաւի եմ,, ասաց։

♦. ♦ Պուր տուին Յիսուսի՝ զծարաւը շեղուցանելոյ համար։

Պ. Ոչ. այլ՝ զինուորաց մինն փոխանակ ջուր տալոյ, թրջեց սպունզը լեղախառն քացախի մէջ և յեղէզի ծայրը անցուցանելով՝ մատոյց նորա բերանին**։

♦. ♦ Օքինչ ասաց յայնժամ Յիսուս։

Պ. “Վմենայն ինչ կատարեալ է,, ասաց. դ’ ինչ որ ’ի մարգարէից զրուած էր չարչա-

կեցաւ յԵրուսաղէմ” 12 (կամ ըստ այլոց՝ 13 և կամ 14) տարի, մինչեւ ’ի փոխումն նորա յերկինս (’ի Յայսմ. Մայիսի 8):

* Հռովմայեցի զինուորքն՝ որք չդիտէին զԵրայական լեզուն, երբ որ լսեցին զայս բանս՝ կարծեցին թէ Յիսուս զԵղիա մարգարէն յօդնութիւն կոչեց, որովհետեւ լսած էին շատ անգամ ’ի Հրէից՝ թէ Մեսիայի հետ նոյն մարգարէն ևս պիտի զայ. ուստի և ոմանք ’ի նոցանէ ասացին. „Խռով տեսցուք՝ եթէ գայլ Եղիա փրկել զդա (Մատ. իէ. 40):

** Եյսու՝ ’Իսաւթի մարգարէութիւնն կատարուեցաւ. „Ետուն ’ի կերակուր ինձ լեղի, և ’ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ (Աղմ. կը. 22):

բանացս համար, բոլորն կատարուեցաւ*,
և մնաց միայն՝ մեռանելս:

Հ. Անոնք նա ուրեմն:

Պ. Այս, մեռաւ ստուգապէս մահկանացու
մարմնովն կենդանի մնալով անմաշ Աս-
տուածութեամբն**:

Հ. Որպէս եղեւ այդ:

Պ. Գոչեց նախ մեծաձայն առ Հայրն Աս-
տուած՝ Սաղմոսի բանիւ (Ե. 6) “Հայր՝
’ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ,, և ա-
պս զզլուխը խոնարհեցուցանելով՝ ար-
ձակեց իշխանաբար զիւր զմարդկային ըզ
բանական հոգին***:

Հ. Յառաջ քան զՅիսուսի մահը որպիսի
սքանչելիք եղեն՝ ’ի նշան նորա Աստուա-
ծութեանն:

Պ. Արեգակն խաւարեցաւ՝ ապաստույ բնական

* Բ. Ճ'ան (՚ի Վեկն. Ամրկ. Գլ. ԼՔ):

** Տես յի՞նդարձ. Հրահանգն մեր, յէջ 244—246:

*** Ա. Շ. Նորհ. (՚ի Բան հաւատ. և ’ի թղթ. առ
Ա. կայսր): Ա. Շ. Նորհ. ’ի Վեկն. ա. Պետ. ձառ ը):
Տես և յի՞նդարձ. Հրահ. (յէջ 260· 261):

էտէնէ*, որով և երեք ժամ խաւար եղեւ
ըուլոր երկրի վերայ՝ սկսեալ 'ի վեցերորդ
ժամէ մինչ ցիններորդն***:

* Արդարութիւն էտէնէ (այսինքն՝ ստանչելէօ+) եղեւ
այս խաւարումնս. վասն զի արեգակն՝ բնականապէս 'ի
լուսնի ծննդեանն խաւարի, իսկ 'ի ժամանակի անդ
խաչելութեան Յիսուսի՝ լուսնի լրումն (այսինքն՝ 14
երրորդ օրն) էր (Բ. Ճ'ոն. 'ի Վեկն. Վարկ. գլ. լր. Երգն.
'ի Վեկն. Վատ. յէջ 597): Օայս հրաշտական խաւա-
րումնս յիշեն ոչ միտյն Աւետարանիչքն (Վատ. իէ.
45: Վարկ. ժէ. 33: Պ ուկ. իգ. 44), այլ և արտաքին
հեթանոս մատենագիրք՝ ըստ գրելոյ Որոգինեայ ('ի
ձառ լե. 'ի վերայ Վատթէի) և Եւսեբեայ ('ի Հրո-
նիկոնի մասն ը. և. յէկեղ. պատմ. գլ. թ). յիշենոյն-
պէս և Վ. Պիտոնէսիոս Արիսպագացի, որ ականատես
եղած էր այս խաւարմանս՝ Վրեգ, (այն է՝ եղիուպօ-
լիս) քաղաքումը Եղիպտացւոց (տե՛ս 'ի թուղթս նո-
րա՝ որ առ Պողիկարպոս եպիսկոպոսն Օմիոնոյ և առ
Վաղովիանէս իմաստասէր:

** Խէպէտ Աւետարանիչք միայն զարեգական խա-
ւարումն յիշեն, բայց ըստ գրելոյ վարդապետաց եկե-
ղեցւոյ՝ նաև լուսինն մթագնելով կամ արինագոյն
երեւելով, և աստեղքն ևս ('ի գիշերի) զիւրեանց լոյսը
ծածկելով, իբր թէ սուդ առին Հրիստոսի չարչարա-
նաց և մահուան վերայ. որով և նորա Վատուածային
փառացն յայտնիշ եղեն:

Վհա վարդապետաց բանքն. „Վրեգակն և լուսին
եղեն քարոզք յայնմ ժամանակի. զի արեգակն իւրո-

Հ. Յետ մահուանն ևս եղե՞ն այլ նոր սքա՞ն-
չելիք:

Պ. Այս, երբ որ նա զհոգին աւանդեց՝ նոյն
ժամայն սաստիկ գետնաշարժութիւն ե-

վին խաւարելով բողոքեաց՝ ցուցանել ամենեցուն ըզ-
Տերն ՚ի խաչին, և ոչ կարացեալ տեսանել զայն տե-
սիլ՝ խաւարեցաւ....: Խակ լուսին ևս մեծամեծս ցուցա-
նէր. զի բատ նմանութեան հայելով զարիւնն յինքեան
՚ի վերուստ ամենեցուն ցուցանէր արարածոց զփրկու-
թիւն ամենայն աշխարհաց», (Պ. Լուս. յԱգաթ.):

— „Պատմեսցեն երկինք զվայելչութիւն փառաց
Վրիստոսի. և ընկալեալ լուսաճեմ տարերցն զգոյնս
արեան անեղին. և օրհնութեամբ խաչելոյն լցան տիե-
զերք“ (՚ի Շարակ.):

— „Ի ժամուն յայնմիկ ամենայն արարածք ՚ի սուդ
տրտմութեան էին. արեգակն թագուցեալ, լուսին խա-
ւարեալ, աստեղք ծածկեալ“ (Խղիշ. ՚ի ճառն չարչ.):

— „Որ զլուսնին պատկեր՝ երանգաւ արեան գունե-
ցեր“ (Պ. Կար. Գլ. Լզ.):

— „Լուսինն յեղաշրջեցաւ յարիւն՝ յազգակցու-
թիւն որակի կերպարանաց ստեղծչին“ (Կ. Լամբ. ՚ի
Ուեկն. Յովել. թ. 31):

„Արեգական լոյս քօղարկեալ
Խաւարանայր միջօրէին.

Կահե լուսինն, օրինակին
Փոխելով յարեան գունին.

Կանգի զՏերդ իւրեանց տեսին
Ուերկ ՚ի խաչին, չհանդուրժեին.“

(Կ. Հնորհ. յԱղբերդ գիրք Պ.):

ղե*. վեմք (ՆԵՐԱՆԵՐ + ԱՐԵՎ) ՃԵՂՔՈՒԵ-
ԳԱՆ. ԿԵՐԵՎԱՄԱՆՔ ԲԱցուեցան. և առջարի
ՎԱՐԱԳՈՅՐԻՆ՝ որ կախուած կայր ԱՐԵ-
ՆԵՆ. ԱՐԵ-ՌԵ-ԱՆՍԻ ** առաջե, ինքնին
ԱՊԱՏԱՌՈՒԵցաւ աներեոյթ զօրութեամբ
վերուստ մինչ 'ի վայր ***:

Հ. ԽԱՀԱԿԻց աւազակըն ևս մեռած էին
յայնժամ:

Պ. ՈՒ. Նոքա դեռ կենդանի էին, սակայն

* **Փղեգեսն՝ հեթանոս մասենագիրն՝** որ Ճաղկե-
ցաւ երկրորդ դարու սկզբում, յիշե զայս գետնաշար-
ժութիւնս 'ի գիրքն ժկ. 'ուր և պատմէ՝ թէ յայնժամ
և *Աիկիա քաղաքի մեծ մասն կործանուեցաւ:

** ԱՐԵ-ՌԵ-ՆԵՆ ԱՐԵ-ՌԵ-ԱՆՍԻ կամ ԱՐԵ-ՌԵ-ՆԵՆ ԱՐԵ-Ջ
կոչեր տաճարի երկրորդ կամ ներքին խորանն, ուր կայր
Ռւխտի տապանակն (գ Խատկ. գ. 16: ը. 6: ք ՎԵՆաց.
է. 7: ԽԵՐ. թ. 3. 4):

*** Ա արագուրի պատառուիլն՝ նշանակ էր Հին
(ՎԵՆԵՐԱԿԻՆ) օրինաց խափանման, և *Առոր (ՎԵՐԵ-
ՎՈՒՆԿԻՆ) օրինաց յայտնութեան. և յուցանէր՝ թէ
ՎԵԽԻԱՅԻ համար նախագրեալ մարգարեւթիւնքն և
օրինակքն կատարուեցան ահա ըստ ամենայնի և պար-
զուեցան, և վարագուրով ծածկուած չեն: (ԽԵՐԵԿՄ 'ի
Համաբարբ. գլ. ին. Բարսեղ. Շնի. 'ի ՎԵԼԻ. ՎԵՐԱ. ՎԵՐԱ-
Կ. և թ. Ա. ԸՆՈՐՀ. ԱՊԵՐԵՐԳ. Գիրք գ):

յետ այնորիկ շուտով մեռան՝ երբ որ
Նըրէայք խորտակել տուին զինուորաց
զնոցա բարձքը (Ճնճնէր) Պիղատոսի
հրամանաւ:

Հ. Խ՞ոչ էր պատճառն՝ որ Նըրէայք հրա-
ման խնդրեցին 'ի Պիղատոսէ՝ զիսաչուած-
ների բարձքը խորտակելու:

Պ. Երկու պատճառ ունեին/ նոքա այս բա-
նիս. մի զի հրաման էր 'ի Առվլիսական
օրինաց՝ զիսաչելոց մարմինքը նոյն իսկ իսա-
չելութեան օրումը թաղել *. և միւս՝ զի
յերկրորդ օրն՝ որ մեծ օր էր Օատկի
տօնախմբութեան**, անպատշաճ էր
զայնպիսի տիրալի տեսարանը թողու-
աչաց առաջեւ:

Հ. ՕՅիսուսի բարձքը ևս խորտակեցին:

Պ. Ոչ ***. վասն զի երբ որ եկին զինուորքն՝

* Յերկ. Օրին. իա. 22. 23: Յետ. Ժ. 26. 27:

** Յովհ. ժթ. 31):

*** Յիսուսի բարձքն չխորտակուած մնացին յօրի-
նակ Օատկական գառին. և այսու իսկ կատարուեցաւ
Ա. Գրոց բանն “Ասկը նորա մի փշրեսցի (Յովհ. ժթ.
37), կամ Ասկը մի բեկանիցեն'ի նմանէ (Յիտ. թ. 12):

նորա մօտ, նա արդէն աւանդած էր զհո-
գին. բայց զինուորաց մինն* տիգով
(ՔԵՂԱՐԴԻՆ) խոցեց զնորակողը**. որով
և մի այլ սքանչելիք տեսնուեցաւ:

♦ · Արպէս:

¶ · Երբ որ խոցեց զինուորն զՅիսուսի կո-
ղը, նոյնժամայն երկու վտակք բղխեցին
(ԴԻ-ՀԱ ԵԼԱՆ) նորա միջէն, մինն՝ արիւն,
և միւսն՝ ջուր:

♦ · ՕԵՒՆ Նշանակէին այն երկու վտակքն:
¶ · Ըստ մեկնելոյ Ա·Ախւրդի Երուսաղէմա-
ցւոյ՝ Արիւնն նշանակէր զ՛րէից դատա-
պարտութիւնը, որք աղաղակեցին „Ա-
րիւն դորա՚ի վերայ մեր և՚ի վերայ որ-
դւոց մերոց“, և Գուրն նշանակէր զՅի-

* Այս զինուորիս անուն տան ոմանք Պ ԱՆԿԻՆՈՒ
(Լատ. L ANTONIUS. ՅՈՒՆ. Λ ΑΝΤΩΝΙΟΣ, որ նշանակէ, ՏԵ-
ՇԱ-ՆԻ). և համարին՝ թէ սա ինքն է նոյն իսկ հարիւ-
րապետն (Պ ԱՆԿԻՆՈՒ) որ յետոյ ևս հանդերձ զօրա-
կանօքն կարգեցաւ ՚ի պահպանութիւն զերեզմանին
Վրիստոսի:

** Այսու ևս կատարուեցաւ մարգարեռութիւնն
”Զայեսցին ՚ի նա՝ յոր խոցեցին“ (ՅՈՎՀ. ԺԹ. 37).

սուսի անմեղութիւնը, զոր եցոյց Պիղա-
տոս՝ ջրով զձեռները լուանալով *: Ասմ
թէ երկուքն ևս (այսինքն Արիւնն և
Պուրն) նշանակէին զՄկրտութեան եր-
կու տեսակքը, որոց մինն լինի արեամբ,
որ է Մարտիրոսութիւն, և միւսն՝ կա-
տարի ջրով, որ է վերստին ծնունդյա-
ւագանէ**:

Հ. Այլ վարդապետք կամ սուրբ Նարք ի՞նչ
կարծիք ունին այդ բանի վերայ:

Պ. Ոմանք համարին՝ թէ Պուրն՝ էր ՚ի նշան
իսկապէս մեռելութեան Յիսուսի Քրիս-
տոսի մարմնով, և Արիւնն՝ ՚ի նշան կեն-
գանութե նորա՝ Աստուածու Շեամբ***:

կամ „Նայեսցին առ իս վոխանակ կաքաւելոյն (ց՝
խաղալոյ զինե խոցոտմամբ) (Օաք. Ժ. 10): Ոմանք
առեն՝ թէ Քրիստոս զայս խոցուածս ընկալաւ ՚ի յակ
կողն. բայց աւելի հաւանական և հասարակեալ կար-
ծիք է վարդապետաց՝ թէ խոցեցաւ յաջ կողն, որպէս
զրէ Գ. Տաթեւացին՝ (՚ի հատ. Չմեռ. յէջ 650):

* ՚Ի Կոչ. Բնձ. Գլ. Ժկ:

** ՚Ի նոյն գիրս. Գլ. Ժկ:

*** ՚Ն. Շն (՚ի Մեկն. Մարկ. Գլ. Խ): ՚Ե. Շ նոր-
հալի (՚ի թղթ. առ քահանայս Յամայք նահանդի:

Ոմանք ևս ասեն՝ թէ Գուրն՝ Երի խորհուրդն աւազանին մկրտութեան, և Արիւնն՝ ի խորհուրդն բաժակի կենարար աղորդութեան*:

Ա. Այնչափ սքանչելիքն՝ որք եղեն յառաջքան զմահն և զկնի մահուն Յիսուսի, ազգեցութիւն ինչ ունեցան դոնէ ոմանց վերայ:

Պ. Այս առվմայեցի արիւրապետն** որ առաջիկայ Եր Յիսուսի խաչելութեան,

Ա. Ե նորհալի (Կի Վեկն. ա. Յովհ. Ճառ ը): Պ. Աստուածաբան, զորու զբանը՝ ի մեջ բերէ ընդարձակ բառարանն մեր ի բառն „կայլակել“.

* Ա. Ե նորհ. (Կի Բան Հաւատ. և յԱղքերդ. գիրք գ. ևս և ի Ժամագիրս): Ա. Ե նորհ. (Կի մեկն. ա. Յովհ. Ճառ ը): Ասկեբ. (Կի Վեկն. Յովհ. Ա. Ժիշ: Եղեշէ (Կի ճառն Խաչել.):

** Բառ հին աւանդութեան՝ սա է՛ ունկիանոս հարիւրապետն կապագովկացի, որ յետ մկրտուելոյ յԱռաքելոց, յիւր հայրենիքը գնալով՝ սկսաւ քրիստոնեութիւն քարողել. ուր և իւր երկու ընկերակցաց հետ՝ նահատակուեցաւ հրամանաւ Տիբերիոսի կայսեր: Այստ ասելոյ ոմանց՝ յառաջ միականի՛ (այսինքն՝ մի աշխալ ի՞ցը եր), և լուսաւորուեցաւ՝ երբ որ ի կողարուղիս արիւնէն Քրիստոսի կաթ մի ցայտեց կոյլը աշքին վերայ (Կի Յայսմ. ի առկա. 16):

և ընդ ձեռամբ նորա զտանուած պահա-
պան զինուորքն, տեսանելով զայն ամե-
նայն հրաշալի դէպքերը՝ սոսկալով իմն
ասացին. „Երդարե՝ այս այս արդար էր“:
„Երդարե՝ Եստուծոյ որդի էր սա“: Բաց
՚ի սոցանե, նաև այն բարեմիտ անձինքն՝
որք միայն տեսանելոյ համար եկած էին
՚ի Գողգոթա, զիւրեանց կուրծքերը բաղ-
խելով ՚ի նշան ցաւոց՝ զնացին տրամու-
թեամբ յիւրեանց տեղերը:

Ճ. Երբ, և որոյ ձեռամբ եղեւ Յիսուսի
թաղումն:

Պ. Եղեւ յերեկոյի * նոյն իսկ խաչելութեան
աւուր (այսինքն՝ Աւրբաթու), ձեռամբ
Յովսեփայ Երեմաթացւոյ և Կիկուե-
մոսի, որք ՚ի ծածուկ աշակերտք կամ
բարեկամք էին Յիսուսի***:

* Եւյսինքն՝ ՚ի առանեբորդ ժաման՝ Երկու ժամով
յառաջ քան զարեգակնամուտը, ըստ գրելոյ Մամբրէի
(՚ի ճառն յար. Պաղար.) Յովհ. Խմառ. (՚ի գիրքն
յղ. կարդ. եկեղ. բան ը): Խոկ ըստ այլոց՝ յարեդահնա-
մուք: (առ. Տաթեւ. ՚ի հատ. Զմեռ. յէջ 604):

** Յովսեփի իշխան էր Հրեից, զոր Եւետարանիշքն
կոչեն, այլ պարիելու, նախարար (Մարկ. ժԵ. 43), այլ

Հ. Խոչպէս կատարեցին նոքա զայդ գործդ:
Պ. Յետ իջուցանելոյ զՅիսուսի մարմի-
նը՝ ի խաչէն, օծեցին զնա զմոսով և հա-
լուեիւ. և ապա պատելով պատառա-
կալաւ (աղնի- հասա- ման) ըստ օրինի Ար-
քէից,* դրին մի նորափոր քարեայ գե-
րեզմանի մեջ, զոր Յովսէփի իւր համար
պատրաստել տուած էր՝ և զգերեզմանի
դուռնը (ճուառը) փակեցին մի մեծ քարով:

ՆԵԺԱԿԱՆ (Վատթ. իէ. 57), այդ բարեհործ և արդար
(Պ. աւկ. իդ. 50): Աս՝ Արեմանացի կոչէր, ըստ որում
ծնած էր յԱրեմանիս քաղաքի՝ որ յԵրուսաղէմի հիւ-
սակողմն էր՝ 6 կամ 7 փարսախով հեռի: Եւ ասի՝
թէ սորա մանկունքն կոտորուած էին ՚ի Արովդէսէ
(Բ. Ճոն. ՚ի Վեկն. Վարկ. գլ. ին): Խոկ Աիկողեմոս՝
եղբայր էր Գամաղիելի Փարիսեցւոյ՝ վարժապետին
Պաւղոսի Առաքելոյ և Ատեփանոսի Ալախավիլայի:
Առցա (Յովսէկայ, և Աէդուանոսի) գործակից էին յայն-
ժամ և Տիրամայր Առյան, և ոմանք ՚ի բարեպաշտ կա-
նանց, ևս և Յովհաննէս սիրելի աշակերտն Յիսուսի,
ըստ դրելոյ Ճոն Բարսղի (՚ի Վեկն. Վարկ. գլ. ին):

* Օզըմուռար (որ է տեսակ մի անուշահոտ խիժի
կամ իւղոյ) և զհալուէն (որ է տեսակ մի անուշահոտ
խնկոյ) բերած էր Աիկողեմոս՝ իբր 100 լիտր (այսինքն՝
400 տրամ)։ Խոկ զկտաւը գնած էր Յովսէփի (տես
Յովհ. ժթ. 39: Վարկ. ժէ. 46):

Հ. Ար տեղ էր այն գերեզմանն:

Պ. Ե՞ր Յովսէփայ Արեմաթացւոյ պարտի-
զումը, որ հեռի չէր 'ի Պաղպոթայէն*:

Հ. Յետ Յիսուսի թաղման՝ զի՞նչ ևս արա-
րին Նըրէից քահանայապետքն և Փարի-
սեցիքն վասն զգուշութեան:

Պ. Դ միւս օրն (այսինքն՝ Կաբանու) հը-
րաման առնլով 'ի Պիղատոսէ՝ զնացին

* Բատ գրելոյ Վեկնչաց, գերեզմանն՝ որոյ մէջ դրու-
եցաւ Յիսուսի մարմինն, էր այն՝ զոր Առնիաս հանդեր-
ձապետն Ազեկիայ թաղաւորին փորել տուած էր իւր
համար: Բայց նա չարժանացաւ նորա մէջ թաղուելու,
որովհետեւ մեռաւ յօտար երկրի՝ բատ սպառնալոյն Ա-
սայեայ մարգարէի, որ ասաց նմա. „Օ ի՞ եկեալ ես
այսր, և զի՞նչ խնդիր է քո աստ. զի փորեցեր դու քեզ
աստ գերեզման, և արարեր քեզ յարկ 'ի վիմիդ: Ա հա-
ւասիկ Տէր զօրութեանց հանցէ՛ (ի քէն զհազարա-
պետութիւն քո), և սատակեսցէ՛ զքեզ՝ այր դու... և
ընկեսցէ՛ զքեզ յերկիրն մեծ և յանչափ, և անդ մե-
ռանիցիսն (Ասայ. իբ. 16—18): Ալարտէզն՝ ուր էր գե-
րեզմանն, Նըրէից գերութեան օրերում անխնամ մնա-
լով ծածկուած էր հեղեղների բերած խիճերով: Յետ
ժամանակաց գնեց զայն Յովսէփ Արեմաթացին, և
գտանելով անդ զվիմափոր գերեզմանը՝ ուր ոչ ոք թա-
զուած էր, մաքրեց և պատրաստեց իւր համար (Տես
առ Երզն. 'ի Վեկն. Վատ. յէջ 606):

կնքեցին զգերեզմանի գուռնը, * և խումբ
մի զօրականաց ևս անդ պահապան կար-
գեցին:

Ն. Ասն էր արարին զայդ:
Պ. Ասն այն՝ որ մի գուցէ մարմինն զողա-
ցուի, և համբաւ տարածուի՝ թէ յարու-
ցեալ է, ըստ որում յառաջնմէ ասած
էր Յիսուս թէ „Յատ երից աւուրց յառ-
նեմ“**:

* Գրեն վարդապետք, թէ զերեզմանն կնքուեցաւ
քահանայապետից և Փարիսեցւոց մատանեաւն (Աի-
րել. ՚ի Առ. ընծ. գլ. ժդ. Եղիշէ ՚ի ձառն թաղ.
Հարակ. ՚ի Առ. մեծի շաբ.). և ասեն ևս՝ թէ քա-
հանայապետի մատանոյն վերայ քանդակուած կայր
Աստուծոյ անունն Եղիշան, որոյ վոխան՝ ՚ի զործ ածի-
առ մեղ ՈՐ Ե՞ս, կամ անտակ անուանեալ զիրս Ե
(Ա անակ. ՚ի Հարց: Երզն. ՚ի Վեկն. Վատ. էջ 609):

** Վատ. իւ. 62:

ՅԵՒՆՈՒՅՈՒՅ

Ե. ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Հ. Յիսուս յիւր մատնութե զիշերին զի՞նչ
խորհուրդ սահմանեց :

Պ. Ասհմանեց զաղորդութեան (այսինքն՝
զՊատառքնելէ) խորհուրդը՝ ‘Ե՞ս Ո-էս
անուանելով զայն* . որով ’ի հաստա-
տութիւն ‘Եորոյ Ատակի (այսինքն՝ Ա-է-
պարանական Օքնաց**)՝ զիւր մարմինը
և արիւնը տուաւ աշակերտաց՝ ’ի ճաշա-
կումն :

Հ. Ո՞ր տեղ եղեւ այդ :

Պ. Այն մեծ և զարդարուած վերնատան
մէջ, ուր Յիսուս իւր աշակերտօքն գնա-
ցած էր զատիկ առնելու *** , ինլով ըզ-

* „Այս բաժակ է նոր ուխտ՝ իմով արեամբ վասն ձեր
հեղլով“ (Պ ուկ. իբ. 20):

— „Բաշխէ զմարմին (իւր) և զարիւն նոր ուխտ ա-
նուանեալ (ի Ը արակ. մեծի Հինդշաբ.):

** Եթր. թ. 12—15: Ժի. 24:

*** Վարկ. Ժի. 15: Պ ուկ. իբ. 12: — Այս տանս

Առվախական կին օրէնքը:
Հ. Խոչըլէս սահմանեց Յիսուս զայդ խոր-
հուրդի:

Պ. Յետ ուտելոյ զՊատեքը (այսինքն՝ ըգ-
ծՕպակիական գուտելը և ընթէլք), և յետ
կատարելոյ զԱտնլուայն, առաւ 'ի սեղա-
նոյ հաց, * օրհնեց, ** կտրեց*** և աշա-

տէրն՝ ըստ գրելոյ Երգնկացւոյն (Կ Վեկն. Վատ. յէջ
553, և Տաթեացւոյն (Կ հատ. Զմեռ. յէջ 497), եր
Յովսէփ Արեմաթացին. Խոկ այլք ասեն՝ թէ եր Յով-
հաննէսն՝ Վարկոս կոչեցեալ, որ Պաւղոսի ընկեր եղե
'ի քարոզութեան (Պառձ. ժը. 11: ժէ. 37):

* Այսինքն՝ բաղադրական հաց. վասն զի այն օրն՝ յո-
րում այս խորհուրդս սահմանեցաւ, Բաղադրակերաց
առաջին օրն եր (Վատ. իդ. 17: Վարկ ժդ. 12). և օ-
րէն եր Արէից՝ եօթն օր բաղարջ ուտել, և խմորոն
հաց չպահել տան մէջ մինչ ց21 նոյն ամսոյ, որ եր
Կիսան (ԼՀ. ժը. 18—20):

** „Եւ զի օրհնեաց (Յիսուս) զհացն, զայն ասէ
Աւետարանիչն, այլ թէ որով օրհնեաց, և կամ զինչ
խոսեաց յօրհնելն, զայն ոչ ասաց....: Եւ ըստ այնմ որ
օրհնեաց՝ սրբելով սրբեաց և արար զնա մարմին իւր
ճշմարտապէս“ (Բ. Շնոն. 'ի Վեկն. Վարկ. Կ. լը):

*** Ոմանք 'ի յետին մեկնչաց համարին՝ թէ Յի-
սուս 12 բաժին արար զհացը՝ ըստ թուոյ Առաքելոց,
և այլք թէ՝ 13, յորոց և զմինը, ասեն, ինքն ճաշակեց,
և զմնացեալքը բաշխեց առաքելոց: Խոկ Տաթեացին

կերտաց տուաւ՝ ասելով “Առէ+ իւրէ+,
այս է ճառմին էմ,,,: ‘Սոյնպէս ևս առաւ
բաժակ, (այսինքն՝ բաժակով գինի), օրհ-
նեց և տուաւ աշակերտաց՝ ասելով “Առ-
էէ+ ’ի դժանէ ամենէւնան, այդ է արկն
էմ,,,:*

Ն. Մատնիչ Յուղայն ևս հաղորդեցաւ ’ի
սուրբ Խորհրդոյն:

Պ. Այս, նա ևս իւր ընկերաց (Թագավոր Ա-
ռաքելց) հետ հաղորդեցաւ**, ըստ ո-
րում դեռ չէր բաժանուած ’ի նոցանէ:

Ն. Յիսուս ինքն ևս ճաշակեց զիւր մարմինը
և արիւնը:

այսպէս դրէ. “Ո՞րպէս եքեկ. — Ի չորս մասունս արա-
րեալ, որպէս այժմ պաշտէ եկեղեցի (’ի հատ. Զմեռ.
յէջ 543):

* Մատ. իշ. 26. 27:

** “Ահաև Յուղա էարէ, այլույագեցաւ... զի խա-
ւարեալ մաօք և անարժանութեամբ էառ զխորհուրդն
Քրիստոսի (Բ. Ճոն. ’ի Վեկն. Վարկ. գլ. լք):

— “Այնպիսիքն՝ (Թղթուրին և անարժանին) նման են
Յուղայի, որ ընդ Քրիստոսի բազմեալ՝ եկել ’ի սեղա-
նոյն, և հաղորդեցաւ ընդ Առաքելոց” (Տաթև. ’ի
հատ. Զմեռ. յէջ շիթ):

Պ. Այս, նախ ինքն ճաշակեց՝ և ապա Առաքելոց տուաւ*. վասն զի սովոր էր նա անձամբ առնել զոր ինչ այլոց կամեր աւանդել կամ ուսուցանել**:

Հ. Պատուիրեց Առաքելոց՝ որ նոքա ևս ըդ նոյն խորհուրդը կատարեն:

Պ. Այս, պատուիրեց, և իշխանութիւն ևս տուաւ նոցա՝ զնոյն Աստուածային հրաշալի խորհուրդը կատարելու. վասն զի

* “Եւ զի ոչ միայն կամօք՝ այլ և ուրախութեամբ կրեաց զմահն, եցոյց յինքեան զնոյն յուտելն. զի նախ ինքն էին, և ապա ետ աշակերտացն և ասէ. Առէք կերայք՚ի դմանէ,” (Բ. Շն. ՚ի Մեկն. Մարկ. դլ. լք):
— ամաձայն այսմ խօսին և Երգնկացին (՚ի Մեկն. Մատ. իդ. 29), և Տաթեացին (՚ի Հատ. Չմեռ. յէջ շնթ), և Եղիշէ (՚ի Բանն յաղագս յիշատակ. մեռել.), և Ասկեբերան (՚ի Մատթ. ճառ ձղ), ևս և Խորհրդատեարն. Ա. Եկեղեցւոյս մերոյ, ուր յաղօթս քահանային ասի “Եոյնպէս և զբաժակն առեալ՝ օրհնեաց, գոհացաւ, էաբբ, ետ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով. Առէքարբէք ՚ի սրմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտին ևն: Եւ մեկնիչն (Լամբրոնացին) գրէ. „Իսկ զի աբբ, յայտ արարեալ՝ թէ այսպէս ախորժելով ընդունիմ յաղագս ձեր զմահն,” և այլն. (՚ի Մեկն. պատարագի յէջ 375):

** Գործ. ա. 1:

յետ վՃարման խորհրդոյն՝ ասաց նոցա
“**Օ**քայս արարէք առ իմոյ յիշատա-
կի,,*:

Հ. Այդ բանի միտքն ի՞նչ է:

Պ. Այս է. Կատարեցէք և դուք ըստ այսմ
օրինակի զայս անարիւն պատարազս վա-
սրն յիշելոյ զիս և զիմ մարմնոյս արիւ-
նաւոր պատարազը, զոր յետոյ պիտի տե-
սանէք խաչի վերայ:

Բ. ԱՏՎԱՐԴԱՅ.

Հ. **Օ**ստնլուայն ի՞նչպէս արար Յիսուս:

Պ. Յառաջ քան զԽորհրդոյ ընթրիքը (ֆ'
երբ գեռ չէր աւանդած զ աղորդութեան
խորհուրդը), յարեաւ (վեչ իացաւ) 'ի
Օատկական ընթրիքէն, ղենջակ կապեց
մէջքին, ջուր լցոյց կոնքի (լուհանի) մէջ,

* Պռկ. իբ. 19: ա Կորն. ժամ. 24: 25:

և ծնկան վերայ նստած՝ սկսու մի մի զա-
շակերտաց ոտքերը լուանալ և ղենջա-
կովը սրբել*:

Դ. Խոչ էր Յիսուսի դիտումն յայդ գոր-
ծումի:

Պ. Խը նախ՝ խոնարհութեան օրինակ ցու-
ցանել իւր աշակերտացն և ամենայն հե-
տեղացն**. և երկրորդ՝ ուսուցանել,
թէ նոցա՝ որք կամին ճաշակել զայն Աս-
տուածային կերակուրը զոր ինքն պիտի
տայր (այսինքն՝ Առ-ը ամենասուրբ Տար-
մինը և առէնը), հարկաւոր է մաքրու-

* Պետրոս Առաքեալն ՚ի սկզբան չկամեցաւ թոյլ
տալ՝ որ Յիսուս զիւր ոտքերը լուանայ. բայց ապա՝
երբ որ լսեց ՚ի Յիսուսէ զայս խօսքս “Եթէ ոչ լուա-
ցից զքեզ, ոչ ունիս ընդիս մասն”, թոյլ տուաւ՝ ասե-
լով “Տէր՝ մի միայն զոտս իմ, այլ և զձեռս և զգլուխ”
(Յովհ. Ժղ. 6—9):

** “Դաստից իւրոց աշակերտաց՝
Օքր նախ բանիւ վարդապետեաց,
Ասյոր գործով ըզծայրագոյն
Եցոյց յինքեան զխոնարհութիւն”
Ը նորհ. (Ալեքք Նժէ Ուբ.):

Թիւն յորպիսի և իցէ աղտոյ մեղաց*:
Հ. Յետ զայդ առնելոյ՝ զի՞նչ ասաց Յիսուս
աշակերտացն:

Պ. Եթէ ես, ասաց, լուացի զոտս ձեր, տէրս
և վարդապետս, և դուք պարտիք զմի-
մեանց ոտս լուանալ, զի օրինակ մի ետու-
ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, և դուք
առնիջեք,, **:

ԳԼ. Զ.

ՅԵՐՈՒԹԵՒՆ ՎՐԵԱՄՈՍԻ

Հ. Երբ եղեւ Յիսուսի յարութիւնն ՚ի մե-
մեռելոց:

* “Գրլխոյս (այսինքն՝ ինչ ո՞՛ւ հլու-ին եօ յեր) չէ ինչ
լուացումն ջրոյ, զի լուացեալ է (սուրբ ե-
ամենալին):”

Ոտիցըդ (յեղ աշուկերացց) պէտք են մաքրու-
թեան,
Յօդիւ ՚ի գլուխը (յէս) սրբութեամբ,,
Ընորհ. (անդ):

** Յովհ. ժկ. 14. 15:

Պ. Յերրորդ օրն՝ յետ մահուան*, այսինքըն՝ 'ի 16 երրորդ օրն լուսնի**, 'ի շետեռորդ գիշերի Կարաթուն՝ որպիտի լուսանայր 'ի Միաշաբաթ։ Բայց թէ յորժամու*** ստուգիւ յայտնի չէ****։

Հ. Արով զօրութեամբ յարեաւ նա։

* ա Արն. ԺԵ. 4:

** “Գիշերն. (յորում յարեաւ Վրիստոս)՝ լուսանայր լի լուսովն, զի վեշտասանօրեայ էր լուսինն (Ախրեղ Երուսաղ. 'ի Առ. Բնձ. Դ. Ժ. Ժի)։

*** Ոմանք 'ի վարդապետաց համարեցան՝ թէ Վրիստոսի յարութիւնն եղած է յերեկոյի Կարաթուն, կամ 'ի սկիզբն Միաշաբաթու գիշերին (“Ե. Լ. ամբ. 'ի Մեկն. Սաղ. ճժը”). ոմանք թէ 'ի 6 ժամու՝ յետ արեգակնամին (այսինքն՝ 'ի կես գիշերի). և ոմանք թէ ընդ արշալոյսն կամ յառաւօտու (Տես առ Տաթե. 'ի հատ. Զմեռ. յէջ ճշը և ող)։

**** “Մարիամ կանխեաց չողաւ 'ի գերեզման անդ, և նա (Վրիստոս) յարուցեալ էր. և ոք զժամ յարութեան նորա ոչ գիտաց... զի ոչ վայել էր այնմիկ՝ որ անսահման էր՝ եթէ ժամ յարութեան գրեսցեն նմա” (Եփր. 'ի Համաբարբ. Գլ. ին)։

Համաձայն այսմ խօսին և մեր հին վարդապետք, Եղեշէ ('ի ճառն յար.), Յովհան իմաստասէր (յԱտենաբան. Հյը Ժ), Բարսեղ Շոն (‘ի Մեկն. Մարկ. Դ. Խ), և այլք։

Պ. ԽԵՐ Աստուածային ամենաբաւ և ինք-
նիշխան զօրութեամբ*, ըստ որում և
զմահը իշխանաբար էր ճաշակած** մարդ-
կային մահկանացու բնութեամբ***:

Հ. ԱՅԼ մեռեալք ևս յարեան յայնժամ:

Պ. ԱՅՈ վասն զի ոչ միայն ինքն Յիսուս
յարեաւ, այլև զայն ննջեցեալ արդարքը
ևս՝ որոց գերեզմանքն բացուածէին նորա
մահուան ժամուն****, իւր հետ յարոյց:

Հ. Օ Ի՞նչ արարին այն յարուցեալքն:

Պ. Մասնելով 'ի սուրբ քաղաքն (Թ' յԵ-

* "Ինքնիշխանաբար յարեաւ Աստուածապես" (Պ. Եար. 'ի Արահանգին):

— "Օ իշխանաբար զյարութիւն գուշակեաց մեզ
մարդարէն" ('ի Արակ.):

** Բատ նախասաց բանին "Ես դնեմ զանձն (այ-
սինքն՝ զմառուիացին բանական հոգի) իմ, զի միւսան-
գամ առից զնա: Ոչ ոք հանէ զնա յինէն. այլ ես
դնեմ զնա անձամբ իմով (այսինքն՝ ինժնին, իտաւ-).
զի իշխանութիւն ունիմ դնել զնա, և իշխանութիւն
ունիմ միւսանգամ առնուլ զնա" (Յովհ. Ճ. 17. 18):

*** "Մեռաւ իշխանաբար՝ մարդկային մահկանա-
ցու բնութեամբ" (Ը նորհ. 'ի թղթ. առ Ալեքս):

**** ՏԵ՛ս յԵջ 102:

բարեգոյն բազմաց * . և յետ
աւետատու լինելոյ վասն Յիսուսի Առ-
տուածապէս յարութեանն՝ աներելոյթ
եղեն ** :

Ա . Ո՞յք էին այն յարուցեալքն:

Պ . Առետարանիչն չէ զրած զնոցա անուան-
քը . բայց վարդապետաց կարծիք է, թէ
յայն յարուցելոցն՝ մի էր և Դաւիթ Առ-
տուածահայր մարդարէն *** . և ըստ ա-

* Մատ. իէ. 51. 53:

** Առցա վերայ երկու կարծիք կայ վարդապետաց և
մեկնչաց մէջ : Ոմանք ասեն՝ թէ սոքա յետ վկայելոյ
Յիսուսի յարութեանն՝ դարձեալ մեռան . այլք ևս
ասեն, թէ անմահ յարութիւն ընկալան, և քառասուն
օր երկրի վերայ մնալով՝ Քրիստոսի հետ յերկինս համ-
բարձան : (Տե՛ս առ. Երգն. 'ի մեկն. Մատ. յէջ 603: Եւ-
առ. Տաթե. 'ի հատ. Չմեռ. յէջ 625, և 'ի հատ. Ամառ.
յէջ ոժե):

*** Յ. Երգն. ('ի Մեկն. Մատ. յէջ 603):

— Ի թիւ նոյն յարուցեալ Արքոց դնեն ոմանք և
զ Օքքարիա՝ զՅովհ. Վկրտչի հայրը, ևս և զ Ամեռ-
նի Ծերունւոյ երկու որդիքը՝ Խարինոս և Լենթիոս
անուն, որք և ճանաչուեցան՝ ասեն՝ 'ի տեսողացն (Տե՛ս
առ. Եպիփ. 'ի ճառն յար. և 'ի գիրսն մակադրեալ
“Գործք Պիղաստսի”, որոյ հեղինակ կարծի լինել
“Աիկոդեմոս”):

սելոյ ոմանց՝ նաև Արքահամ*:

Ճ. Խոչպէս յայտնուեցաւ Յիսուսի յարութիւնն:

Պ. Յետ յառնելոյն Յիսուսի 'ի կնքեալ զերեղմանէն** , Հրեշտակ յերկնից իջանելով թաւալեցոյց զԱվագրիչ վէմը***

* Տես 'ի ՄԵԼՆ. Պօղ. տպ. 'ի Վ Ենեաիկ. Հատ. Պ. ԺԷջ 265:

** "Ի՞նդէր յետ յարութեանն Հրեշտակն եբարձ զվէմն, և ոչ նախ քան զյարութիւնն: "Եախ ոչ եբարձ, զի գիտասցեն՝ թէ վիմով կնքելով յարեաւ. այլ և զայն՝ թէ ոչ ունէր պէտո Հրեշտակի օգնականութեան... իսկ յետոյ (եբարձ) վասն կանանցն. քանզի նոքա իսկ տեսին զնա յայնժամ ('ի թաղելն) 'ի գերեղմանի. զի Հաւատասցեն՝ թէ յարեաւ. նմին իրի և շարժումն եղե, զի իմասցին՝ թէ 'ի Հրեշտակէն եղե թաւալումն „(Յ. Երզն. 'ի ՄԵԼՆ. Մատ. ԺԷջ 613):

— Բատ այսմ դրեն և երանելին Եղիշէ ('ի ճառն ԺԵՐԵԿՈՒՄՆ Տեառն առ աշակ.), Եփրեմ ('ի Համաբ. ԳԼ. իա), Ընորհալին ('ի բանն Հաւատ.), և այլ վարդապետք:

*** Աստվածէւ այս՝ այն վէմն է, ասեն, զոր Յակոբ 'Եահապետն իւր գլխի տակին դրած ունէր դաշտումը՝ երբ որ զԱվանդղի սքանչելի տեսիլը տեսաւ. և զոր ապա արձան կանգնեցնելով՝ օծեց իւղով (ՅՕՆՆ. իր. 11—19): Այսպէս դրեն սուրբն Եփրեմ Ասորի ('ի Համաբարբ. ԳԼ. իա), և մեր Յ. Երզնկացին ('ի ՄԵԼՆ. Մատ. ԺԷջ 606):

(ԳԵՐԵԶՄԱՆԻ ՇՐԱՆ ՔԱՐԵ), ՆՍՏԱԼ ՆՈՐԱ
ՎԵՐԱԿ*: ԵՌ ԵՐԲ ՈՐ ԵԿԻՆ ԱՆԴ ԽԱՂԱՔԵՐ
ԿԱՆԱՋՔ**, ԱՆԵՏԱՐԱՆԵց ՆՈԾՈ զՅՅԻՍՈւ-
ՍԻ յարութիւնը:

Ճ. ՈՐԱՊԻՍԻ ՔԱՆԻՒ ԱՆԵՏԱՐԱՆԵց:

Պ. “ԳՅԻՍԻՄ” ԱՍԱԳ՝ զի զՅՅԻՍՈւ ՊԼԱՏԵԼԵԱԼՆ
ԽՆԴՐԵՔ. չէ աստ, քանզի յարեաւ, որ-
պէս ասացն: ԵԿԱՋՔ տեսէք զՄԻՂԻՆ՝ ուր
կայր „:

Ճ. ՈՐԱՊԻՍԻ ԿԵՐԱՊԱՐԱՆԱԼ ԵՐԵԵցաւ ՀՐԵշ-

* Կարծիք է վարդապետաց՝ թէ այս առետառու
հրեշտակս՝ էր ԳՅԱՖԵՔԷԼ, որ զՅՅԻՍՈւսի մեռանելոյն
ժամանակը ևս՝ յառաջազոյն (այսինքն՝ 490 ամօք յա-
ռաջ) յայտնած էր Գյանիելի մարդարէին (Գյան. թ.
24—27): Իստ այսմ կարծեաց՝ ասէ Շ ՆՈՐՀԱԼԻՆ (՚ի
Տաղն յար.): “Այսօր գոչէր Գյաբրիել իւղաբեր կա-
նանցն... Յարեաւ խաչելեալն Յիսուս զի՞ լայք ըդ-
կենդանին „:

** Խ-ՂԱՔԵՐ+, կամ որ նոյն է՝ ԽՆԿԱՔԵՐ+ կոչին այն
բարեպաշտ կանայք.քն, որք անուշահոտ իւղեր և խնկեր
պատրաստելով դնացին ՚ի գերեզմանն Յիսուսի՝ զնո-
րա մարմինը օծելոյ համար. որոց յանուանէ յայտնիքն
են՝ Վարիամ Վաղդաղենացի, Վարիամ Յակով-
բայ (կամ Աղեովպայ), Առղովմէ և Յովհաննա: (Տես
Վատ. իր. 1: Վարկ. ժղ. 1: Պուկ. իդ. 10):

տակն՝ Խւղաբեր կանանց:

Պ. Եթիտասարդ մարդոյ կերպարանաւ, բայց
նորա տեսիլն ահաւոր էր իբրև զփայլա-
կըն, և հանդերձն ևս սպիտակ էր իբրև
զձիւն*:

Ն. Գերեզմանապահ զինուորքն ի՞նչ եղեն:
Պ. Կախ այնպէս զարհուրեցան յահեղա-
կերպ հրեշտակի երեմանէն, մինչ զի մե-
ռելանման գետնի վերայ անկան. և ապա

* Բատ հիմնաւոր կարծեաց իմաստուն մեկնշաց՝ Խւ-
ղաբեր կանայքն ոչ թէ միանգամ միայն զնացին 'ի
գերեզմանն Յիսուսի, այլ՝ քանի մի անգամ յայլ և
այլ ժամու, և հրեշտակաց երեխլն ևս՝ եղեւ այլ և այլ:
Եթ այս իսկ է պատճառն՝ որ Աւետարանիչք յայլ և
այլ ժամանակս դնեն զԽւղաբերից գնայն 'ի գերեզման:
Մատթէոս դնէ “ՀՅԵՐԵՒՐԱՅ ՀԱՅԻ ԱՅՆ,” (ի՛լ. 1). Մար-
կոս “Ի՞նդ առաստան միաշաբանուն ընդ արևադաշտուն,”
(ժկ. 2). Պուկաս “Ի միաշաբանուն վաղ + ջ ընդ ա-
ռաստանուն,” (իդ. 1). Յովհաննէս “Ի միաշաբանուն ա-
ռաստանուն ընդ արևադաշտուն,” (ի. 1): “Կոյնպէս և զհրեշ-
տակաց երեմունքը այլ և այլ կերպիւ պատմեն: Մատ-
թէոսի գրուածումը յիշե, “Մի հրեշտակ՝ աղիուակ և յիւ-
նատիւալ հանդերձն.” Մարկոսի “Խրիստոսուրդ մի շիւ-
ցեալ պարունական աղիուակ,”. Պուկասու “Աք+ ԵՐԻ+” է
հանդերձաւ լուսաւորուն: Յովհաննու “Խրիւ հրեշտակ+”
է աղիուակ (այսինքն՝ աղիուակաղիւակ):

ոմանք 'ի նոցանէ փոքր մի ուշաբերուելով՝ գնացին շուտով 'ի քաղաք, և պատմեցին քահանայապետից ինչ որ պատահած էր:

Հ. Քահանայապետքն զի՞նչ արարին՝ երբ որ զՅիսուսի յարութեան ըւրը առին:

Պ. Ճողովրդեան ծերերի հետ խորհուրդ առնելով կաշառ (լատ. արծան) տուին այն պահապան զօրականաց, և պատուիրեցին ասել՝ թէ Յիսուսի աշակերտքն զիշերով գալով, գողացան զմարմինը երբ որ ինքեանք քնած էին:

Հ. Յանձն առին պահապանքն զայդ խարդախութիւնդ առնել:

Պ. Թահպէտ և դժուարին էր նոցա յանձն առնուլ երկիւղ կրելով՝ ի կողմանէ Պատաւորին (Պիղատոսի), բայց որովհետեւ խոստացած էին Հրէայքն հաճեցուցանել զՊատաւորը՝ եթէ յականջս նորահասանէ լուրն, սկսան ոմանք 'ի նոցանէ զնոյն սուտ համբաւը տարածել *:

* Ուստի ասէ Աւետարանիչն „Եւ ել համբաւս այս

Հ. Արոց երևեցաւ Յիսուս՝ իւր յարութեան առաջին օրում։

Պ. Բատ պատմելոյ Աւետարանչաց՝ երեեցաւ*.

Կախ՝ Մարիամու Մագդաղենացւոյ. **

Ապա՝ այլոց Խւղաբերից ***.

Ապա՝ Աիմոնի (այսինքն՝ Առաքելոյն Պետրոսի) ****.

Ապա՝ Աղէովպեանց *****.

՚Ի Նրէից մինչեւ ցայսօր „ (Մատ. իր. 15):

* Միաձայն և Հաւանական կարծիք է գրեթէ ամենայն ողջամիտ մեկնչաց և վարդապետաց, թէ Յիսուս յետ յարութեանն նախ և յառաջ երևեցած է իւր մօրն՝ սրբոյ Կուսին Մարիամու՝ երբ որ նա թախծեալ սրտիւ առանձնացած կայր յիւր սենեկում (Տե՛ս առ Տաթե. ՚Ի Հատ. Դմեռ. յէջ ո՞իր): Ուստի յԱւետարանչի բանեն՝ որ (ըստ այլ թարգմանութեանց) ասի ՚Յարուցեալ Յիսուս վաղ ՚Ի միաշաբաթուն՝ երևեցաւ նախ Մարիամու Մագդաղենացւոյ „ (Մարկ. ժղ. 9), զայս միայն պարտ է իմանալ, թէ Յիսուս երևեցաւ Մագդաղենացւոյն՝ յառաջ քան զերևիլն այլոց Խւղաբերից, և ոչ թէ յառաջ քան զերևիլն՝ իւր մօրն։

** Մարկ. ժղ. 9: Յովհ. ի. 14—18:

*** Մատ. իր. 9: 10:

**** Պուկ. իդ. 34: ա Արք. ժե. 5:

***** Պուկ. իդ. 13—31:

Ապա՝ համախումբ ժողովոյն Առաքելոց*:

Ճ. Ի՞նչպէս եղև Յիսուսի երեխին Մարիամու Մագդաղենացւոյ:

Պ. Եթբ որ Մարիամ Մագդաղենացին գերեզմանի մօտ կանգնած լայր՝ երեւեցաւնմա Յիսուսանձանօթ կերպարանաւ**, և ասաց անձանօթ ձայնիւ. „Այս դու, զի՞ լայս, զո՞ խնդրես“: Եւ Մագդաղենացին կարծելով՝ թէ պարտիզպանն է, պատասխան առւաւ. “Տէր, եթէ դու բարձեր զնա***, ասա ինձ ուր եղեր զնա, զի՞ ես առից զնա,,:

Ճ. Յետ այնորիկ կարաց Մագդաղենացին

* Գուկ. իդ. 36—40: Յովհ. ի. 19—23: Մարկ. Ժկ. 14:

** Մեկնշաց հաւանական կարծիք է թէ Յիսուս պարտիզպանի կերպարանաւ երեւեցաւ Մագդաղենացւոյն: Բայտ այսմ կարծեաց ասէ և մեր Հնորհալին “Մարիամու Մագդաղենի Յուցաւնըման պարտիզպանի,,

(Դ Բառն հաստոք.):

*** Այսինքն զՏէրն իմ:

Ճանաչել զՅիսուս:

Պ. Այս վասն զի Յիսուս կամելով ճանաչել տալ զինքը, փոխեց յանկարծ դձայնը, և յանուանէ կոչեց զնա “Մարիամ”:
Յայնժամ և Մագդաղենացին ճանաչելով զՅիսուս ’ի ձայնէն՝ ասաց երրայեցերէն „Բարունի“, որ թարգմանի Առաջապես*:

Հ. Օքնէ արար այնուհետև Մագդաղենացին:

Պ. Ենկաւ տարածուեցաւ գետնի վերայ՝ որ զՅիսուսի ոտքերը համբուրէ. բայց Յիսուս թոյլ չտուաւ.** և յետ պատուի.

* Եսի, թէ Մագդաղենացին յերկիւղէ զինուորացըն՝ Նովմայեցի ձայնիւ լայր. բայց որովհետեւ Յիսուս երրայեցերէն խօսեցաւ, նա ևս փոխեց զիւր լեզուն: (Յ. Վ. անական վ. ’ի Նարց.):

** Յիսուսիթոյլ չտալուն Մագդաղենացւոյ՝ մօտենալ ինքեան և համբուրել զիւր ոտքերը, մեկնիչք զանազան պատճառու տան. որոց աւելի հաւանականն ըստ ոմանց այս է: Մագդաղենացին կարծեց, ասեն, թէ Յիսուս նոյն ժամայն պիտի վերանայ յերկինս և միւսանգամ չպիտի երեւի... վասն որոյ զիւր վերջին փափագը լցուցանելոյ համար՝ անկաւ գետնի վերայ՝ որ

ըելոյ նմա երթալ պատմել աշակերտաց՝
ինքն խսկոյն աներեւոյթ եղեւ:

Հ. Խնչպէս եղեւ երեխին Յիսուսի այլոց
իւղաբերից:

Պ. Երբ որ ոմանք յիւղաբերից՝ յետ լսելոյ
՚ի հրեշտակէն զերեզմանի մօտ զյարու-
թեան աւետիսը՝ ահիւ և խնդութեամք ՚ի
քաղաք դառնային՝ աշակերտաց պատ-
մելոյ համար, երեւեցաւ նոցա Յիսուս ՚ի
ճանապարհին* և ասաց “Ողջէք”, **:

Հ. Օքնչարարին նոքա երբ որ զՅիսուսի
ողջոյնը լսեցին:

Պ. Անկան վաղվաղակի նորա ոտքերին, և

անդադար զնորա ոտքերը համբորէ, ինչպէս արած էր
՚ի տան Աիմոնի փարիսեցւոյն (Պ. ուկ. Է. 45): Խսկ Յի-
սուս հասկացուցանելոյ համար՝ թէ ինքն այնուհետեւ
ևս բաւական ժամանակ պիտի մնայ երկրի վերայ և շատ
անգամ ևս պիտի երեխ, ասաց նմա „Մի՛ մերձենար
յիս, զի չե ևս եղեալ եմ առ այլ իմ. այլ երթ դու
(այժմ) առ եղբարսն իմ, և ասա ցնոսա,, և այլն (Յովհ.
ի. 17):

* Այս երեւումնս եղեւ, ասեն, յառաջին ժամու ա-
ւորն: (Տես առ Տաթև. ՚ի հատ. Ամառ. յէջ 336):

** Այսինքն՝ Ողջ եղեք, իսմ Ուրախ եղեք:

խոնարհութեամբ և փափաղանօք երկր-
պագեցին նմա:

Ճ. Ա. Յ. բան ևս ասաց նոցա Յիսուս:

Պ. Ա. Յ. “Ո՞ի երկնչեք, ասաց, երթայք ա-
սացէք Եղբայրուն իմոց*, զի երթիցեն ՚ի
Գալիլեա**, և անդ տեսցեն զիս,, :

—

* Այսինքն՝ Առածելոց վասն զի ՚Քրիստոս՝ ըստ
մարդկութեանն ընութիւնակից գոլով հաւատացելոց,
ամօթ չհամարէր՝ զնոսա՝ մանաւանդ զընորեալ աշա-
կերտքը անուանել ինքեան Եղբայր ըստ մարդկային
ընութեան և ըստ շնորհաց որդեգրութեան, ըստ որում
և նոքա շնորհօք որդեգրութեալ էին իւր համագոյակցի
երկնաւոր Նօր Աստուծոյ: Օայս հաստատապէս ցու-
ցանէ և երանելի Առաքեալն Պաւլոս՝ այսու բանիւս
“Որ սրբէն (՚Քրիստոս) և որ սրբին (հաստատացեալ
նոր) ՚ի միոջէ էին ամեներին. վասն որոյ ո՛չ ամօթ հա-
մարի Եղբայր անուանել զնոսա,, (Եթր. ք. 11): Նա-
մածայն այսմ զրէ և մերն Ա արդան վ. “Ոչ ամօթ
համարի (՚Քրիստոս) Եղբայր կոչել զԱռաքեալու և
զեկեղեցի,, (՚ի ԱԵկն. Ապղմ. գլ. իշ):

** Այս Գալիլեայ՝ չէ այն Գալիլեայ գաւառն՝
որ էր քաղաքն “Ապարէթ” երեքօրեայ ճանապարհաւ-
հեռի յԱրուսաղէմէ, այլ՝ էր առանձին տեղ մի ապա-
հով՝ ՚ի Զիթենեաց լերին, մօտ յայն տեղն՝ ուստի
համբարձաւ Յիսուս, և չէր իսկ հեռի ՚ի խաչելութեան

Ճ. Ո՞ր տեղ երևեցաւ Յիսուս Առաքելոյն
Պետրոսի:

Պ. Յաւետարանչի զրածէն՝ յայտնի չէ,
բայց 'ի Մեկնչաց կարծըւում է՝ թէ եւ-
րեւեցած է 'ի ճանապարհին*, երբ որ
Պետրոս յետո դառնայր 'ի գերեզմանէն՝
ուր գնացած էր երկրորդ անգամ միայ-
նակ*:

տեղէն: (Տես առ Խղնատ. 'ի Մեկն. Պակ. դւ. իդ:
առ Եշրզն. 'ի Մեկն. Վատ. յէջ 621: առ Բ. Ճ'ոն.
'ի Մեկն. Վարկ. գլ. լիդ):

* Մեկնիչք հայելով 'ի հանգամանս Առեւարա-
նական պատմութեան, գուշակեն՝ թէ Պետրոսի 'ի գե-
րեզման գնալն՝ երկու անգամ է եղած: «Եախ գնաց,
ասեն, նա՝ Հովհաննու և Վագդաղենացւոյ հետ 'ի
միասին՝ յետ լսելոյ 'ի Վագդաղենացւոյն՝ թէ Յի-
սուսի մարմինն գերեզմանի մէջ չկայ, (վասն զի Վագ-
դաղենացին ևս յառաջին անգամին՝ միայն զբացուած
գերեզմանն էր տեսած, և ոչ այլ ինչ): Եւ երկոքին
Առաքեալքն՝ բաց 'ի վարշամակէն և 'ի կտաւոցն որք
գերեզմանի միջումն էին՝ այլ ինչ չտեսանելով յայն-
ժամ՝ դարձան վերստին յիւրեանց օթեւանը: Իսկ
Վագդաղենացին անդ մնալով՝ արժանացաւ Յիսուսի
տեսութեանն (ըստ Հովհ. ի. 1—18): Եշրկրորդանգամ
գնաց, ասեն, Պետրոս 'ի գերեզմանն՝ միայնակ, երբ որ
լսեց՝ թէ Վագդաղենացին տեսած է զՀիսուս: Բայց
յայս անգամիս ևս նա բաց 'ի կտաւոցն՝ այլ ինչ չտե-

Հ. ՈՅՔ ԵՒՆ ԱՂԵՌՎԱԿԻԱՆՔ:

Պ. ԵՒՆ ԵՐԿՈւՔՆ յաշակերտաց Յիսուսի,
որոց մինն էր ԱղեՌՎԱԿԱՄ՝ Եղբայրն Յով-
սէփայ Աստուածահօր*, և միւսն կար-
ծըւում է թէ Ուկասն էր, այն՝ որ յետոյ
Աւետարանիչ եղել**։ Բայց Երկուքն ևս
միով անուամբ ԱՂԵՌՎԼԵԿԱՆ+ կոչին։

Հ. ՈՐԱՎԻՍԻ կերպարանաւ երեւեցաւ նոցա
Յիսուս։

Պ. Անծանօթ կերպարանաւ՝ որպէս ճանա-
պարհորդ ոմն օտարական։

Հ. ՈՅՔ տեղ։

Պ. Ի ճանապարհին Եմմաւուսայ***, ուր

սանելով՝ յետս դարձաւ լի զարմացմամք (ըստ Պուկ-
իկ. 12): Եւ ահա յայս վերադարձի ժամանակիս, ա-
սեն, երեւեցաւ նմա Յիսուս (Տես առ Բ. Ճոն. ՚ի
Ուեկն. Ուարկ. Գլ. իւ):

* Եւսեբի (ԺԵԿԵՂ. Պատմ. Գիրք Պ. Պ. Ռ.
Յայսմ. Ապրիլի 9): Խղճաւ. (՚ի Ուեկն. Պ ուկ.
Գլ. իւ):

*** Տես՚ի Վ արտ Արբոց. Հատ. Է. յէջ 266: Կան և
ասողք, թէստ այն Յակոբոսն է՝ զոր յիշէ Ա. Առա-
քեալն Պաւլոս՚ի Աստուած. Ա. թղթին (ԺԵ. 9): Աս-
կայն իմաստուն Ուեկնչաց անհիմն թուի այս կարծիքս։

**** Եւմմաւուս՝ գիւղ էր՝ 160 (կամ բատ այլ թարգ-

գնային նոքա՝ խօսելով տրտմաբար մի-
մեանց հետ այն անցքերի վերայ՝ որք նոր
պատահած էին Երուսաղեմի մեջ :

Հ. Խօսեցա՞ն նոքա և Յիսուսի հետ երբ որ
տեսին զնա:

Պ. Այս. երբ որ կամեցաւ Յիսուս իմանալ՝
թէ ինչ էր նոցա վէճն, և թէ յի՞նչ
պատճառէ այնպէս տրտմած են, նախ
Աղէովպաս պատասխան տուաւ. “Դու-
միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտա-
ցեր զի՞նչ գործեցաւ յաւուրսս յայսո-
սիկ,, և ապա երկուքն ես սկսան Յի-
սուսի Կազովրեցւոյ՝ և նորա խաչելու-
թեան՝ մահուան և յարութեան վերայ
խօսել զարմացմամբ և տարակուսանօք.
և վերջը՝ զայս ես ասացին. “Մեք ակն
ունէաք՝ թէ նա է որ փրկելոցն է զլո-
րայէլ”:

Հ. Օք՞նչ արար յայնժամ Յիսուս՝ զնոցա

մանութեանց՝ 60) ասպարիզաւ հեռի յԵրուսաղէմէ
(Պատկ. իդ. 13), այսինքն՝ երեք և կես ժամու ծանա-
պարհաւ:

տարակուսանքը փարատելոյ համար:

Պ. Ակսաւ մեկնել նոցա ինչ որ գլուխ էին
մարգարէքն Քրիստոսի վերայ, և նոցա
բանիւքն ցուցանել թէ պարտ էր Քր-
րիստոսի այնպիսի չարչարանօք մտանել
'ի փառս իւր:

Հ. Երբ որ յԵմմաւուս մտան սոքա՞Յիսուս
ո՞ր տեղ իջևանեցաւ:

Պ. Որովհետեւ կէս օրն անցած էր, նոյն իսկ
ուղեկիցքն աղաչեցին Յիսուսի որ իւ-
րեանց մօտ իջևանի. “Առ մեզ ագիր,
ասացին, զի ընդ երեկու է, և տարաժա-
մեալ է օրս.”: Եւ նա յօժարեցաւ այն-
պէս առնել. և յայնժամ ևս յայտնեց
զիւր անձնը:

Հ. Ես սպէս եղեւ այդ:

Պ. Յետ իջևանելոյ՝ երբ որ նստան ՚ի միա-
սին կերակուր ուտելու*, առաւ Յիսուս
զհացը՝ օրհնեց՝ կտրեց՝ ** և բաժանեց:

* Այս եղեւ՝ ըստ գրելոյ երտնիմոսի (՚ի թղթ. իէ.)
Աղեղապասի տան մէջ:

** Աւանդե ՚ի գիրս վարդապետաց, թէ սովոր էր

Յայնժամ և սեղանակցաց աշքերը բացուելով՝ ճանաչեցին զնա: Ծայց ինքն իսկոյն աներեցիթ եղե:

♦. Օխնչ արարին նոքայիտ այնորիկ:
Պ. Խօսղին վաղվաղակի զսեղանը և վերստին
՚ի ճանապարհ ելին. և ՚ի նոյն երեկոյին
յԵրուսաղեմ հասանելով դուն զԱռաքեալքը և զայլ աշակերտաց շատերը ժողովուած Աիոնի վերնատան մէջ *. պատմեցին նոցա ինչ որ պատահած էր ինքեանց, և լսեցին ՚ի նոցանէ զՅիսուսի երեխին Աիմոնի (յ՛Պետրոսի Առաքելոյ):

Յիսոս խաշանման կտրել զհացը երկու ձեռօքն: Վշյետ յարութեանն, ասեն, այն սովորութեամբն ճանաչեցին զնա Աղեովպեանք. (Տե՛ս առ Տաթե. ՚ի հատ. Ամառ. յէջ յիսթ): Օայս գուշակեն յԱւետարանի բանէն «Վշտ ծանօթս նոցա՚ի բեկանել հացին», (Պատկ. իդ. 35):

* Այս այն մեծ վերնատունն էր, որ Յիսոս ՚ի մատնութեան գիշերին կերտծ էր նոցա հետ զՊատեքը կամ զՕատիկը, (զՕատիկան հառնը), լուացած էր զնոցա ոտքերը, և սահմանած էր զաղորդութեան խորհուրդը (Վարկ. ժղ. 15: Պատկ. իդ. 12), և որ յետ համբարձմանն Յիսոսի բնակեցան առ ժամանակ մի Առաքելալքն (Պարծ. առ. 13):

Ճ. Երբ և ուր երևեցաւ Յիսուս Համա-
խումբ ժողովոյն Առաքելոց:

Պ. 'Ե նոյն իսկ երեկոյին, և նոյն իսկ վերնա-
տան մէջ՝ ուր ժողովուած նստած կային
Առաքեալքն՝ փակ պաշելով զգոները 'ի
Նրեից երկիւղէն:

Ճ. Խնչպէս եղեւ այդ երեւումնդ:

Պ. Երբ դեռ Աղեովպաս և նորա ընկերն
պատմում էին այլոց ինչ որ պատահած
եր ինքեանց 'ի ճանապարհին և Եմմա-
ուսայ մէջ, երևեցաւ յանկարծ Յիսուս
նոցա միջում, և ողջոյն տուաւ ամենե-
ցուն՝ ասելով “Խաղաղութիւն ընդ ձեզ
Ես եմ, մի երկնչեք,,:

Ճ. Ա ասն էր ասաց “Մէ՛ Երինչէ+,,:

Պ. Ա ասն այն՝ զե երկիւղիւ պաշարուած
էին, կարծելով թէ ոգի ինչ է այն՝ զոր
տեսանեն, և ոչ ճշմարիտ մարմին:

Ճ. Օ ի՞նչ արար Յիսուս՝ զնոցա երկիւղը
փարատելոյ Համար:

Պ. Յոյց տուաւ նոցա զիւր ձեռքերը՝ ոտքե-
րը և կողը, ասելով “Օ ի՞ իոռովեալ

Էք... շօշափեցէք զիս և տեսէք. զի ողի՝
մարմին և ուկերս ոչ ունի, որպէս զիսս
տեսանէք զի ունիմ”:

Ճ. Այլ ի՞նչ արար Յիսուս՝ առաւել ևս
հաւաստի առնելոյ համար՝ թէ իսկապէս
ի՞նքն է երեւեալն:

Պ. Ինքել տուաւ խորոված ձուկն և խորիսիս
մեղու*. յորոց և փոքր ինչ ճաշակելով
նոցա առաջեւ՝ զմնացորդը նոցա տուաւ:

Ճ. “Եոցա մէջ յերկա՞ր մնաց Յիսուս:

Պ. Ո՛չ. այլ յետ յիշեցուցանելոյ նոցա և
մեկնելոյ զմարդարէից բանքը՝ որք զրու-
ած էին իւր համար, և յետ փշելոյ ’ի
նոսա՝ և ասելոյ “Առէք ողի սուրբ”,
իսկոյն աներեւութացաւ:

Ճ. ՅԱռաքելոց միջէն քանի՞ անձինք ար-
ժանացան յայնժամ այդ երեւմանդ:

Պ. Միայն տասն անձինք վասն զի Յուղա

* Վասն այս խորսիխն գրէ Պ. Տաթեացին. “Խո-
րսի մէջուն՝ զոր ասէ Պ. ուկաս (իդ. 42), ոմանք մէջ
ասեն... և ոմանք հաց ասեն իւղով և մէջերբ շանգեալ”
(’ի հատ. Ամառ. յէջ 685):

Աստիճն որոշուած էր Արկոտասանից
դասէն և խեղդուած։ Աստաթիայն դեռ
չէր ընտրուած։ Ե Թռովմասես չկայր ժու-
ղովելոց մէջ *:

Ճ. Յետ այդ երեմանդ, այլ անզամ ևս ե-
րեեցա՞ւ Յիսուս Կոպքելոց։

Պ. Յիսուսի երեմունքն առ Կոպքեալս մին-
չե ցհամբարձումն նորա յերկինս՝ շտ
անզամ կրկնուեցան քառասուն աւուրց
միջոցում**. բայց Կւետարանիչքն գրած
են միայն զայն երեմունքը՝ որք աւելի նը-
շանաւորք կամ հանդիսաւորք եղին։

Ճ. Ո՞յք են այնպիսի երեմունքն։

Պ. Են***

Ե. Այն՝ որ եղեւ երկրորդ անզամ։ Նոյն

* Խռէ ուր էր յայնժամ Թռովմաս՝ յայտնի չէ։

** Գործ. ա. Յ.:

*** Բաց յայսցանե՝ և այլ երկու երեմունք յիշին՝ ի
սուրբ Գիրս, մի՝ առ Յակոբոս Կոպքեալն, և մի՝ առ
Պաւղոս Կոպքեալն. որոց վերջինն եղած է իբր Զ ամօք
յետոյ քան գալքիստոսի համբարձումն (Տե՛ս առ Առն.
Ժե. 7. 8: Գործ. թ 4-7):

իսկ Ախովնի վերնատան մէջ, ուր՝ ըստ
առաջնոյն՝ մտաւ դրօքն փակելովք*
Պ. Այն՝ որ եղեւ Տիբերական ծովին
մօտ**:

Պ. Այն՝ որ եղեւ Գալիլեա *** լերան վե-
րայ ****:

Ն. Երբ եղեւ երկրորդ երեսումն Յիսուսի
Ախովնի վերնատան մէջ:

Պ. Եղեւ յութերորդ օրն յետ յարուե*****:

Ն. Ամենայն Առաքեալք անդ էին յայնժամ:

Պ. Այն, ըստ որում Խռովմաս ևս այս ան-
գամ իւր ընկերակցաց (այսինքն՝ տասն
Առաքելոց) հետ ՚ի միասին էր:

* Յովհ. ի. 26—29:

** Յովհ. ի. 1—14.

*** Խռէ որն է այս Գալիլեայս՝ տես յէջ 129 ՚ի ծա-
նօթ:

**** Մատ. ի. 16—20:

***** Այս օրս կոչեն առ մեզ “Եւր Աք-քահե”, ըստ ո-
րում առաջին Աիւրակեէ զկնի Օատկական Աիւրակեին:
Կոչեն ևս Արքառողութիւն (այսինքն՝ Երիւրդ Օառութիւն):
Վասն զի՞յայս օրումն էր ին անգամ երեւեցաւ Յիսուս՝
ժողովոյն Առաքելոց, որպէս երեւեցած էր յարութեան
առաջին օրում, յորմէ սկսուեցաւ Օատիկն քրիստո-
նէից: (Տես առ Տաթև. ՚ի հատ. Ղմեռ. յէջ ոխթ):

Ճ. Յիսուս վասն էր կամեցաւ կրկնել զիւր
երեւումնը նոյն տան մէջ :

Պ. Ա ասն յանդիմանելոյ զիօնվմայի թերա-
հաւատութիւնը և վասն հաստատելոյ
զնա 'ի հաւատս. վասն զի յետ առաջին
երեւմանն Յիսուսի, երբ որ պատմեցին
նմա իւր ընկերքն՝ թէ տեսաք զՏէր, 'նա
ոչ միայն չհաւատաց նոցա, այլ և զայս
իւս ասաց. “Եթէ ոչ տեսից 'ի ձեռս նո-
րա զնշան բեկուացն, և արկից զմատու-
նըս իմ 'ի տեղիս բեկուացն, և մխեցից
զձեռս իմ 'ի կողս նորա, ոչ հաւատամ,,:

Ճ. Խ՞նչպէս յանդիմանեց Յիսուս զիօնվ-
մայի թերահաւատութիւնը:

Պ. Յետ ողջոյն տալոյ ամենեցունց՝ որք հա-
ւաքուած կային անդ, դէպ 'ի թօնվմաս
ուղղելով զիւր հայեցուածը՝ ասաց նմա,
“Քէր, զմատունս քո և արկ այսր. տես
զձեռս իմ. բէր զձեռն քո և մխեա 'ի
կողս իմ. և մի լինիր անհաւատ, այլ՝
հաւատացեալ”:

Ճ. Երբ որ զայդ լսեց թօնվմաս՝ զի՞նչ արար:

Պ. Շօշափելով իւր ձեռօքն զՅիսուսի կողի
խոցուածը և զձեռաց վէրքերը,* և միան-
գամայն յայտնելով զիւր կատարեալ հա-
ւատոյ խոստովանութիւնը՝ ոչ միայն առ
նորա ստոյդ յարութիւնն տեսանելի մար-
մնով, այլ և առ նորա աներեւոյթ Աս-
տուածութիւնն, զոչեց հիացմամբ՝ պատ-
կառանօք և ցնծութեամբ “Տէր իմ և
Աստուած իմ,”**:

Հ. Յետ այնորիկ այլ բան ևս ասաց Յիսուս՝
թօվմայի:

Պ. Այս, ասաց զայս բանս. “Այդ զի տեսերդ
զիս՝ և հաւատացեր. երանի որոց ոչ
իցէ տեսեալ և հաւատացեն”:

Հ. Տիբերական ծովի մօտ ի՞նչպէս յայտնեց
Յիսուս զիւր անձնը աշակերտաց:

Պ. Այսպէս. Պետրոս, թօվմաս, ‘Աթա-

* Ե. Լամբ. (Կ արակ. Կոր Աիւր.): Ե. Հ նորհ.
(ԺԱՂԲԵՐԴ. Դիրք ԳՆ. Կ Բան հաւաա.):

** Այսինքն. “Հաւատացի և հաւատամ առանց
երկբայութեան, որ դու նոյն իսկ Տէրն ես՝ որ յանձն
առեր կամաւզիսաշիմահը, և յարեար Աստուածապէս”:

նայէլ, Յակոբոս և Յովհաննէս՝ Օք-
րեղեայ որդիքն, և այլ երկուք յաշակեր-
տացն Յիսուսի, գնացած էին Տիբերեայ
ծովումը ձուկն որուալու։ Եւ թէպէտ բո-
լոր զիշերը աշխատեցան, բայց ոչինչ որս
չկարացին առնել։ Երբ որ առաւօտն
բացուեցաւ, Յիսուս՝ որ կանգնած կայր
ծովեղումը անձանօթ կերպարանաւ՝ սո-
ցա մօտենալով ասաց “Անկունք միթէ
ունիք ինչ ուտելոյ,”։ Եւ սոքա պատաս-
խան տուին “Ոչ,,: ”

Ճ. Խնչով ուրեմն յայսնուեցաւ՝ թէ նա Յի-
սուսն է։

Պ. Ե. յն սքանչելիօքն (հշաշիւն)՝ որ եղե
յայնժամ անդ վասն զի ելր որ ըստ բա-
նի նորա՝ զուռկանը նաւի յաջ կողմը ձր-
գեցին աշակերտքն, իսկոյն ուռկանն լր-
ցուեցաւ ձկանց բազմութեամբ, որոց հա-
րիւր յիսուն և երեքն՝ մեծ մեծ ձկներ
էին*։

* Ամանք ՚ի մեկնչաց կարծելով՝ թէ գլխաւոր և
երեւելի տեսակքն ուտելի ձկանց՝ 153 են, ասեն թէ

Հ. Ո՞րն յաշակերտաց նախ ճանաչեց դՅՌի-
սուս:

Պ. Յովհաննէս. որ և նոյնժամայն՝ երբ պեռ
նաւակի մէջն էին՝ ծանոյց Պետրոսին՝
ասելով “Տէր է այն,,:

Հ. Օքնչ արար Պետրոս՝ երբ որ զայն լսեց:
Պ. Փաթաթուեցաւ կտաւով (որովհետեւ

ըստ ամենազօր հրամանի Փրկչին մերոյ՝ յիւրաքանչիւր
տեսակէ մի մի մեծագոյն ձուկն հաւաքուելով մտին
Առաքելոց ուռկանին մէջ (տե՛ս՝ ՚ի Վեկն. Վատթէի
որ ՚ի Վիսիթարայ, յէջ 950): Առլք ևս զանազան
խորհրդական մեկնութիւնս յարմարեն որսացեալ ձր-
կանց թուոյն վերայ: Խակ մեր մտահարուստ Եղիշէն
զայս գրէ: “Առկանեն (աշակերտքն) զուռկանն յաջա-
կողմն նաւին, և ունին հարիւր և յիսուն և երիս ձկու-
նըս....: Առդ՝ բաժանի թիւ ձկանցս յերիս յիսնեակս
և միական երրեակ, և յարին անդրէն առ իրեարս ՚ի
միութիւն....: Եւ զի՞նչ մեծ քան զայս՝ որ բանիւ Առ-
տուծոյ գործ կատարիցի, և ինքն ՚ի գործ անդր նկա-
րեալ երեի: Քանզի անբաժանելի է սուրբ Երրորդու-
թիւնն... որպէս և ՚ի թիւ ձկանցս՝ այլ որսակից եղե
Արդւոյ, և առգի սուրբ սատար օգնականութեան Ա-
ռաքելոցն: Որսան յայտնի ձուկն ՚ի ծովու, և ՚ի ձեռն
ձկանցն երեի թէ զամենայն աշխարհ որսացան, ոչ ՚ի
ջրոյ ՚ի ցամաք, այլ յերաշտացեալ ցամաքէ ՚ի ջուր կեն-
դանութեան,,, և այլն (՚ի ճառն յերեւումն Տեառն առ
Տիբեր: ծովուն):

մերկ էր), ձգեց զինքը ծովի մեջ, և լող
տալով՝ ի ցամաք ելաւ և գնաց Յիսուսի
մօտ:

Ն. ‘Եռա ընկերքն զի՞նչ առնեին յայնժամ։
Պ. ‘Եռքա ևս աշխատեին գնալ հասանել
նաւակով՝ քարշելով անդադար զձկնա-
լից ուռիանը, որովհետեւ հեռաւորու-
թիւնն ի ցամաքէ՝ չէր աւելի քան զեր-
կու հարիւր կանգուն։

Ն. Երբ որ նոքա’ի ցամաք ելին՝ զի՞նչ տեսին։
Պ. Տեսին այն տեղ վառուած կրակ, նորա
վերայ մի ձուկն, և ’ի մօտն՝ հաց։*

* Օայս ձուկնս և հացս՝ ոմանք ’ի վարդապետաց
համարին նոր ստեղծած Քրիստոսի հրամանաւ։ Բառ
այսմ կարծեաց և մեր Ա. Հ նորհալին այսպէս զրէ
“Որ առ ծովուն Տիբերային
“Երգործեցեր հրաշս կըրկին,
Լըրմամբ ձրկանցն ’ի յուռկանին
Եւ նորաստեղծ ձուկն ’ի կրակին,”
(ՍՈՒՅԵՐԻ. ԴԵՐ+ՊԱ.)

“Կարծեալ յայտնի այլանրման
Բ. ո ծովակին Տիբերական.
Յուցեալ գործովքըն հրաշական
Օինքն ’ի բնութիւն արարշական։
Զրկանց ծովուն հրամայելով.

Ճ. Յետ այնորիկ զե՞ս արարին:

Պ. Էստ պատուիրելոյն Յիսուսի՝ կերակուր
պատաստելով յայն ձկներից՝ զոր բըռ-
նած էին, նստան ամենքն նորա հետ ճաշ
ուտելու. բայց մինն ևս չէր համարձակ-
ւում հարցանել՝ թէ դու ով ես. վասն
զե զիտէին՝ թէ **Տէրն** է:

Ճ. Խօսեցաւ Յիսուս նոցա հետ:

Պ. Միայն Պետրոսի հետ խօսեցաւ յետ ճա-
շելոյն: Եհարց նմա երեք անգամ ՚ի
բժշկութիւն երիցս ուրացութեն “Ախմոն
Յովիանու, սիրեն զիս առաւել քան ըզ-
դոսա,,*. և երեք անգամ ևս պատասխան
լսելով ’ի նմանէ “Այս **Տէր**, և դու զիտես
զե սիրեմ զքեզ,, , սփոփից զնա՝ զօրա-

Յուղանս նոցա ըմբռոնելով,
Եւ նորաստեղծ հաց առնելով,
Չուկն ’ի կրակին խորովելով”

(՚ի Բառն հասարակ.):

* “Յիսուս ընկալաւ (զՊետրոս), և երիցս հարց-
մամբն և խոստովանութեամբն զերիցս ուրացութիւնն
բժշկեաց” (Պ. Աստուածաբ. ’ի ճառն Ակրտ.):

“Ար երրակի սիրով բանին
Հարցանելով քո յետ ճաշին,

ցոյց և քաջալերեց՝ ի զործ հոգեւոր Նո-
վուութեան՝ հետազայ խօսքերովս “Արա-
ծեա զզառինս իմ. Արածեա զոչիարս
իմ. Արածեա զոչիարս իմ,,:

Ճ. Յետ այնորիկ այլ բան չասաց Յիսուս
Պետրոսին:

Պ. Ասաց նաև զայս խորհրդաւոր բանս.
“Մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին զօ-
տի ածէիր, և երթայիր յու և կամէիր. և
յորժամ ծերասցիս՝ ձեռս ՚ի վեր կալցես,
և այլք ածցեն քեզ զօտի, և տարցին
ուր ոչն կամիցիս: Ե՛կ զկնի իմ,,:

Ճ. Օքնչ նշանակեց Յիսուս այդ բանիւդ:

Պ. “Աշանակեց՝ թէ Պետրոս խաչի մահու-
ամբ պիտի մեռանի*:

Օռքացութիւնը զերեսին
Բարժակեցեր բզՊետրոսին”
(Ե. Ընորհ. յՈւնէտէ. ժէրտ. Պ.):

Տես և ՚ի Հ արակ. մեծի Ուրբաթուն:

* “ՕՊետրոս երիցս հարցանելով,

Օռքացութիւնը քաւելով.

Եւ զկնի իւր հրաւիրելով.

Հարշարանոք խաչակցելով”

(Ե. Ընորհ. ՚ի Բան հասանաց.):

▲ · Ορոյ ևս մահը գուշակեց յայնժամ
Յիսուս:

¶ · ΟՅօվհաննու մահը վասն զի երբ որ
Պետրոս նորա համար հարցումն արար
Յիսուսի “Տէր, իսկսաղի” (այսինքն՝ սա
ի՞նչ պիտի լինի), , Յիսուս պատասխան
տուաւ “Կամիմ” զի կացցէ դա մինչեւ ես
դամ”, *:

▲ · Այդ բանի իսկական միտքն ի՞նչ է:

¶ · Այս է. Կամիմ” որ դա՝ ոչ արեամբ նա-
հատակուելով, այլ խաղաղական մա-
հուամբ վճարէ զիւր կեանքը**. Կամիմ” որ

* Յայս բանէս՝ կարծիք եղեւ այլ աշակերտաց մէջ,
թէ Յովհաննէս անմահ պիտի մնայ: Բայց դայս կար-
ծեաց անստոյգ լինելը՝ դարձեալ նա ինքն Յովհան-
նէս ցուցանէ՝ զրելով (իա. 23) այսպէս “Եւ եւ բանս
այս յեղբարս, և համարեցան թէ աշակերտն այն ոչ
մեռանիցի: Եւ ոչ ասաց նմա Յիսուս, եթէ ոչ մեռա-
նիցի. այլ թէ կամիմ ես՝ թէ կացցէ դա մինչեւ ես դամ”:

** Ինչպէս որ եղեւ. վասն զի ըստ աւանդելոյ ամե-
նայն Ա կայաբանից՝ յԱռաքելոց միջէն՝ Յովհաննէս
միայն իւր խաղաղական մահուամբն ննջեց ՚ի խորին
ծերութեան, յԱշխեսոս քաղաքի, յամի Տեառն իբր
100: Բայց որովհետեւ յետոյ նորա մարմինն չգտա-
նուեցաւ զերեզմանումը, յայն սակա կարծեցին նորա

մնայ (ասլրի) դա յերկրի վերայ մինչև որ
ես ինքնս կոչեմ զգորա հոգին 'ի յաւի-
տենական կեանս:

Հ. Երբ եղեւ երկումն Յիսուսի Գալիլեայ
լերին վերայ:

Պ. Երբ որ՝ ըստ պատուիրանին Յիսուսի*
ժողովուած էին այն տեղ մետասան Ա-
ռաքեալքն, և նոցա հետ նաև եօթանա-
սուն և երկու աշակերտքն***, և այլ ևս

•

աշակերտքն՝ թէ վերափոխուած է յերկինս՝ նման Աս-
տուածամօր Առաքին (Տես 'ի Յայսմ. 'ի Անպա. 26 և
'ի Պեկ. 28): Բազմաց հաւանելի թուի այս կարծիքս.
բայց ստոյգն անգիտելի է:

* Յիսուս՝ որովհետեւ 'ի մատնութեան գիշերին՝
խոստացած էր Առաքելոց թէ «Հետ յառնելոյն իմոյ
յառաջեցից քան զձեզ 'ի Գալիլեա» (Վատ. իդ. ·
32), յետ յարութեանն ևս՝ երբ որ պատահեցաւ իւ-
զաքեր կանանց՝ զայս պատուերս տուաւ. «Երթայք
ասացէք եղբարցն իմոց (աշակերտաց)՝ զե երթիցեն 'ի
Գալիլեա, և անդ տեսցեն զիս», (իր. 10): Աւետաւոր
հրեշտակն ևս ասած էր Խւզաքերիցն. «Երթայք ա-
ստցէք ցաշակերտս նորա և ցՊետրոս՝ եթէ ահա յա-
ռաջագոյն երթայք քան զձեզ 'ի Գալիլեա, անդ տե-
սանիցէք զնա, որպէս ասացն ձեզ», (Վարկ. ժղ. 7):

** Երփը. 'ի Անպա. առ Առոն. գլ. · ժե:

Հաւատացեալք, որք և կանայք, աւելի
քան զհինդ հարիւր*:

Ա. Օքնչ արարին նոքա երք որ Յիսուսի
տեսութեան հանդիպեցան:

Պ. Խսկոյն երկրպագեցին նմա, թէև ոմանք
յԱռաքելոց ՚ի սկզբան անդ չկարողանա-
լով ճանաչել՝ նա՞ է Յիսուսն, թէ չէ,
յԵրիստրացան, (այսինքն՝ Երիժութեան)**:

Ա. Յիսուս զի՞նչ արար:

Պ. Յետ սեղանակից լինելոյ նոցա***, պա-
տուեր տուաւ՝ որ զի՞նի իւր համբարձ-

* ա Կորն. ԺԵ. 6:

** Մատ. իր 17: Ուեկնչաց կարծիք է թէ երկ-
մառողքն էին ութ անձինք, այսինքն՝ այն Կռաքեալ-
քըն՝ որք Յիսուսի Այլակերպութեանն ՚ի թաքօր
լերին՝ ականատես չէին եղած: Բայ այսմ կարծեաց՝
գրէ և մեր Շ նորհալին

“Բայց աշակերտք նորա գնացին
՚Ի ժամադրեալ նոցա տեղին,
Այլակերպեալ զՏէրըն տեսին,
Որպէս երեմն ՚ի սուբբ լերին:
Ութն ՚ի նոսա յերկուանային,
Բայց ՚ի յերիցն՝ որ նախ տեսին,,”:

(՚Ի Բառն հասուազ.):

*** Գաործ. ա: 4:

մանն՝ յԵրուսաղեմ գնան, և սպասեն
անդ մինչեւ ցգալուստն ո՞գւոյն սրբոյ,
զոր ինքն պիտի առաքէր վասն լուսաւո-
րելոյ զնոցա միտքը և վասն մսիթարելոյ
և զօրացուցանելոյ զնոսա հոգեպէս :
Խոստացաւ ևս՝ նոցա հետ լինել միշտ
մինչեւ 'ի կատարած աշխարհի:

♦. Առաքեալք յի՞նչ պաշտօն կարգուեցան
յայնժամ :

¶. 'Ի պաշտօն ընդհանուր Առաքելութեան.
վասն զի պատուիրեց նոցա Յիսուս՝ եր-
թալքարողել զԱւետարանը* յամենայն
տեղիս՝ սկսեալ յԵրուսաղեմէ մինչեւ 'ի
ծագս երկրի, և զհաւատացեալքը մլրդ-
տել յանուն ո՞ր և Որդոյ և ո՞գւոյն
սրբոյ՝ ուսուցանելով նոցա պահել ինչ
որ ինքն պատուիրած էր :

—

* Մատ. իշ. 18—20: Առարկ. ժկ. 15: Գաործ. ա. 8:

ԳԼ; Ե

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՒՄ

Ճ. Յիսուս Երբ համբարձաւ յերկինս:

Պ. Դքառասներորդ օրն յետ յարութեանն,
որ էր Ճինզարաթի*:

Ճ. Յո՞ր տեղէ համբարձաւ:

Պ. Դ Զիթենեաց լեռնէն, որ մօտ էր Ե-
րուսաղէմի՝ Աեթանիայի և Տիբերական
ծովուն***:

Ճ. Ո՞յք ականատես եղեն Յիսուսի համ-
բարձմանն:

Պ. Ականատես եղեն ոչ միայն մետասան Ե-

* Ոմանք համարին, թէ Յիսուսի համբարձումն ե-
ղած է՝ ի կէս օրին, այսինքն՝ ի վեցերորդ ժամու ցերեկի,
որպէս եղած էր և խաչելութիւնն: Աակայն Պ. Տա-
թեացին, յետ ասելոյ թէ “Դ վեց ժամու աւուրն ե-
րեւեցաւ (Քրիստոս) մետասանիցն և եկեր ընդ նոսա
յաւուրն յայն՝ յորում կամեցաւ համբառնալ յերկի-
նըս”, յաւելու “Յինն ժամու աւուրն համբարձաւ Քր-
իստոս յերկինս և նստաւ ընդ աջմէ Ճօր” (Ի հա-
ւմառ. յէջ յէլ. 337):

** Պործ. մ. 12:

ռաքեալքն, այլ և միւս եօթանասուն և
երկու աշակերտքն Յիսուսի, ևս և այն
բազմութիւնն հաւատացելոց՝ որք Առա-
քելոց հետ ժողովուած էին յառանձին
լեառն Գալիլեա, և արժանացած էին
Յիսուսի վերջին հրապարական երե-
մանն*:

Հ. Որպէս եղեւ Յիսուսի համբարձումն:
Պ. Յիսուս ինքնին առաջնորդելով նոցա
մինչեւ 'ի Ռեթանիա, և ապա ելանելով
'ի գլուխ Զիթենեաց լերին, երբ որ օրհ-
նէր զնոսա՝ սկսաւ ակներեւ ամենեցուն
յերկինս վերանալ նոյն իսկ մարմնովն՝
որով ծնաւ, չարչարեցաւ, մեռաւ և յա-
րեաւ:

Հ. Յիսուսի վերանալն յերկինս՝ յերկար ե-

* Եղիբքն մակագրեալ “Գործ Պիղատոսի”, պատ-
մի, թէ Փենեհեղ քահանայն, Աղա դպիրն, և Ան-
գեոս Կ ևտացին տեսանելով՝ որ Յիսուս յետ խօսելոյ
աշակերտացը հետ Զիթենեաց լերան վերայ, համբար-
ձաւ յերկինս, գնացին պատմեցին Նրեից: Եւ Նրե-
այքն կաշառք տալով նոցա որ այլոց չպատմեն, հե-
ռացուցին զնոսա յերուսաղեմէ:

զեւ տեսանելի:

Պ. Ո՞ւ. վասն զի յետ սակաւ մի բարձրանալոյն Յիսուսի յօդու իսկոյն ամպն ծածկեց զնա 'ի տեսոյ աչաց այնչափ ականատես վկայիցն, որք անթարթ աչօք հայեին նորա յերկինս երթալուն:

Ճ. Այլ ինչ տեսիլք ևս եղե՛ յայնժամ առնոստ:

Պ. Այս. յանկարծ արտ Երկու (այսինքն՝ Երկու հրեշտակիւ * 'ի մարդկային կերպարանը) սպիտակ հանդերձիւք՝ երեւեցան նոցա, և ասացին “Արք Գալիլեացիք, զի կայք հայեցեալք ընդ երկինս: Այս Յիսուս՝ որ վերացաւն 'ի ձէնջ յերկինս, սոյնպէս և եկեսցէ զորօրինակ տեսիք զնա երթեալ յերկինս”**: Եւ յետ զայս ասելոյ՝ աներեւոյթ եղեն:

Ճ. Յետ այնորիկ անդ մնացին Առաքեալքն և նոցա հետ գտեալ աշակերտաց և հաւատացելոց բազմութիւնն:

* Ե. Հ. Նորհ. 'ի Յորդոր. առ Վեհիթ. բժիշկ:

** Գործ. առ 10. 11:

Պ. ՈՇ. այլ՝ նոյն օրին դարձան ամենքն յԵ-
րուսաղէմ. ուր և Առաքեալքն՝ իբրև
միախորհ և միակրօն եղբարք՝* սկսան
այնուհետեւ՝ ի միասին բնակիլ Ախոնի
վերնատան մէջ, սպասելով ջերմագին
փափաղանօք և աղօթիւք՝ Հողւոյն սրբ-
բոյ գալստեան**, ինչպէս պատուիրած էր
նոցա Յիսուս:


Վեճք.

* Ի Շ արակ. Հ ամբարձ:

** Հ ողւոյն սրբոյ գալուստն հողմածայն հնչմամբ
առ դասն Առաքելոց՝ եղե նոյն վերնատան մէջ, յետ
տասն աւուրց վերանալոյն Քիսուսի, այսինքն՝ ի Գեն-
տէկոսակի տօնին Հրեից, որ էր Ախւրակէ, յիսներորդ
օր՝ թուեալ յառաջին օրէ յարութեան Քրիստոսի
(կամ Օատելին քրիստոնէից) և յերկրորդ օրէ Քա-
ղարջակերաց տօնին Հրեից (Գաործ. ք. 1—4):

<i>յեզ.</i>	<i>'է ասուլ.</i>	<i>Հրեականին.</i>	<i>Ա-ղղեսացին.</i>
17·	11·	<i>յայնժամ</i>	<i>յայնժամ</i>
34·	11·	<i>մարդ</i>	<i>մարդ</i>
58·	21·	<i>երթայ ինչ որ</i>	<i>երթայ գնե ինչ որ</i>
68·	14·	<i>գալով</i>	<i>գնալով</i>
101·	26·	<i>փոխելով</i>	<i>փոփոխելով</i>

812 50 յայն



912 50 / 2011